



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

A 992,663

GRAD
EREN
987
BUHR

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ՆՈՐ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՆՑ

—

ԵՐԿՐԱՐԳ ՏԱՐԻ


Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏԱՆՆ. Պ. ՊԱԼԵՆՑ

Զամբախյուր հոգուշու, թիւ 20

ԿԻՆ 5 ՂՐԸ.

1908



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

Nov 20 1908 286

Ն Ո Ր

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ւ Ն .

Մ Ա Ն Կ Ա Ն Ց

182 p.

արձանագրություն

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ
Զամբաֆնդար եօզուշու, թիւ 20

1908

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Handwritten numbers and symbols in the top left corner, including '50745', 'EPLA', and '912'.



Հարգ նշարտ յիւիւսնէ 386 Նոսրուլ Վի 10 Կանոն Նալի 323 Նարիչու
Րիւստամիւսիւ Սիւի ԵՒ Նոսրուլ


ՅԱՌԱՋԱԲԱՆ
1908
982
11-18 99

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Տաճկահայ տղայոց համար մեր պատրաստած ՆՈՐ ՎԱՐ-
ԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ անուն ընթերցարանին երեք հատոր-
ներն ալ մեծ ընդունելութիւն գտան Պատ. ուսուցչաց Կող-
մանէ, մասնաւորապէս իրենց դիւրուսոյց մեթոտին և պա-
րունակած հրահանգիչ և բարոյական դասերուն համար: Առա-
ջին Հատորին Ա. տպագրութիւնը արդէն երկու տարի առաջ
սպառած ըլլալով, այն ատեն հրատարակեցինք Բ. Տպագրու-
թիւնը. այս անգամ ալ ներկայ Երկրորդ տարւոյն Բ. տպագ-
րութիւնը կը յանձնենք մամուլին, բոլորովին խնամեալ և ճո-
խացեալ: Այս առթիւ կարեւոր սեպեցինք աւելցնել գրքիս ե-
տեւը Հայ. — Տաճկ. բառգրքոյկ մը, ուր աշակերտները պիտի
գտնեն ամէնէն գործածական բառերուն տճկ. նշանակու-
թիւնները:

Սիրելի է մեզ յուսալ թէ մեր ուրիշ գործերուն նման, այն
դասագիրքն ալ պիտի արժանանայ ընդհանուրին գնահատման,
ինչ որ մեզի քաջալեր մըն է շարունակելու նմանօրինակ օգ-
տաշատ գրքերու հրատարակութիւնը:





Ն Ո Ր

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Ն Կ Ա Ն Ց



Ե Ր Կ Ր Ո Ր Պ Ց Ա Ր Թ

1. Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

Աստուած ստեղծած է երկիրը, երկիրը և անոնց մէջ գտնուած ամէն բաները: Ան կը տեսնէ մեր բոլոր գործերը, և դիտէ ի՞նչ որ կ'անցնի մեր մտքէն: Տղա՛ք, պէտք է որ սիրէք Աստուած և հնազանդէք Անոր պատուէրներուն, որովհետեւ այսպէս միայն կրնաք երջանիկ ըլլալ: Սիրեցէ՛ք նաև ձեր կրօնը որ [ձեզի կը սորվեցնէ թէ ի՞նչպէս պէտք է պաշտել Աստուած:

ԲԱՌՆՐ.— Ստեղծել. Էսրայմաֆ. — Գէտք է որ սիրէք, սեփօրիսիսից. — Գէտք է որ հնազանդէք, Եփրայիմիսիսից. — Գատուէր, որհնայից. — Որովհետեւ, չի-նի. — Երջանիկ, յո-դու. — Կրօնք, ձեզհեպ. — Սորվեցնել, էօյրէդ-ձէ. — Գաշտել, Եփրայմաֆ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Գեօք է սիրել, պեօք է հնազանդիլ, այս ձեւերուն վրայ զանազան վարժութիւններ ընել աւել աշակերտաց հայերէնէ տաճկերէն, և փոխադարձաբար:

1. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Որոշեցիք անձ, կենդանի եւ առարկայ ցուցնող բառերը.

Իպրոցական, ժամացոյց, գիրք, շուն, գայլ, տեսարակ, քոյր, ձի, մատիտ, գրիչ, հորեղբայր, հայր, մայր, առև, հաւ, սեղան, ստել, կին, մեղան, եգ, սոխակ, հովիւ, վարդապետ, աթոռ, ուղտ, թուղթ, դրացի, փայտ, ֆէս, փիղ, կօշիկ, գաւաթ, գրագիր, նաւապետ, ոսկի, արծաթ:

2. Բ Ա Ր Ի Դ Պ Ի Ո Ց Ա Կ Ա Ն Ը

Միհրանն առտուն կանուխ կ'ելլէ: Կը բարեւէ հայրը, մայրը և սրբտիկ քոյրը: Կը լուայ դէմքը, վիզը և մարմինը: Սանտրով կը շտկէ մազերը: Կը մաքրէ ձեռքերն ու եղունգները: Միհրանն կը նախաճայէ և իր դասը կը պատրաստէ: Դպրոց կ'երթայ և ժամանակէն առաջ հոն կը հասնի: Դասին մէջ ուսուցչին բոլոր ըսածներուն մտիկ կ'ընէ: Աղտոտ չեն իր գիրքը և տետրակը: Զբօսանքի ատեն իր ընկերներուն հետ կը խաղայ: Երբ դասը լիննայ, Միհրանն առանց փողոցը կենալու տուն կ'երթայ: Անիկա բարի դպրոցական մըն է: Իր հայրը և մայրը երջանիկ են ասանկ բարի զաւակ մը ունենալուն համար:

ԲԱՌՆՐ. — Կանուխ, էր+էն. — Բարեւել, սելամ վերմէ+. — Դէմք, եի-լ. — Մաքրել, դէմիլլմէ+. — Եղունգ, արբնագ. — Նախաճայել, գահվայիլը Կրմէ+. — Ուսուցիչ, հօճա. — Զբօսանք, էյլննէ:

ԾԱՆՕԹ. — Առանց փողոցը կենալու, «գագգա րո-ր-ճագսրըն». առանց ուշեկու, առանց խմեկու և այլն ձեւերուն վրայ վարժութիւններ ընել տալ աշակերտաց:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք թէ ինչպիսի դպրոցական մըն է Միհրան և ի՞նչ կ'ընէ:

Ձ. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Որոշեցէ՛ք յատուկ եւ հասարակ անունները.

Կարապետ, քար, գաւաթ, Մարիամ, գրիչ, ձի, էլ, աղջիկ, Յակոբ, Աստուած, Յիսուս, եկեղեցի, երկինք, աշխարհ, տուն, սենեակ, Վարդուհի, փողոց, պատուհան, Յովհաննէս, Իսկուհի, Ազապի, Միհրան, ճանճ, թռչուն, հայելի, իսաիկ, Մաղաքիա:

3. Մ Ա Ք ՈՒ Ր Տ Ղ Ա Ն

Մաքուր տղու մը չափ հաճելի բան չի կայ : Անոր երեսը թարմ է և ճերմակ , և մարմինն ալ առողջ : Ամէն մարդ կ'ախորժի անկէ իր մաքրութեանը համար :

Աղտոտ տղան , ընդհակառակը , ամէնուն զգուանք կ'ազդէ : Ո՞վ պիտի ուզէ համբուրել անոր անմաքուր այտերը : Ամէն մարդ երես կը դարձնէ անկէ : Անիկա շատ անգամ քիթը իսկ չի սրբեր : Մէկը չուզեր դպչիլ անոր մատներուն որ միշտ աղտոտ են :

Սակայն մաքուր ըլլալը դժուար բան չէ : Քիչ մը ջուր բաւական է ասոր համար : Եւ ի՞նչ բան կայ ջուրէն շատ աշխարհի վրայ : Մաքուր մարդը միշտ առողջ կ'ըլլայ :

ԲԱՌԵՐ. — Մաքրութիւն , դէմիդիտ . — Հաճելի , խօլ . — Թարմ , դաղէ . — Առողջ , սաղ . — Ախորժիլ , հալ էդմէտ . — Ընդհակառակն , ատիտէ (պիւտիտ) . — Զգուանք աղդել , էջրէն վէրմէտ . — Համբուրել , էօփմէտ . — Անմաքուր , տիրի . — Այտ , էանագ աս Սակայն , ֆագալ . — Բաւական է , էլվերի :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչպէս կ'ըլլայ մաքուր տղայ մը . — Անիկա ի՞նչպէս կ'երեւայ ամէնուն . — Աղտոտ տղան ինչպէս է . — Անիկա ի՞նչ բան կ'ազդէ մարդոց . — Մաքուր ըլլալու համար ի՞նչ ընելու է . — Մաքուր եղող մարդը ի՞նչպէս կ'ըլլայ :

3. Հ Ր Ա Հ Ս Ն Գ

Հեթեւեալ բառեր յոնակի րեկ'ի , միավանկներուն ծայրեր , իսկ բազմավանկներուն ծայր ևեր մասնիկները աւելցնելով .

Տուն , աշխարհ , ծառ , ագարակ , դպրոց , քաղաք , տանձ , քանակ , քարետախտակ , պատառաքաղ , բաճկոն , տափատ , անձեռոց , պատ , իւղ , քար , հող , ձի , կին , մարդազեւոյն , խոհանոց , աքաղաղ , եղ , կատու , ոչխար , ասեղ , հաւ , սեղան , նուշ , բալ , առիւծ , ձեռք , մուկ , տանիք , փողոց , եկեղեցի , խաղող :

4. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Գրիգոր աշխատասէր տղայ մըն է : — Մայրս ինձի համեղ կերակուրներ տուաւ : — Եղբայրներս և քոյրերս շատ կը սիրեմ : — Ոչխարը խելօք կենդանի մըն է : — Տանիքին վրայ աղաւնիներ կան : — Շուկայէն ուտելիք խմելիք, հագնելիք կը գնեմք : — Սեղանին ծածկոցը կտաւէ կը շինեն : — Պարտիզպանը ծառեր, ծաղիկներ, պտուղներ և բանջարեղէններ կը հասցնէ պարտէզին մէջ : — Տուներուն մէջ կան սենեակներ, խոհանոց, մառան, բակ, պահարան, սանդուղ :

ԲԱՌԵՐ. — Աշխատասէր, չալըլիան. — Համեղ, րոտիլ. — Խելօք, ուսու. — Տանիք, րոտ. — Աղաւնի, կիւղիքի. — Շուկայ, չարլը. — Գնել, արդըն արժագ. — Ծածկոց, էօրդի. — Կտաւ, պէղ. — Մառան, հահլէն :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Որո՞ւ կ'ըսեն աշխատասէր. — Քանի մը համեղ կերակուրի անուն տուէ՞ք. — Ոչխարը ի՞նչ տեսակ կենդանի մըն է. — Աղաւնին ի՞նչ է. — Հինգ ուտելիքի, հինգ խմելիքի և հինգ պլ հագնելիքի անուն տուէ՞ք. — Ծածկոցով ի՞նչ կ'ընեն. — Պարտիզպան ի՞նչ ըսել է. ի՞նչ կ'ընէ ան. — Տունը ուրիշ ի՞նչ մասեր ունի :

4. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ բառերը եզակի ըրէ՛ք.

Աչքեր, կենդանիներ, պալատներ, թուռներ, տուններ, այգիներ, ոչխարներ, հայրեր, մայրեր, գլուխներ, շուններ, գաւազաններ, ձիեր, էշեր, կատուներ, գամեր, մուճակներ, խաղալիքներ, հաւեր, կառքեր, սեղաններ, բանալիներ, մանչեր, աղջիկներ, պարտէզներ, աքաղաղներ, ծիծեռնակներ, գիրքեր, թուղթեր, գրիչներ, արտոյաններ, ծովեր, հողեր, տանիքներ, հաւնոցներ, գաւաթներ :

5. ՍՏԱԽՕՍ ՏՂԱՆ

Գրիգոր աղուոր պզտիկ տղայ մըն է : Բայց մեծ թերութիւն մը ունի : Միշտ սուտ կը խօսի : Անոր հայրը և մայրը շատ դժգոհ են այս բանէն : Շատ անգամներ կը խրատեն, կը պատժեն իր այդ յոռի բնաւորութեանը համար, բայց ան նորէն ճշմարիտը չ'ըսեր : Այս պատճառաւ հիմա մէկը չի հաւատար անոր խօսքին : Երբ բերանը բանայ բան մը պատմելու համար, իր ընկերները մտիկ ընել չեն ուզեր, և «սուտ ես, սուտ ես» կը պոռան երեսին :

Ի՛նչ գէշ բան է սա ստախօսութիւնը :

ԲԱՌԵՐ. — Թերութիւն, գոսոր. — Միշտ, պայմա. — Դժգոհ, խօշնոս օլճայան. — Խրատել, նասիհատ կորձի. — Պատժել, քեզս վերձի. — Յոռի, քէնա. — Բնաւորութիւն, լապիտ. — Ճշմարիտ, փօղոս. — Պատմել, հիւտայե կորձի. — Ընկեր, արգափալ. — Ստախօսութիւն, Խալանճըլճ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գրիգոր ի՛նչպէս տղայ է. — Անիկա ի՛նչ թերութիւն ունի. — Անոր հայրը և մայրը ի՛նչ կ'ընեն. — Իր ընկերները ի՛նչ կ'ընեն երբոր ան խօսիլ ուզէ. — Աղէ՛կ բան է սուտ խօսիլը. — Ուրեմն դուք ալ սուտ պիտի խօսի՞ք :

5. ՀՐԱՀԱՆՊ

Հետեւեալ բառերուն եզակիները գաս, յոճակիները գաս սիւնակի մէջ գրեցէ՛ք :

Երկիր, հարուստ, վարդենիներ, թռչուն, ջուր, գաւազաններ, ընկոյզներ, ծաղիկներ, պտուղ, նարինջ, անիւներ, կառքեր, ամպ, ցորեն, խաղող, հրացաններ, պատկեր, քորգ, անտառներ, կարկանդակ, ծով, գաղաններ, աշտանակներ, մուշտակ, քաղաք, գիւղեր, լեռներ, ձորեր, ծակ, ջերմոց, շղթայ, լուսին, քիթ, բերաններ :

6. ՔԱՂԱՔԱՎԱՐ ՏՂԱՆ

Փոքրիկ Կարապետ իրիկուն մը երբ դպրոցէն տուն կը վերադառնար ուրախ և զուարթ, ճամբուն վրայ հանդիպեցաւ ծեր մարդու մը որ ձի հեծած կ'երթար: Կարապետ անմիջապէս յարգանքով գլխարկը հանեց և բարեւեց ծեր մարդը: Ճամբորդը այն ատեն դառնալով ըսաւ անոր. «Տղաս, ես քեզի չեմ ճանչնար, բայց քու քաղաքավարութիւնդ ցոյց կու տայ որ դուն բարի դպրոցական մըն ես, և երբոր մեծնաս պարկեշտ և ազնիւ մարդ մը պիտի ըլլաս:»

ԱՍՈՒՅՐ. — Բաղաքավար, դէրպէյէլէ. — Վերադառնալ, կէրէ փօնօկէ. — Ուրախ, զուարթ, «էփնէլէ. — Հանդիպել, բասդ կէլէ. — Հեծնել, պէնօկէ. — Անմիջապէս, հէմէն. — Յարգանք, բայէդ. — Ճամբորդ, էօլէր. — Երբոր մեծնաս, պէօյի-պէյիփէ. — Պարկեշտ, ըրդը, նաֆա-սլա-:

ԾԱՆՕԹ. — Երբոր մեծնաս, երբոր գաս, պէօյի-պէյիփէ, կէլպէյիփէ. այս ձեւերուն վրայ զանազան վարժութիւններ ընել տալ տղայոց:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Փոքրիկ Կարապետ ի՞նչ տեսակ տղայ մըն է. — Ի՞նչ պատահեցաւ օր մը անոր. — Ծերունին ի՞նչ ըսաւ իրեն:

7. ՉՈՒՎՈՒՄ ՄԻՎԱՆԿ ԲԱՌԵՐՈՒ

	ԵԶԱԿԻ		ՑՈՒՆԱԿԻ	
Ո.	Վարդ	Կիւլ	Վարդեր	Կիւլեր
Ս.	Վարդի	Կիւլիւն	Վարդերու	Կիւլերին
Տ.	Վարդի	Կիւլի	Վարդերու	Կիւլերի
Հ.	Վարդ	Կիւլիւ	Վարդեր	Կիւլերի
Բ.	Վարդէ	Կիւլսէն	Վարդերէ	Կիւլերսէն
Գ.	Վարդով	Կիւլիլի	Վարդերով	Կիւլերիլի

ՎԱՐՑՈՒԹՅՈՒՆ. — Վարդ բառին պէս հոլովեցէ՛ք հետեւեալ բառերը.

Մաս, խոտ, քար, փայտ, մատ, հոլ:

8. Ի Ն Ք Ն Ա Շ Ա Ի Ա Ն Տ Ղ Ա Ն

Գրիգոր անմիտ տղայ մըն է : Ինքզինքը շատ խեղացի և շատ գիտուն կը կարծէ : Հպարտութեամբ ամէն մարդու կը պատմէ դպրոցին մէջ իր առած գովեստները : Բոլոր ծանօթները վրան կը խնդան : Ինքզինքէն զատ ուրիշ մէկուն չի հաւնիր . և այնչափ կարեւորութիւն կու տայ իր անձին որ մարդ չի կրնար խնդալը զսպել : Ամէն մէկ խօսքին մէջ ինքնահաւանութիւնը ցոյց կու տայ : Այս պատճառաւ բնաւ բարեկամ չունի :

ԲԱՌԵՐ. — Ինքնահաւան, խեղճիկ պէտէնի : — Անմիտ, փրկուող . — Գիտուն, արժ. — Կարեւորութիւն, էհէմիյէդ . — Գովեստ, մէրհ . — Ծանօթ, պէլտիտ . — Զսպել, զապիէրիտ :

ՀԱՐՑԱՐՍՆ. — Պատմեցէ՛ք թէ ինչ տեսակ տղայ մըն է Գրիգոր . — Աղէ՛կ բան է ինքնահաւան ըլլալը :

9. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ըսէ՛ք թէ ո՞ր կը գտնուին . —

Սեղան, արեւ, ձուկ, կաթոյ, խնձորենի, գրասեղան, խորան, վայրի խող, ծաղիկ, վառարան, ձի, դպրոցական, շոգենաւ, թուղուն, կառք, ագարակ, հաւ, պատուհան, հրեշտակ, սատանայ, տերեւ, մելան, եղջիւր, կղմնոր, կատու, բանտարկեալ, ջուր, խոտ, Աստուած, ստամոքս, օձ, կոկորդիլոս, մեղր, նպարեղէն, միս, վայրի հաւ, պողատու ծառ, մետաղ, ուղեղ, եղունգ, բազմոց, վանական, դատաւոր, նաւապետ, տիրացու, քահանայ, հիւանդանոց, զինուորներ, պատառաքաղ, աղ, յիմարներ, շանթ տրուել :

9. Զ Ր ՈՒ Ց Ա Տ Ր ՈՒ Յ Ի Ն

Այսօր ինչո՞ւ ուշ ելաք անկողնէն: Քիչ մը դուրսս կը ցաւէր կոր: Կարծեմ օգը պիտի աւրուի: Երկինք ամպոտ է: Արեւմուտքի կողմը բոլորովին սեւցաւ: Կայծակ կը զարնէ կոր: Կը լսէ՞ք կոր որոտումը: Հիմա անձրև պիտի գայ: Զուրի կաթիլները կ'զգամ կոր երեսիս: Ահաւասիկ սկսաւ անձրևը. հովանոցդ բաց: Ո՞ւր է քուկինդ: Տունը մոռցայ: Իմ հովանոցիս տակը եկ՛ւ՛ր: Շուտ քալենք ու տուն երթանք: Փողոցները ցեխ եղան: Վերարկուս լաւ մը թրջեցաւ: Խոնաւութիւն կ'զգամ կոր: Պէտք է որ հագուստնիս փոխենք, ապա թէ ոչ հիւանդ կ'ըլլանք:

ԲԱՌԵՐ. — Ամպոտ, պոլոսալս. — Արեւմուտք, դարպ (էնն պարըսք). — Բոլորովին, դէմքիլ. — Կայծակ, շէմքիլ. — Որոտում, կէօ գէրլէմի. — Կաթիլ, պամլս. — Ահաւասիկ, էրէ. — Հովանոց, շէմքիլ. — Ցեխ, լամար. — Վերարկու, փալթօ. — Խոնաւութիւն, նէմ. — Ապա թէ ոչ, էօգսս:

10. Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(Ա. Բ. Ե.)

Գիտէ՞ք անունն այն կանթեղին
 Չեւով կըլլոր, գոյնով դեղին,
 Որ կը վառի ցորեկ ատեն
 Եւ բուերը զանի կ'ատեն:

7. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գիծերուն սեղ մէկ մէկ ձայնաւոր դնելով բառեր կազմել եւ նշանակութիւնը գրուցել:

Լ—ր, մ—ս, մ—տ, հ—ղ, ձ—թ, ք—թ, թ—ւ, մ—դ,
 ս—ր, մ—մ, լ—ճ, ք—ր, դ—ն, պ—տ, գ—ր, դ—ր,
 գ—մ, ս—գ, հ—ց, ձ—գ, հ—ւ, ճ—չ, ս—խ, լ—թ, ս—ւ,
 կ—ր, բ—ց, խ—տ, խ—չ:

11. ԳՈՂՑՈՒԱԾ ԽՆՁՈՐՆԵՐ

Գէորգ պզտիկ բարի տղայ մըն էր, բայց կը կարծէր թէ ամէն բան ներելի է : Օր մը դրացիին պարտեզին մէջ տեսաւ ազուոր կարմիր խնձորներ, և իսկոյն պատին վրայ գտնուած ծակէ մը պարտեզ մտնելով, գրպանները խնձորներով լեցուց : Յանկարծ դրացին վրայ հասաւ : Գէորգ զայն տեսնելով անմիջապէս ծակին քով վազեց որ հոնկէ փախչի : Բայց գրպանները այնչափ ուռեցած էին որ չի կրցաւ անցնիլ : Դրացին հասաւ, պարպել տուաւ գրպանները և ազուոր պատիժ մը տուաւ անոր :

Մի գողնաք ուրիշին ստացուածքը :

ԲԱՌՆԵՐ. — Գողցուած, չաւընձըլ. — Կարծել, զանն էդ-ճէ. — Ներելի, աֆ օլո-նոր. — Կրպան, ճէպ. — Իսկոյն, յանկարծ, հէ՛մէն. — Դրացի, գօնչո. — Փախչիլ, գալ՛մօգ. — Ստացուածք, հալ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գէորգ ի՞նչ տեսակ տղայ էր. — Ի՞նչ պատահեցաւ օր մը անոր. — Դրացին ի՞նչ ըրաւ իրեն. — Գէորգին ըրածը լա՛ւ բան էր : Այս պատմութիւնը ի՞նչ կը սորվեցնէ :

8. ՀՐԱ ՀԱՆԳ

Ո՞ր կենդանիները ունին

Նրկայն ականջ, թաթ, եղջիւր, խայթոց, մազ, բուրդ, կուղ, խեցի, պատիճ, ճանկ, ամբակ, բբուկ, բաշ, թոյն, պոչ, փուշ, թեւ, լողակ :

ՊԱՆՕՒԹ. — Դատառուն պէտք է վերոյիշեալ բառերուն նշանակութիւնները սորվեցնէ աշակերտաց :

12. ԽՆԱՅՈՂԸ ԵՒ ՇՌԱՅԼԸ

Յակօր ձեռքը անցած ստակը անմիջապէս կը ծախսէ : Զարուհի, իր քոյրը, ընդհակառակը կը պահէ իր ստակը որ պէտք եղած ատենը դործածէ : Օր մը երբ քոյր և եղբայր միասին կը պտտէին փողոցին մէջ, հանդիպեցան խեղճ կնոջ մը որ իր երեք փոքրիկ տղաքներուն հետ մէկտեղ հաց կը մուրար : Զարուհի անմիջապէս քսակը հանեց և դրամ տուաւ աղքատ կնոջ : Յակօր ալ տալ ուզեց, բայց ունեցած դրամովը առտուն պտուղ և խաղալիքներ գնած ըլլալով, քովը բնաւ դրամ չէր մնացած : Այս պատճառաւ չի կրցաւ դրամ տալ, և մեծ ամօթ զգաց :

Աշխատող և խնայող մարդը կրնայ իր ամէն պէտքերը հոգալ և քիչ մըն ալ ուրիշին տալ :

ԲԱՌՍԲ.— Խնայող, խորհե՛ք. — Շոյլ, միտէ՛յե՛ք. — Մախսել, խորճամագ. — Գործածել, գոլլանճագ. — Պտտիլ, չէլճէք. — Հանդիպիլ, բասդ չէլճէք. — Խեղճ, զեվալլը. — Մուրալ, փէլէնճէք. — Քսակ, քէսէ. — Գնել, սադըն ալճագ. — Ամօթ, ալըպ. — Զգալ, փոյճագ (հըս էրճէք) :

ՀԱՐՑԱՐԱՆ.— Խնայող որո՞ւ կ'ըսեն. — Շոյլ որու կ'ըսեն. — Յակօրին և Զարուհիին պատահածը կրնա՞ք պատմել. — Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

9. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ վանկերուն սկիզբը մէկ մէկ բաղաձայն աւելցրնելով բառեր շինել եւ սալ նշանակութիւնը :

ար — աւ — ալ — աց — իս — իզ — էր — որ —
 ոչ — ոց — այր — ուն — որ — այլ — արձ — իւղ — ոյր :

13. Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ականջը կը լսէ. աչքը կը տեսնէ. ձեռքը կը բռնէ. մեղուն կը խայթէ. ձուկը կը լողայ. թռչունը կը թռչի. գորտը կը յատքէ. օձը կը սողայ. մարդը կը քալէ. արեւը կը լուսաւորէ. հովը կը փչէ. ամպը կը յառաջանայ. կայծակը կը փայլի. անձրեւը կը տեղայ. գետը կը յորգի :

ԲԱՌՆԵՐ. — Խայթել, սեգմագ. — Լողալ, էի-զմէր. — Լուսաւորել, ըլնդ վերմէր. — Փչել, էսմէր. — Յառաջանալ, էլէրէ էլնմէր. — Փայլիլ, փարլամագ. — Տեղալ, էաղմագ. — Յորդիլ, լաղմագ :

14. ՀՈԼՈՎՈՒՄ ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐՈՒ

	ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ	
Ո.	Պարտէզ	Պահէ	Պարտէզներ	Պահէլէր
Ս.	Պարտէզի	Պահէկնին	Պարտէզներու	Պահէլէրին
Տ.	Պարտէզի	Պահէյէ	Պարտէզներու	Պահէլէրէ
Հ.	Պարտէզ	Պահէյի	Պարտէզներ	Պահէլէրի
Բ.	Պարտէզէ	Պահէսէն	Պարտէզներէ	Պահէլէրսէն
Գ.	Պարտէզով	Պահէիլի	Պարտէզներով	Պահէլէրիլի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք պահեր, սեղան, փողոց, և այլն :

10. Հ Բ Ա Հ Յ Ն Գ

Հետեւեալ բառերուն մեջ ձայնաւոր գիրերը փոխելով ուրիշ բառեր շինել եւ սալ անոնց նշանակութիւնը.

Մաս — կեր — սելս — լած — բառ — գիր — գամ — մամ համ — նոր — դատ — պետ — վար — խեռ — սէր — թիւ — մաս :

15. ՋՐՈՒՑԱՏՐՈՒՅԻՒՆ

Այսօր օդը շատ գեղեցիկ է: Եկո՛ւր միասին պտըտիլ երթանք: Ո՞ւր պիտի երթանք: Դիմացի մարգագետինը երթանք: Տե՛ս որչափ մարգ կայ հոն: Ամէն մարգ շրջագայութեան ելեր է: Ի՛նչ գեղեցիկ են գետնին խոտերը: Շուրջ գտնուած ծաղիկներուն նայէ՛: Այդ ծաղիկներէն փունջ մը կապենք և միասին տուն տանինք: Հիմա մեզի կը սպասեն: Յոգնութիւն կը զգամ կոր. պէտք է որ քիչ մը հանգստանամ: Սաստիկ ախորժակ ունիմ: Պտոյտը օգտակար բան է:

ԲԱՌԵՐ. — Գեղեցիկ, կիւղիւ: — Միասին, պէրապէր. — Մարգագետին, շայրլըճ. — Շրջագայութիւն, կեղձ. — Շուրջ, էֆրաֆ. — Փունջ, փէձի՛. — Ժամանակ, Վագրը. — Սպասել, պէտէ՛ժէ. — Յոգնութիւն, Եօրդուլուճ. — Հանգստանալ, բահադ է՛ձէ. — Սաստիկ, զտ. — Ախորժակ, իլդահ. — Պտոյտ, կեղձ. — Օգտակար, ֆայրէլէ:

11. ՀՐԱՀԱՆԳ

Ի՞նչ կ'ընեն հետեւեալ գործիքներով.

Ատեղ, վրձին, դանակ, դրիչ, սուլիչ, կշիռ, ծխափայտ, աւել, մուրճ, բանալի, մկրատ, կանգուն, ազոց, ածեղի, խարազան, խարտոց, դոյլ, ունելի, աքցան, մանգաղ, մամուլ, հերիւն:

ՕՐԻՆԱԿ. — Ատեղով կար կը կարեն:

ԾԱՆՕՔ. — Դասատուն կը բացատրէ աշակերտաց չհասկըցած բառերը:

16. ԱՂՔԱՏՆԵՐԸ ԵՒ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

Պէտք է գէշ աչքով նայիլ աղքատներուն, և ո՛չ ալ գանիլ հիւանդներէն : Աղքատութիւնը և հիւանդութիւնը այնպէս բաներ են, որ կրնան օր մըն ալ մեզի պատահիլ : Ուստի պէտք է վարժուինք անոնց, ինչպէս մեր դորժերուն և պարտքերուն : Երբ վարժուինք այս դժբաղդութիւններուն և բարեսրտութեամբ վարուինք դժբաղդ մարդոց հետ, մեր տառապանքը պակաս կ'ըլլայ երբ մենք ալ օր մը այդ վիճակներուն մէջ իյնանք : Դժբաղդները սիրելու զգացումը լաւագոյն զգացումն է աշխարհի վրայ :

ԲԱՌԾԻՐ. — Ո՛չ ալ, նէ պէ. — Պատահիլ, բասի կելմէ. — Ուստի, պինայէն ալէյհ. — Վարժուիլ, ալըլմագ. — Պարտք, վալիֆէ, պործ. — Դժբաղդութիւն, պէպպաթիդըլգ. — Բարեսրտութիւն, էյի էրէրէլէ. — Վարուիլ, գավրամմագ. — Տառապանք, էգէյիլ. — Վիճակ, հալ. — Զգացում, հիսս, գոսյիդ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ըսէ՛ք թէ որո՞ւ կ'ըսեն աղքատ և որո՞ւ՝ հիւանդ : Անոնց հետ ինչպէս վարուելու ենք և ինչո՞ւ համար :

18. ՀՐԱՀԱՆԳ

Ի՞նչ գոյն ունին հետեւեալները .

Կաթ, արիւն, ածուխ, ոսկի, աղ, չրթունք, յարդ, արծաթ, մելան, հասունցած ցորեն, կաւիճ, կարաղ, ձիւն, ալիւր, հասուն ելակ, տերեւ, կեռաս, երկինք, ջուր, վարդ, լեմն, խոտ, բոց, մուխ, սնդիկ, ապակի, քարե-տախտակ, մանիշակ :

17. ԶԱՐԱՍԻՐՏ ՏՂԱՆ

Անձրեւոտ օր մը Կարապետ, դասագիրքերը թեւին տակ և սակառն ալ ձեռքը բռնած, դպրոց կ'երթար : Գետինները թրջած էին : Խեղճ տղուն ոտքը սահելով ինկաւ, և դէմքը բոլորովին ազտտեցաւ : Թովմաս որ անտեղէն կ'անցնէր, փոխանակ անոր օգնելու՝ սկսաւ վրան խնդալ. «Օ՛ պարոն, այդ ի՞նչ աղուոր ես, պեխերդ ու մօրուքդ շատ շուտ բուսեր են .» պոռաց ծաղրելով : Այս խօսքերը ըսած ատեն, յանկարծ իր ոտքն ալ սահեցաւ և այնպէս ուժով մը ինկաւ որ քիթը բերանը արիւննելով, իր չարութեան արժանի պատիժը գտաւ :

ԲԱՌԵՐ. — Չարասիրտ, ֆէնա եկ-բէտլէ. — Անձրեւոտ, ետղճո-բլո. — Դասագիրք, րէրս քիւտալը. — Սակառ, սեֆէր լետալ. — Սահիլ, գայմաֆ. — Փոխանակ անոր օգնելու, ծնա էարաթ էրէճէր էրէրէ. — Ծաղրել, զէֆլէնձէր. — Յանկարծ, պերթէն պերէ. — Արժանի, լայլէ :

ՀԱՐՏԱՐԱՆ. — Կարապետ ո՛ւր կ'երթար կոր : Ինչո՞ւ ինկաւ : Թովմաս այն ատեն ո՛ւր էր և ի՞նչ ըրաւ : Թովմասին ի՞նչ պատահեցաւ : Աստուած ի՞նչ կ'ընէ չարերուն : Ազէ՛կ բան է չարութիւն ընելը :

18. ՀՐԱՀԱՆԳ

Ըսէ՛ք հետեւեալ պնդումները տուող ծանօտուց անուցները .

Կեռաս, օալոր, դեղձ, նուշ, նուռ, սերկեւիլ, տանձ, խնձոր, արմաւ, ընկոյզ, կաղին, շագանակ, բալ, թուղ, նարինջ, խաղող, թուֆ, ծիրան, ձէթ :

18. Ծ Ո Յ Լ Ը

Ծոյլ տղայ մը կ'ըսէր օր մը բժիշկին. «Բնաւ չեմ աշխատիր, վասն զի միշտ հիւանդ եմ:» — Բժիշկը անոր պատասխանեց. «Աւելի ճշմարիտ բան մը խօսած պիտի ըլլայիր եթէ ըսէիր, միշտ հիւանդ եմ վասն զի բնաւ չեմ աշխատիր:»

Աղէկ գիտցէ՛ք, ծուլութիւնը որ ամէն չարեաց պատճառն է, հիւանդութիւնն ալ կը բերէ:

ԲԱՌՍԲ. — Ծոյլ, դէնպէլ — վասնզի, չե՛նքի. — Բժիշկ, հէ՛րի. — Պատասխանել, ճիշտ պէ՛րմի. — Պատճառ, սեպեպ:

ՀԱՐՅԱՐԱՆ. — Ծոյլ տղան ի՞նչ կ'ըսէր բժիշկին: Բժիշկը ի՞նչ պատասխան տուաւ: Բժիշկը իրաւունք ունէր թէ ծոյլը: Ծուլութիւնը ի՞նչ բաներու պատճառ կրնայ ըլլալ:

19. Ն Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

ԵՁԱԿԻ

ՅՈՔՆԱԿԻ

Ո.	Ուսում	Իլիմ	Ուսումներ	Իլիմեր
Ս.	Ուսման	Իլիմին	Ուսումներու	Իլիմերին
Տ.	Ուսման	Իլիմե	Ուսումներու	Իլիմերե
Հ.	Ուսում	Իլիմի	Ուսումներ	Իլիմեր
Բ.	Ուսումէ	Իլիմսէն	Ուսումներէ	Իլիմերսէն
Գ.	Ուսումով	Իլիմ իլի	Ուսումներով	Իլիմեր իլի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հօլովեցէ՛ք խոսում, գնում, սպառում:

14. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ո՛վ կը շինէ կամ կը ծախէ հետեւեալ առարկաները.

Գլխարկ, կօշիկ, հաց, դանակ, կերպաս, ժամացոյց, գիրք, ծաղիկ, հանդերձ, զէնք, գամ, պտուղ, դեղ, կաթափներ, ձուկ, միս:

20. Զ Ր ՈՒ Ց Ա Տ Ր ՈՒ Յ Ի Ի Ն

Կէս օր եղաւ : Ճաշը պատրաստ է : Այո՛, սեղանատուն իջնե՛նք : Եկո՛ւր, քոյս նստէ՛ : Անձեռացդ վրադ ա՛ն : Ի՞նչ կ'ուզես որ տամ քեզի : Ապուր կ'ուզե՛ս : Այո՛, շնորհակալ եմ : Դգալ մոռցեր էք զնելու : Խորովածէն ալ կ'ուզէ՞ք : Իւզոտ կողմէն չեմ ուզեր : Այս կերակուրը շատ անկի է : Ի՞նչ գինի կը խմէք . սե՛ւ թէ ճերմակ : Գինի չեմ ուզեր , բժիշկը արգելած է : Քիչ մը ջուր պիտի խմեմ : Անուշեղէն կը սիրէ՞ք : Ալ չի պիտի ուտեմ , լաւ մը կշտածայ : Հիմա սուրճ մը խմե՛նք :

ԲԱՌՆԵՐ. — Ճաշ , էէ՛մէ . — Գատրաստ , հաղըր . — Անձեռաց , փէրլիք . — Ապուր , ջրոյա . — Ծնորհակալ եմ , թէ չե՛տէ կարէրիմ . — Խորոված , քիպապ . — Արգելել , Դնն էր՛մէ (Եսաստ էր՛մէ) . — Անուշեղէն , լաւուր . — Կշտանալ , փոյճափ . — Սուրճ , գահիլէ :

21. Բ Ա Ր Ի Տ Ղ Ա Ն

Փոքրիկ տղայ մըն եմ բարի ,
 Կը խելօքնամ ամէն տարի .
 Գիրքերուս հետ կ'ապրիմ մինակ ,
 Անոնք եղան հաճոյքս հիմակ :

Միրգ , կարկանդակ , սեր և շաքար
 Հրապոյր չունին ա՛լ ինձ համար :
 Գրքիչ , կարկին , թուղթ և տետրակ
 Խաղալիքներս եղան հիմակ :

ԲԱՌՆԵՐ. — Խելօքնալ , ուսու օլճափ . — Հաճոյք , զէլէ . — Միրգ , էէ՛միլ . — Կարկանդակ , պողալա . — Հրապոյր , Դյլ . — Ճապիտէ . — Կարկին , փէրլիլէ :

ԳԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք , և պատմեցէ՛ք թէ ի՞նչ ըսել կ'ուզէ :

22. ԵՐԵՍԸ ԿԱՒ ՏՂԱՆ

Տե՛ս, Գրիգոր նորէն անկիւն մը քաշուեր նստեր է: Գլուխը կախած է և մէկուն չի նայիր: Մայրը քանի մը անգամ կը կանչէ և Գրիգոր չերթար. մատուրներով աչքերը կը շփէ. չրթունքները կախած է. լացը երեսէն կը վազէ:

Մայրը ձեռքը վար առնելով ուզէ: Գրիգոր կը հրէ իր մօրը ձեռքը, և նորէն երեսը անդին կը դարձնէ: Գրիգորին ընկերները զինքը բնաւ չեն սիրեր, ինչու որ անիկա ամէն խաղի մէջ կը գժտի, կուի կը հանէ և ետքը անկիւն մը կը քաշուի ու երեսը կը կախէ:

Մարդ չի սիրեր այն տղան որ երեսը կը կախէ ու կուրայ: Ի՞նչ գէշ և զզուելի բան է ատիկա:

ՌԱՌԵՐ. — Անկիւն, թէ՛օղէ. — Կախել, աստօ. — Շփել, օձալամագ. — Շրթունք, քո-քոագ. — Լաց, աղլամ. — Վազել, ագժագ. — Հրել, փր-րթագ. — Դարձնել, չեղիթագ. — Գժտիլ, քարըլագ. — Կուի, գաղկա. — Բռնուիլ, չեթիթագ. — Լալ, աղլամագ. — Զզուելի, րիթիթիթագ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գրիգոր ի՞նչ տեսակ տղայ է: Մօրը խօսքը մտիկ կ'ընէ: Գրիգորին ընկերները ինչ՞ու չեն սիրեր զինքը: Երեսը կախ տղաքները սիրելի կ'ըլլան:

18. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կ'ընեն սա արհեստաւորներ.

Ժամագործ, դարբին, աքաղձագործ, երկաթագործ, հացագործ, մսավաճառ, դերձակ, տիրացու, նաւավար, կառուցան, պարտիզպան, հիւճն, որմնաղիւր, ճարտարագետ, կահագործ, հնակարկատ, ղեղաղործ, խոհարար, նպարավաճառ, կօշկակար, գրածագ, տպագրիչ, բժիշկ, ատամնաբոյժ:

ՕՐԻՆՅԱԿ. — Ժամագործը աւրուած ժամացոյցներ կը չինէ:

23. Ա Ն Ձ Ե Ր

Եղբայր . քոյր . եղբորորդի . քեռորդի . հորաքոյր .
 մորաքոյր . հորեղբայր . մորեղբայր . հայր . մայր . մոր-
 եղբորորդի . հորեղբորորդի . քեռի . քենեկալ . զղբանչ .
 կեսրայր . տղայ . աղջիկ . ծառայ . աղախին . աներձագ .
 կնքահայր . կնքամայր . հարս . կեսուր . փեսայ . տան-
 աիկին . այր . օրիորդ . մօրու . հօրու . պապ . մամ .
 տաղը . քեռայր . ներ :

ՀԱՐՑԱՐԱՐՆ. — Այրերու և կիներու անունները որոշե-
 ցէ՛ք : Չամուսնացող մարդ մը ի՞նչ ազգականներ կրնայ ու-
 նենալ : Ամուսնացած մարդ մը ի՞նչ ազգականներ կրնայ
 ունենալ :

24. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

ԵՁԱԿԻ		ՅՈՔՆԱԿԻ	
Ո . Բարութիւն	Էյիիբ	Բարութիւններ	Էյիիբեր
Ս . Բարութեան	Էյիիից	Բարութիւններու	Էյիիբերց
Տ . Բարութեան	Էյիիյե	Բարութիւններու	Էյիիբերե
Հ . Բարութիւն	Էյիիի	Բարութիւններ	Էյիիբերի
Բ . Բարութենէ	Էյիիիցեց	Բարութիւններէ	Էյիիբերցեց
Գ . Բարութեամբ	Էյիիյ իլի	Բարութիւններով	Էյիիբեր իլի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք հիւանդու-
 քիւն, հարսութիւն, քարկութիւն, աղստութիւն :

16. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կը դնեն .

Գաւաթին մէջ , շիշին , կաղամարին , քսակին , պայուսա-
 կին , պնակին , կանթեղին , դարանին , կողովին , ախտոին ,
 ընտին , աղամանին , խնկատուփին , վանդակին , իւղամանին ,
 դոյլին , դրամարկղին , պահարանին , հաւնոցին :

25. Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ

Այ մանուշակ
 Իմ անուշակ,
 Ի՞նչ աղուոր դաս
 Ինձի կուտաս :

Կակաչին պէս
 Յուցամոլ չես .
 Բուրմանդ համար
 Չես պարծենար :

Թուփերուն տակ
 Պահուած մինակ ,
 Խոնարհ , անտես ,
 Բոյր կ'արձակես :

Կ'ուզեմ ես ալ
 Քեզ պէս ըլլալ ,
 Այ մանուշակ
 Իմ անուշակ :

ՔԱՆՈՒՅԻ. — Մանուշակ, Դնէրէ . — Անուշակ, Բարլը . — Կակաչ, լալէ . — Յուցամոլ, Էնթիքի կէտորէրէն . — Բուրում, Գոգո . — Պարծենալ, Էօյի-նմէր . — Թուփ, պօտուր աղած . — Պահուած, կիլլէնմէր . — Խոնարհ, ալլազ (Տահէն-ալ) . — Անտես, կէօրի-նմէր . — Բոյր, Գոգո . — Արձակել, պըլարը վերմէր, Գոյ վերմէր :

ՊԱՅՈՒՆԻ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէք՝ եւ բարձրաձայն արտասանեցէք :

17. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ինչ բանք շինուած է .

Կարագը, հացը, ալիւրը, պանիրը, թուղթը, կզմինտը, կաթան, թաղարը, գրիչը, գիրքը, կօշիկը, հագուստը, դրամը, աթուր, կասկարան, զմելին, սոսինձը, պայտը, ձիթախղը, քացախը, կերպասը :

26. Զ Ր Ո Ւ Ց Ա Տ Ր Ո Ւ Յ Ի Ի Ն

Թղթավանաւասան մեզ

Գրի համար աղէկ թուղթ ունի՞ք : — Շատ տեսակներ ունիմ. դուք ի՞նչ թուղթ կ'ուզէք : — Ճերմակ և դժաւոր . լաւ տեսակ ըլլայ : — Օրինակները տեսէ՛ք : Գունաւոր ալ կ'ուզէ՞ք : — Այլեւայլ մեծութեամբ պահարաններ ալ տուէ՛ք : — Ահաւասիկ զանազան գոյներով պահարաններ : — Կ'աղաչեմ մեծ շիշ մը մեկան ալ տուէ՛ք, մանիշակագոյն, մէկ քանի հատ ալ աղէկ գրիչ : Կարկինի տուփ և ներկի համար վրձիններ ունի՞ք : — Այո՛, դպրոցական տետրակներ ալ կ'ուզէ՞ք : — Կ'ուզեմ, բայց լաւ կազմուած ըլլան : — Տպագրական թուղթ ալ ունի՞ք : — Ասոնք շատ սուղ են, միւս տեսակէն տուէ՛ք : Մէկ ժամէն ամէնքն ալ պատրաստեցէ՛ք :

ԲԱՆՈՒՐ. — Թղթավանաւաստուն, իւրաքարճը փի-փանը. — Գժաւոր, շղիւղ. — Օրինակ, էօրինիկ. — Գունաւոր բէնկլի. — Այլ և այլ, ճինս ճինս (ճո-ի-ի-ի-ի-ի-ի). — Մանիշակագոյն ճէ-նէ-ի-ի-ի-ի-ի-ի. — Պահարան, զարֆ. — Զանազան, ճինս ճինս. — Կարկինի տուփ, փերիկէ Գո-լո-սո-սո. — Վրձին, ֆրէշ. — Կազմուած, ճիւղէնի. — Տպագրական թուղթ, մալ-պաս իւրաքար. — Պատրաստել, հաղըրլամագ :

27. ԲԱՐԻ ՊԶՏԻԿ ՏՂԱՅ ՄԸ

Առաու մը շատ կանուխ հանգիպեցայ պզտիկ տղու մը որ գիւղէն կը դառնար, իր պզտիկ բազուկները բեռնաւորած չոր փայտերով :

Հարցուցի անոր՝ «Ուրկէ՞ կուգաս, պզտիկ, այսքան կանուխ?»

— Անտառէն, պարոն, ուրկէ փայտ ժողվեցի մայրիկիս համար :

— Շատ յոգնած ըլլալու ես :

— Ո՛չ, պարոն, ես արդէն զօրաւոր եմ, վեց տարու եմ, և յետոյ մայրիկս շատ կը նեղուի պզտիկ եղբայրս և քոյրս խնամելով, և ես անոր կ'օգնեմ :

Գրկեցի զայն և ըսի. «Ահա՛ ազնիւ տղայ մը որ կը սիրէ իր մայրը, ասիկա պարկեշտ մարդ մը պիտի ըլլայ» :

Տղաքները պէտք է օգնեն իրենց ծնողաց :

ԲԱՌԵՐ. — Բազուկ, գօլ. — Բեռնաւորուած, ելիւզէնիլ. Անտառ, օրճան. — Յոգնած, էօրոլմոլ. — Զօրաւոր, գոլվիլ. — Նեղուիլ, սրգըմագ. — Խնամել, պագմագ, գայրմագ. — Օգնել, էարբըմ էրմէմ. Գրկել, գոմատլամագ. — Պարկեշտ, նամասլո. — Ծնողք, էդէվէյն :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պզտիկ տղան ո՛ւրկէ կուգար կոր : Որո՞ւ համար փայտ ժողված էր : Այս բեռը զինքը չէ՞ր յոգնեցուցած : Պզտիկ տղաքները ի՞նչ պէտք է ընեն իրենց ծնողաց :

18. ՀՐԱ ՀԱՆԳ

Կեսերուն տեղ ձայնաւոր գրեր դնելով բառեր կազմել եւ տալ նշանակութիւնը .

պ . ր	բ . շ	պ . խ	փ . ղ	ս . ր	ք . ր	դ . ր	ս . խ
գ . ծ	բ . լ	խ . ա	շ . հ	զ . հ	հ . ր	դ . ս	ժ . ր
ծ . ծ	կ . ր	շ . տ	չ . ր	զ . տ	տ . ր	փ . ղ	լ . ո

28. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՂԱՅՈՑ ԼԱԻ ԵՒ ՅՈՒԻ ՅԱՏԿՈՒՅԻՒՆՆԵՐԸ

Ամէն դպրոցի մէջ երկու տեսակ աշակերտներ կը գտնուին: Անոնցմէ ոմանք կ'ըլլան հլու, բարի, քաղցր, ուշագիւր, որոնք իրենց ուսուցիչներուն հետ մեծ յարգանքով կը վարուին և ընկերներուն հետ՝ մարդասիրութեամբ: Անոնք միշտ գոհ կ'ըլլան և ուրախ: Բայց կան նաև այն տեսակ տղաքներ որոնք անփոյթ, չար, կեղծաւոր, ծոյլ, անկիրթ, անհնազանդ, հպարտ են և իրենց ընկերներուն հետ խիստ կոշտութեամբ կը վարուին: Ի՞նչ գէշ յատկութիւններ են ասոնք: Բարի տղաքները պէտք է որ հեռու կենան այս տեսակ չար և յոռի ընկերներէ:

ԲԱՌԵՐ. — Յատկութիւն, խաստէ. — Հլու, ինտադըլ. — Ուշագիւր, փէգադըլ. — Յարգանք, բայէդ. — Վարուիլ, վարընճագ. — Մարդասիրութիւն, ինտնէյէդ. — Գոհ, ճէճնոն. — Անփոյթ, դամարըլ. — Կեղծաւոր, փրայէ. — Անհնազանդ, ինտադըլ. — Հպարտ, դորո-րըլ. — Կոշտութիւն, գապըլ:

ՀԱՐՑՈՐԱՆ. — Դպրոցականի մը լաւ յատկութիւնները որո՞նք են: Գէշ յատկութիւնները որոնք են: Բարի տղաքները ի՞նչ ընելու են:

19. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ բառերուն մէջ գիր մը փոխելով նոր բառեր շինել եւ սալ նշանակութիւնը.

Հաց, սոխ, ջուր, մայր, փայտ, փուռ, լեռ, խազ, տուն, լոյս, ձուկ, ծառ, ծեր, սագ, հով, մութ, գոյն, նոր, մոմ, բարի, մարդ, դաշտ, նուշ, սեր, մորթ, մաս, քանակ, հոր, քայլ, ոսկոր, թեւ, լուր:

ՕՐԻՆԱԿ. — Հաց — հաւ. Սոխ — սեխ. Զուր — մուր:

29. ՀՈԼՈՎՈՒՄ (Շարունակութիւն)

ԵԶԱԿԻ

ՅՈՔՆԱԿԻ

Ո.	Մով	Տեճիգ	Մովեր	Տեճիգլեր
Ս.	Մովու	Տեճիգիս	Մովերու	Տեճիգլերիս
Տ.	Մովու	Տեճիգի	Մովերու	Տեճիգլերի
Հ.	Մով	Տեճիգի	Մովեր	Տեճիգլերի
Բ.	Մովէ	Տեճիգիս	Մովերէ	Տեճիգլերսիս
Գ.	Մովով	Տեճիգիլի	Մովերով	Տեճիգլերիլի

ՎԱՐԺ.—Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք հետեւեալ բառերը. կոյ, ձի, հոյ, հաւ, մանչ:

30. Խ Ր Ա Տ

Մի՛ խնդրեր Աստուծմէ
Ո՛չ փող, ո՛չ պատիւ,
Այլ քեզ կրթելու
Խելք, շնորհք, սիրտ ազնիւ:
Երբք մի՛ պարծիր
Թէ շատ գիտուն ես,
Որքան բան սորվիս
Այն օգուտ է քեզ:

ԲԱՌԵՐ.— Խնդրել, խորհիլ. — Փող, փարս. — Պատիւ, իզիլդ. — Կրթել, դէրդիլէ կորիլ. — Երբք, ասու. — Պարծենալ, էօյի-նիլ. — Գիտուն, ալիլ. — Օգուտ, ֆայրտ:

ՊԱՏՈՒԷՐ.— Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձրաձայն արտասանեցէ՛ք:

30. Հ Ր Ա Հ Յ Ն Գ

Ինչ բանի կը գործածեն (պատասխանեցէ՛ք ամբողջ նախադասութիւններ կազմելով).

Գրիչը, թուղթը, գաւաթը, պնակը, աթոռը, սանարը, կօյիկը, ձին, եզը, շունը, արօրը, սայլը, ածուխը, փայտը, պատասաքաղը, դգալը, ասեղը, շոգենաւը, թին, բամպակը, երկաթը, սակին, արծաթը, դերձանը, ուղտը, ուրազը, աճառը, գորգը, կզմինարը, խնկամանը, ծխափայտը:

ՕՐԻՆԱԿ.— Գրիչը կը գործածեն գիր գրելու համար:

31. ԱՆՀԱՋԱՆԴ ՏՂՈՒՆ ՊԱՏԻԺ

Պաղտիկ ամէն օր դպրոց երթալու ատեն քարաշէն կամուրջէ մը կ'անցնէր: Մայրիկն անոր կ'ըսէր միշտ. «Տղաս, կամուրջին պատէն վար մի՛ ծռիր, գետին մէջ կ'իյնաս»: Բայց Պաղտիկ շատ կը փափաքէր պատին վրայէն գետը նայիլ, և կ'ըսէր. «Կարելի է գետին մէջ ձուկեր կը տեսնեմ»:

Օր մը Պաղտիկ ելաւ քարակոյտի մը վրայ, երկընցաւ և սկսաւ նայիլ: Բան մը չի տեսաւ, այլ ոտքը սահելով՝ գետին մէջ ինկաւ:

Քանի մը մարդիկ շուտ մը վազեցին և գետէն հանեցին Պաղտիկը, մարած և կիսամեռ վիճակի մէջ: Ճակատը քարի մը զարնուելով ծակած էր:

Այսպէս խեղճ Պաղտիկ իր պատիժը գտաւ և այնուհետեւ միտքը դրաւ մօրը պատուէրը պահել:

ԽՐԱՏ. — Գէտք է որ տղաք իրենց ծնողաց պատուէրները պահեն և հնազանդ ըլլան անոնց:

ՐԱՌՆԵՐ. — Բարաշէն, Ժեօրիկ. — Կամուրջ, Ժեօրիկ. — Մօր, Էյեմէտ. — Փափաքիլ, արդո՛ւ էդմէտ. — Կարելի է, պէլի. — Քարակոյտ, լաւ երջընը. — Սահիլ, Գոյճագ. — Մարած, պայքընը. — Կիսամեռ, Էարը Էօլի. — Մակած, պէլի:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Մայրիկը Պաղտիկին ինչ կը պատուիրէր: Պաղտիկ պատուէրը պահե՞ց: Ինչ պատահեցաւ անոր: Այս բանը Պաղտիկին խրատ եղա՞ւ:

Ք 1. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գրեցի՛ք երեք անուն

Մտռի, հազուտի, խաղալիքի, պտուղի, ծաղիկի, թռչունի, ընտանի կենդանիի, վայրի կենդանիի, ձուկի, նուագարանի, կարասիի, ըմպելիքի, ուտելիքի, շէնքի, մարդու, կնոջ, սողունի, միջատի, արհեստաւորի:

ՕՐԻՆԱԿ. — Կաղնի, բալի, թիֆնի:

32. ԶՐՈՒՑԱՏՐՈՒՅԻՒՆ

Պարսկերէն մէջ

Թէ որ կ'ուզէք քիչ մը պարտէզ իջնանք : Շատ հաճելի է ինձ երբ ժամանակս կ'անցնեմ ծառերուն և ծաղիկներուն մէջ : Մեր ծաղկապարտէզը զանազան ծաղիկներ ունի, սակայն շատ մասեր չունի : Շատ և զանազան գոյներով վարդեր ունինք : Ի՞նչ լաւ կը հոտին : Վարդերուն անուշահոտութիւնը ինձի գլխու ցաւ կը պատճառէ, սակայն մանուշակներու և շուշաններու հոտը շատ հաճելի է : Քիչ մը յառաջ եկէ՛ք և տեսէ՛ք սա մեխակները, յակինթները, շուշանները, կակաչները և արեւածաղիկները : Նայեցէք ո՞րքան բարձրացան թանթրուենիները : Հոս ծաղիկները խոտերուն մէջ խեղդուած են : Պարտիզպանը ուշադրութիւն չէ ըրած : Կարծեմ թէ այս ծաղիկը անթառամ է, սակայն միւսները սկսան թառամիլ :

ԲԱՌՈՒՅԻՐ. — Մաղկապարտէզ, շէշէր պահլէսի. — Մաս, գըլէս. — Հոտիլ, գօգմագ. Անուշահոտութիւն, կի-զէլ գօգո. — Յաւ պատճառել, աղբը վերժէր. — Շուշան, զամպոտ շէշէյէ. — Միսակ, գարանֆիլ. — Յակինթ, գի-մոյէ-լ. — Կակաչ, լալէ. — Արեւածաղիկ, այ շէշէյէ. — Թանթրուենի, իր-վեր աղաճը. — Խեղդուած, պօղը-լմո-լ. — Ուշադրութիւն, փիգալի. — Անթառամ, գո-րդ-մաղ. — Սկսիլ պալլամագ :

33. ՀՐԱ ՀԱՆԳ

Ըսե՛ք թէ հետեւեալներն ինչո՞վ իրարու կը նմանին .

Զիւնն ու կաթր : Մեղրն ու շաքարը : Արեւն ու ոսկին : Բանան ու գիշերը : Շոգենաւն ու շոգեկառքը : Շոգենաւն ու նաւակը : Փետուրն ու տերեւը : Բարն ու փայտը :

ՕՐԻՆԱԿ. — Զիւնն ու կաթը գոյնով իրարու կը նմանին, երկուքն ալ ճերմակ են :

ՅՅ. ԱՌՈՂՋԱՊՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Երբ առաւօտուն քունէդ ելնես, անմիջապէս սենեակիդ պատահանները բաց, որպէս զի օդը մաքրուի. որովհետեւ սենեակիդ օդը գիշերը շունչէդ ապականած է : Երբ շունչը վնասակար է մեզի, կը հիւանդացնէ : Անկողինիդ մէջ գիշերը գլուխդ վերմակէն դուրս պահէ՛, մաքուր օդ շնչելու համար :

Ամէն առաւօտ պաղ ջուրով լուս' երեսդ, վիզդ, ականջներդ, կուրծքդ և բազուկներդ : Երբ այսպէս լուացուիս զուարթութիւն և աշխոյժ կուգայ վրադ : Յետոյ նախաճաշդ բրէ՛ և գնա՛ աշխատութեանդ :

Առողջ ըլլալու համար պէտք է սիրել մաքրութիւնը և չափաւորութիւնը :

ԲԱՌԵՐ. — Բուն, ույգո. — Մաքրել, դէմիլէմէ. — Շունչ, Նէֆէս. — Ապականած, փխլէնիչ. — Վնասակար, վարարլը. — Հիւանդացնել, հասդա էդմէ. — Անկողին, էոդատ. — Վերմակ, էօրդան. — Չուարթութիւն, զէվէ, քէյֆ. — Աշխոյժ, չէվիլէ. — Նախաճաշ, գահվալլը. — Չափաւոր, գարար :

ՅԶ. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ խօսքերը ամբողջացուցի՛ք կետերուն տեղ յարմար բառեր դնելով .

Հացագործը ... կը խմորէ : Կօշկակարը ... կը կարէ : Շունը ... կը պահպանէ : Գայլը ... կ'ուռէ : Կատուն ... կը բռնէ : Արեւը ... կը լուսաւորէ : Բժիշկը ... կը դարմանէ : Եկեղեցին ... տունն է : Մեղուները ... կը շինեն : Ամառուան եղանակներն են ... և ... : Խաղողը ... պտուղն է : Ճագարը երկայն ... ունի : Բացախը ... կը պատրաստեն : Տարին ... օր ունի :

34. Ա Ռ Ա Ի Օ Տ

Անցաւ գիշերը: Արշալոյսը եկաւ. կը լուսնայ: Աքաղաղները աւտուան գալուստը արդէն աւետած են, և քանի որ թմբուցող թուղունները պատուհաններուն առջեւ կը ճռուղեն: Գիւղացիները անկողիններէն կ'ելլեն, արջառներուն կեր կուտան, եղերը կամ ձիերը կը լծեն ու իրենց գաշտային աշխատութեան կ'երթան:

Այս միջոցին արեւը լեռներուն ետեւէն բարձրացած է. անոր ճառագայթները տակաւին քնացող կենդանիները կ'արթնցնեն: Մեղուները ծաղիկներուն մէջ հիւթ կը փնտուեն: Աղանիները արտերը կ'երթան իրենց նախաճաշիկ փնտուելու: Երէկ ինչ որ չոր էր, այսօր կրկին թարմացած է: Մարդիկ աշխոյժով կ'երթան իրենց գործին: Կենդանիներն ալ ուրախ են: Ամէն շնչաւոր արթնցած է, կը շարժի, կ'աշխատի:

Ո՛րքան հաճելի է առտուան զով օդը:

ՐԱՌՍԵՐ. — Արշալոյս, շափափ. — Գալուստ, կ'ելլու. — Աւետել, հովաթիս վերժեհ. — Ճռուղել, գոլլարըն էօդճեհ: — Աքաղա, էօթիւղ, ինէկ. — Կեր, էէճ. — Լծել, քօշմափ, լափճափ. — Դաշտային, գըրդատի. — Բարձրանալ, էիտեւլճեփ. — Ճառագայթ, լիէ. — Տակաւին, դահա. — Կրկին, դէրար. Թարմացած, դադէլէնճիլ. — Շնչաւոր, ճօնլը. — Շարժիլ, հարտեհ էդճեհ, գըճըլտանճափ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք առաւօտը:

34. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ըսէ՛ք եւ գրեցէ՛ք.

Օրդան ժամերը, շարժումն օրերը, տարուան ամիսները և եղանակները, գլխաւոր տոները:

35. ՀՈՆՈՎՈՒՄ (Շար.)

ԵԶՐԱԿԻ

ՅՈՒՆԱԿԻ

Ո.	Տուն	Էվ	Տուներ	Էվեր
Ս.	Տան	Էվին	Տուներու	Էվերին
Տ.	Տան	Էվի	Տուներու	Էվերի
Հ.	Տուն	Էվի	Տուներ	Էվերի
Բ.	Տունէ	Էվսէն	Տուներէ	Էվերսէն
Գ.	Տունով	Էվիի	Տուներով	Էվերիի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք.

Շուն, աշուն, անուն, ժողովուրդ, մանուկ:

ԾԱՆՈԹ. — Դասատուն կ'օգնէ աշակերտաց այս անուններուն հոլովման համար:

36. Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Իրիկուն կ'ըլլայ: Արեւը մարը կը մանէ: Արեւմուտի կողմը գտնուող ամպերը վարդի պէս կը կարմրին արեւին վերջին ճառագայթներէն: Այս գեղեցիկ տեսարանը վերջալոյս կը կոչուի: Օրուան սաքութիւնը անցած է: Հիմայ զովիկ հով մը կը փչէ: Չուրին վրայ մէգ կը գոյանայ: Խոտերը շաղէն կը թրջուին: Մժղուկներ սնհամար խուսերով օդին մէջ կը խաղան:

35. Հ Բ Ա Հ Յ Ն Գ

Ըսէ՛ք քե ինչ գործիքներ կը գործածեն հետեւեալ արհեստաւորները.

Դերձակ, որսորդ, լուացարար, հովիւ, երկաթագործ, արդկող, գծագրիչ, մսավաճառ, պարտիզպան, որմնադիր, հիւան, նուագածու, ձկնորս, կառապան, սղոցող, փայտահար, հնձող:

ՕՐԻՆԱԿ. — Դերձակը կը գործածէ ասեղ, միրաստ, մատնոց, քանակ, չափ և այլն:

Թռչնիկներ մացառներուն մէջէն իրենց վերջին երգը կ'երգեն: Մեղուները իրենց փեթակը կը վերադառնան: Մշակները դաշպէն ու հօտերը արօտավայրէն տուն վերադարձած են: Ամէնքն ալ յոգնած են ու հանգիստի կը կարօտին: Բայց մարդիկ, ինչպէս նաև կենդանիները անօթի են ու կ'սպասեն իրենց ընթրիքին: Տանտիկինը անօթիներուն համար կերակուր կը պատրաստէ, և խոտով բեռնաւորուած մշակներ ալ կ'երթան ակոռին բնակիչները կերակրելու: Քիչ մը վերջը ամէն մարդ պիտի քնանայ: Բարին Աստուած ալ պիտի հսկէ անոնց վրայ:

ԲԱՌԵՐ. — Մարը մտնել, պարձագ. — Կարմիրի, Գրչարձագ. — Տեսարան, Տէնդարէ. — Վերջալոյս, ագլամ այսրնլըղը. — Կոչուի, փենձէտ. — Մէգ, փեման (սէս). — Իոյանալ, հասըլ օլմագ. — Շաղ, շէյ. — Մժղուկ, սիվրիսիէտ. — Հօտ, Գօյուն սիբիսի. — Արօտավայր, Տերս. — Կարօտիլ Տիհդամ օլմագ. — Ընթրիք, ագլամ էիմէյի. — Տանտիկին, էվ Գարընը. — Գատրաստել, հաղըլմագ. — Կերակրել, էիմէտ վերմէտ. — Ամէն մարդ, հէր տէս. — Հսկել, Տոգայէդ օլմագ (նէղարէդ էդմէտ):

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք իրիկունը:

36. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն ծայրը իկ, ակ, ուկ նուազական մասնիկները աւելցուցի՛ք եւ ըսէ՛ք թէ ի՞նչ կ'ըլլայ անոնց իմաստը.

1. Հայր, բարձ, մայր, շուն, քիթ, մանուկ, թռչուն, ծափ:
2. Գետ, ծով, լեզու, տուն, անառ, հիւղ, տետր, ձոր:
3. Զագ, էշ, զէր, տաք, մարդ, սև, կարմիր:

ԾԱՆՕԹ. — Իասատուն նախ պէտք եղած բացատրութիւնները կուտայ նուազականներու մասին, և յետոյ կ'օգնէ աշակերտաց վերոյիշեալ հրահանգը ընելու համար:

37. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Կերպասավանտաին հետ

Պարոն, ի՞նչ կը փափաքիք : Մի քանի կերպաս գնել կ'ուզեմ, սակայն նախ օրինակները տեսնեմ : Ասանք չեմ ուզեր վասն զի իրենց տեսակը ստորին է : Դուք օրինակներուն մի՛ նայիք, անոնք աղտոտած են, այլ գոյնը ընտրեցէ՛ք և ես լաւագոյն տեսակէն ապրանք կը հանեմ : Այս կապոյտ գոյնը հաստատուն չէ : Եթէ կ'ուզէք կանանչէն առէ՛ք որ երբեք չի գունաւոր : Ես բաց գոյներ չեմ ուզեր, միժագոյն բաներ կ'ուզեմ : Սա մոխրագոյնը ի՞նչ գին ունի : Մէթրոյ՞՞վ կ'ուզէք թէ կանգունով : Ինչպէս որ սովորաբար կը ծախէք : Կանգունը եթէ 13 զրշ.ի տամ բան մը չեմ շահիր : Շատ սուղ է, այնքան արժէք չունի : Աւելի վար գինով չեմ կրնար տալ, որովհետեւ կը փաստեմ : Ասիկա բամբակեայ կ'էրեւի և ոչ բրդեայ : Կը սխալիք, անհող եղի՛ք, շատ լաւ ապրանք է : Զեր խօսքին վստահելով կը գնեմ :

ԲԱՌՈՒՐ. — Կերպասավանտ, գո՛ճալ սնդան. — Նախ, է՛վէլա. — Տեսակ, ճի՛նս. — Ստորին, ալաղը. — Ընտրել, այլը՛ճագ. — Լաւագոյն, է՛ն էյի. — Ապրանք, ճալ. — Հաստատուն, որայանբլը. — Գունաւոր, բէ՛նկի ադճատ. — Մոխրագոյն, ի՛ւլ բէ՛նկի. — Միժագոյն, գոյո՛ւ բէ՛նկ. — Սովորաբար, ալե՛սէվէյի. — Արժէք, գըյի՛ն. — Վստայ, զարար էրճէ՛տ. — Բամբակեայ, փաճոգո՛գոսն. — Բրդեայ, է՛նսո՛ւն. — Սխալիլ, էանը՛ճագ. — Անհող եղի՛ք, ճերագ էրճէյն. — Վստահիլ, էճնէյէր էրճէ՛տ :

37. ՀՐԱՀԱՆԳ

Հոլովեցի՛ք հետեւեալ բառերը .

Արտ, քաղաք, որոտում, գեղեցկութիւն, լեռ, սեղանատուն :

38. ՅՈՐԵՆԻ ՀԱՍԿԵՐԸ

Օճնիկ որ մը հօրը հետ դաշտը ելաւ : Իր հայրը հօգազործ էր և կը նայէր թէ ցորենները հասունցե՞ր են : Օճնիկ ըսաւ . « Հայրիկ , աե՛ս , ցորենի բուններ կան որ ծուած են և կան որ չիփշտակ բարձր կը կենան . կ'երեւի թէ այն բունները որ շիտակ չեն լաւ հասկեր չունին : »

Հայրը շուտ մը երկու հասկ կտարեց և իր որդւոյն ցոյց տալով ըսաւ . « Նայէ՛ , զաւակս , այս հասկն օր համեատութեամբ գլուխ կը ծռէր , ցորենի հատիկներով լեցուն է , և ընդհակառակն ան որ շիտակ կը կենայ պարապ է : Մարդիկ ալ այսպէս են . անոնք որ ազէտ են գոռոզութեամբ կը պարծին և բարձր կենալ կ'ուզեն , իսկ գիտուն մարդիկ համեատութեամբ կը զգուշանան պարծենալէ : »

ԲԱՆՍԻՐ. — Հասկ , պալագ . — Հողագործ , լէֆրճի . — Հատունալ , էէրէլէտ , օլմագ . — Բուն , ֆիսան սափը . — Շիփ շիտակ , փօփօզրո . — Որդի , էվլաթ . — Համեստութիւն , Տակ-ճոպլըտ . — Հատիկ , հասպէ . — Գոռոզութիւն , էրդերլէտ . — Զգուշանալ , սագընճատ :

ՄԱՆՕԹ. — Շիփշիտակ , կըսկոտ , կասկարմիր , այս տեսակ զանազան վարժութիւններ ընել տալ աշակերտաց և բացատրել անոնց նշանակութիւնը :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Օճնիկ ի՞նչ կը հարցնէր հօրը . — Անիկա ի՞նչ պատասխան տուաւ . — Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

39. ՀՐԱ ՀԱՆԳ

Ի՞նչպէս կ'ըլլայ .

Մովուն ջուրը , լեռը , հորը , կապարը , ասեղը , ձիւնը , շունը , վարդը , բամպակը , ապակին , երկինքը , շաքարը , քարը , գիւրը , ամառը , ձմեռը , քացախը , պղպեղը :

ՕՐԻՆԱԿ. — Մովուն ջուրը աղի կ'ըլլայ :

39. ՄԱՄՈՒԿՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Օր մը մամուկը շերամին հետ խօսքի բռնուեցաւ : Մամուկը ըսաւ . « Ի՞նչ է այս իմ քայածս մարդոց ձեռքէն , իմ տունս աղուոր կը շինեմ , և մարդիկ աւելը կ'առնեն ու բոլոր շինածս կ'աւրեն , ի՞նչ խենթ ու անգութ են : Հապա դո՛ւն , Շերամ , որ զզուելի միջատ մըն ես , դո՛ւն միայն սիրելի ես անոնց , քու շինածդ խնամքով կը ժողվեն և կը պահեն , թէեւ իմ շինածս աւելի հաստ է : »

Շերամը պատասխանեց . « Կ'աղաչեմ , այդչափ մի բարկանար . ամէն մարդ գիտէ որ շատ ճարպիկ շինող ես , ամէն մարդ կը խոստովանի որ շատ նուրբ թելերով կը հիւսես ոստայնդ , բայց ինձ ըսէ՛ , ի՞նչ օգուտ ունի , մինչդեռ իմ շինած թելերս ամէն տեղ օգտակար և յարգի են : »

ԲԱՌԾԻ . — Մամուկ , Էօրեւնէի . — Շերամ , Իփէտ պէօճէյի . — Սօսքի բռնուիլ , լաֆըրպը յա Ռոտորուլմաֆ . Աւել , սիֆիթի . Անգութ . Դերհամեդսիլ . Միլատ ; պէօճէի . — Խնամք , իհրիմաճ , պեֆադ , Բարկանայ , խրրայանմաֆ . — Ծարպիկ , իլիւզար . Սոստովանիլ , իրիթաֆ էրմէի . Կուրբ , ինճէ . Սոտայն , Էօրեւնէի աղը .

ՀԱՐՑԱՐԱՆ . — Ի՞նչպէս կենդանիներ են մամուկը և շերամը . — Մամուկը ինչո՞ւ կը գանգատէր և ի՞նչ կ'ըսէր . — Շերամը ի՞նչ պատասխան տուաւ . — Ո՞վ իրաւունք ունէր . — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը :

39. Հ Ր Ա Հ Ա Ն Վ

Ի՞նչ բան կրնայ ըլլալ .

Ճերմակ , սև , թափանցիկ , սուր , բութ , ծանր , կակուղ , կանանչ , լեզի , անուշ , փոքր , նեղ , երկայն , կապոյտ , ազի , տաք , պաղ , կոյր , գեղեցիկ , հեղուկ , կարծր , թանձր , սահուն , խակ , հասուն , եռանկիւնածեւ , քառակուսի , ուղիղ , սխալ , լուսաւոր , մութ , պայծառ , խոր , րնդարձակ , անսահման , անհանոյ , դաշնակաւոր , կպչուն , զիւրավառ , անտեսանելի :

ՕՐԻՆԱԿ . — Զիւնը , կաթը , շապիկը , ալիւրը ձերմակ են :

40. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ (Շար.)

ԵԶԱԿԻ		ՅՈՒՔՆԱԿԻ	
Ո.	Ամառ	Եազ	Ամառներ
Ս.	Ամառուան	Եազրն	Եազլարն
Տ.	Ամառուան	Եազա	Ամառներու
Հ.	Ամառ	Եազր	Եազլար
Բ.	Ամառուընէ	Եազսան	Ամառներէ
Գ.	Ամառով	Եազրլա	Ամառներով
			Եազլարա
			Եազլարն
			Եազլարա
			Եազլար
			Եազլարսան
			Եազլարլա

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք.

Զմռ, երէկ, ցորեկ, գիշեր, հիմակ, իրիկուն, վաշը
Էայն:

41. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Հուկիր)

Ճերմակ, պղտիկ մէկ տակառ.

Մէջն ուտելիք օգտակար.

Տակառս թէեւ դուռ չունի,

Բայց տուն մըն է թռչունի:

39. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ինչ բաներու մասերը կը կազմեն հետեւեալները.

Գլուխ, տանիք, թաղ, ճիւղ, բարձ (գլխու), բանալի,
Ժամ, մատ, ներբան, օր, սանդուղ, լողակ, էջ, վայրկեան,
արմուկ, դեկ, անիւ, պայտ, կտուց, ճանկ:

ՕՐԻՆԱԿ. — Գլուխը մարմնոյն մէկ մասն է:

42. Շ Ե Ի Կ Ը

Շնիկս իմ սիրուն
Ի՞նչ աղուոր ես դուն ,
Ի՞նչ դանդուր վարսեր՝
Գլխէդ են կախուեր :
Երբ ուրախ ըլլամ ,
Ու խընդամ խաղամ ,
Ինձի հետ դուն ալ
Կը սիրես խաղալ :
Իսկ երբ սաստեն զիս ,
Ու ցաւի հոգիս ,
Դուն ալ ինձի պէս
Արցունք կը թափես :

ԲԱՌԵՐ. — Գանդուր , գլխէր . — Վարս , սաղ . — Սաստել ,
սաղարւամախ :

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի սոսնաւորը զոց սորվեցէ՛ք և բարձ-
րաձայն արտասանեցէ՛ք :

31. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Պասսախանել հետեւեալ հարցումներուն .

Ի՞նչ կը տեսնէք երկնքին վրայ :

Ի՞նչ կը տեսնէք ծովուն վրայ :

Ի՞նչ կը տեսնէք պարտէզներուն մէջ :

Ի՞նչ կը տեսնէք քաղաքին մէջ :

Ի՞նչ կը տեսնէք գիւղին մէջ :

Ի՞նչ կը տեսնէք եկեղեցիին մէջ :

ՕՐՐՆԱԿ. — Երկնքին վրայ կը տեսնեմ ամպ , արեգակ ,
լուսին , լուսաւորներ , կայծակ , ծիրանեղօտի :

43. Զ Բ Ո Ւ 8 Ա Տ Բ Ո Ւ Յ Ի Ի Ն

Դպրոց

Ինչո՞ւ այսօր կ'աճապարէք: Դպրոց կ'երթամ, վասն զի հիմայ զանգակը պիտի զարնուի: Փամը քանի՞ին կ'սկսին դասերը: Կարծեմ թէ տակաւին գտատուները եկած չեն: Անոնք մենէ առաջ կուգան: Քանի՞ ուսանող կայ դպրոցին մէջ: Հարիւր արտաքին և ութսուն գիշերօթիկ: Դպրոցը քանի՞ կարգ ունի: Մեր վարժարանը երկու նախապատրաստական և չորս բարձրագոյն կարգեր ունի: Տնօրէնը ո՞վ է: Հիմնադիրը տնօրէն ալ է: Ձեր տարեկան քննութիւնը ե՞րբ է: Քանի՞ ամիս արձակուրդ ունիք: Վկայագիրները ե՞րբ կը տրուին: Դպրոցը տարին քանի՞ չրջանաւարտ կ'արձակէ: Օրը քանի՞ ժամ դաս կ'աւանդուի: Յառաջգիմութիւն կը մաղթեմ:

ՔԱՆՑԵՐ. — Աճապարել, ասէլէ երժէտ. — Չանգակ, լաս. — Տակաւին, րահա. — Ուսանող, լալիրո, լուէպէ. Արտաքին, նիհարէ, էքմարի-դլէ. — Գիշերօթիկ, լէյլէ, էէճէլէ. — Նախապատրաստական, իրոտի. — Բարձրագոյն, պալա, պէօյէտ. — Տնօրէն, իրօր. — Հիմնադիր, ճո-էսի. — Քննութիւն, իճրիհան. — Արձակուրդ, դպլիէ. — Վկայագիր, լահապիդնաթ. — Շրջանաւարտ, ինդիէհի. — Դաս աւանդել, պիրս զիբէտ. — Յառաջգիմութիւն, դերապիլ. — Մաղթել, արզո- երժէտ:

ՅԵ. Հ Բ Ս. Հ Ս. Ն Գ

Սորվեցի՛ք հետեւեալ կենդանիներուն ձայները.

Ոչխարը կը մայէ: Էջը կը զնայ: Կատուն կը մլաւէ: Ձին կը խինջէ: Շունը կը հայէ: Խոզը կը խանջէ: Այծը կը պարպայէ: Թութակը կը թոթովէ: Կովը կը բառայէ: Առիւծը կը մռնայէ: Գայլը կ'ոռնայ: Ծնճղուկը կը ճճուէ: Աղաւնին կը մնջէ: Սոխակը կը գեղգեղէ: Օձը կը սուլէ:

44. Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարունը կը յաջորդէ ձմրան: Գարնան մէջ արեւը օրէ օր աւելի տաքութիւն կը սփռէ: Անիկա կանուխ կը ծագի և ուշ մարը կը մտնէ, անոր համար ցորեկները կ'երկննան և գիշերները կը կարճնան:

Զիւնը ու սառույցը կը հալին: Արեւուն ճառագայթները մինչեւ հողին մէջ թափանցելով՝ ձմեռը քնացող բոյսերը կ'արթնցնեն: Զիւնածաղիկը գարնան գալուստը կը ծանուցանէ: Զատկածաղիկը ու մանուշակն ալ իրենց սիրուն գլուխները հողէն դուրս կը հանեն:

Մառերն ու թուփերը կ'սկսին բողբոջներ, տերեւներ ու ծաղիկներ երեւան բերել: Մարգագետինները կանանչով կը ծածկուին:

Արտոյտը, արագիլը, սոխակը, ծիծեռնակը և ուրիշ գաղթող թռչուններ կը վերագառնան մեզի:

Ողնին իր ձմրան քունէն կ'արթննայ: Մեղունները կը թռչին մեզը հաւաքելու: Եւ թիթեռնիկները իրենց օդային պարը կը պարեն:

28. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կ'ընեն.

Խոհանոցին մէջ, մառանին, սեղանատան, ննջասենեկին, հիւրանոցին, վաճառատան, դպրոցին, եկեղեցիին, հիւանդանոցին, դեղարանին, գրասենեակին, թատրոնին, լուսցարանին, ընթերցատան, պարահանդէսին, տպարանին, դասարանին մէջ:

ՕՐԻՆԱԿ. — Խոհանոցին մէջ խոհարարը զանազան կերակուրներ կ'եփէ:

Հովիւը իր հօտը արօտավայրը կ'առաջնորդէ: Երկ-
րագործը իր արտը կը մշակէ: Գարտիկզպանը կը փորէ
պարտէզը. հոն կը ցանէ, կը տնկէ ծաղիկներ և ուրիշ
բոյսեր: Տղաքներ կը խաղան բաց օդին մէջ:

Տարուան չորս եղանակներուն մէջ ամենազեղեցիկն
է գարունը որ երեք ամիս կը տեւէ. այսինքն, Մարտ,
Ապրիլ, Մայիս:

ԲԱՌՆԻՐ.— Գարուն, ի՛՛ք պահար. — Յաջորդել, արգա-
սընքան կէ՛լճէք, դաճիլ էր՛ճէք. — Սիտել, սասճագ, րադըր-
ճագ. — Մագիլ, րօղճագ. Սառոյց, րօն. — Հալիլ, էրիճէք. —
Թափանցել, իննքէն կէ՛լճէք. — Արթնցնել, ույանարճագ. —
Ձիւնածաղիկ, գար լիւնի. — Չատկածաղիկ, փոսկալեա լիւնի.
— Բողբոջ, ֆիլիգ; — Երեւան բերել, ճէյրանա կէ՛րիքճէք. —
Արտոյտ, շայր գոլոլ. — Գաղթող, հիճրէլէ էրէն. Ողնի,
տիֆրէ. — Հաւաքել, լեփլճագ. — Թիթեռնիկ, տիֆէնէք. —
Գար, օյոն, բագո. — Առաջնորդել, էօնիւնէ րիւլճէք. —
Մշակել, արայլի էլիճէք. — Փորել, գաղճագ. — Տանել, էրճէք.
— Տնկել, րիճէք. — Եղանակ, ճէլլիճ. — Ամենազեղեցիկ,
էն կէլգէլ:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Նկարագրեցէ՛ք գարունը և ըսէ՛ք թէ
ինչէ՛ր կ'ըլլան այս եղանակին մէջ. — Գանի՛ ամիս կը տեւէ
գարունը:

ԾԱՆՕԹ. — Ամենազեղեցիկ, ամենազեղ, ամենասիրուն,
և այլն, գերադրական ձեւերուն վրայ վարժութիւններ ընել
առլ աշակերտաց:

ՅԳ. ՀՐԾ Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն մէկ մէկ հոմանիս գտէ՛ք.

Մեծ, պզտիկ, մութ, տկար, հանդարտ, աղքատ,
փայլիլ, մրրիկ, մակոյկ, երկչոտ, հաւաքել, թուր, ստոյգ,
տիղմ, մաքրել, հազուստ, ըմպելիք, վառարան:

45. Ա Ռ Ա Մ Ն Ե Ր

1. Մուլութիւնն ու անգործութիւնը աղքատութեան դուռներն են :
2. Մարդս չի գիտցածը հարցնելու համար պէտք չէ առնալէ :
3. Ամէն տեսակ վէճ և կռիւ վաղուան թո՛ղ, և շահով կ'ազատիս :
4. Տգիտութիւնը ամօթ չէ, ազէտ մնայն է ամօթ: Գիրք կարդա՛, ուսի՛ր և ազէտ մի՛ մնար :
5. Բարի ընկեր մը մարդուս մեծ զանձ է :
6. Գէշ խօսքերը սուր զանակէն աւելի սիրտ կը ջարջենն :
7. Ռ՛վ որ քիչով գո՛հ կ'ըլլայ, ան երջանիկ կը համարուի :
8. Չի ճանչցած մարդուզ հետ ընտանեբար մի՛ վարուիր :
9. Աւելորդ բան ծախու առնողը շուտով պէտք եղածը կը վաճառէ :
10. Պատիւը ամէն հարստութենէ մեծ է :

ՌԱՍՄԲ. — Առած, քարոյր Տէսէլ. — Անգործութիւն, իշտեղիւտ. — Վէճ, կռիւ, նիպա, գովկա. — Ուսանիլ, էօյրէնճէտ. — Գանձ, փէֆինէ. — Գո՛հ, Տէնոան. — Համարուիլ, ապօր—նմադ, սայլմադ. — Ընտանեբար, դէտիճիտիլ. — Աւելորդ, արդէլ. — Վաճառել, սարճադ :

ՄԱՆՕԹ. — 1. Դասատուն պէտք եղած բացատրութիւնները թող տայ այս առածներուն նկատմամբ :
 2. Աշակերտները պէտք է ի բերան ուսանին այս առածները :

25. Հ Ր Ա Հ Ա Ն Դ

Ինչ բաներով կ'ընեն հետեւեալ գործողութիւնները.
 Կնքել, խարաղանել, սուլել, անառել, ազել, ամիլել, կտպել, սահիլ, աւելել, քերել, կարել, հաւաքել, արդկել, կարել, գծագրել, կշռել, չափել, վառել, ծխել, տաքցնել, թրլել, հերկել, քաղել :
ՕՐԻՆԱԿ. — Կնիքով կը կնքեն :

46. ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Հովր կ'ըսէ մեզմօրէն ,
 «Գարուն եկած է նորէն : »
 Թռչուն, ծաղիկ և ժիր առու
 Կ'աւետեն այս լուրն իրարու .
 «Գարուն եկած է նորէն : »

Տե՛ս, նա ի՛նչպէս դաշտին վրայ
 Նոր հարսի պէս կ'երերայ .
 Դաշտ և անտառ, ձորեր, լեռներ
 Ուրախութեան պար են բռներ,
 «Գարուն եկած է նորէն : »

Ձորէն, սարէն, բլուրէն
 Բիւր ծաղիկներ կը բուրեն .
 Օ՛հ, ընկերներ՛ ր, մենք ալ երթա՛նք .
 Միացընե՛նք երգ ու մաղթանք .
 «Գարուն եկած է նորէն : »

ԲԱՌՆՐ.— Մեղմօրէն Եսփաղմեք . — Առու, ագան սա, շայ . — Աւետել, Գիւրի վերջէ . — Ձոր, Գիւր . — Սար, Գիւր . — Բլուր, Գիւր . — Օ՛հ, Գիւր (սայրը) . — Բուրել, Գիւր . — Օ՛հ, Գիւր . — Միացնել, Գիւր . — Մաղթանք, Գիւր :

ՊԱՅՈՒՆԻՐ. — Վերի ոտանաւորը գօց սորվեցէ՛ք և բարձրածայն արտասանեցէ՛ք :

36. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ բառերը արական են, իգականները գրեցե՛ք .

Հայր, եղբայր, մանչ, հօրեղբայր, կնքահայր, փեսայ, աներ, քեռի, իշխան, պարոն, պապ, ծառայ, վարժապետ, այր, դրացի, դերձակ, Արշակ, տազր :

ՕՐԻՆԱՆ.— Հայր—մայր, եղբայր—քոյր, և այլն :

47. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ (Շար.)

ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ	
Ո. Հայր	Փեփք	Հայրեր	Փեփքլեր
Ս. Հօր	Փեփքրին	Հայրերու	Փեփքլերին
Տ. Հօր	Փեփքրի	Հայրերու	Փեփքլերի
Հ. Հայր	Փեփքրի	Հայրեր	Փեփքլերի
Բ. Հօրմէ	Փեփքրեան	Հայրերէ	Փեփքլերեան
Գ. Հօրմով	Փեփքրիլի	Հայրերով	Փեփքլերիլի

Վ.Ա.Բ.Ժ. — Հայրին պէս հողովեցէ՛ք մայր, եղբայր և այլն ։

48. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Արտ.)

Չորս ուղք ունի, մէկ կոնակ,
 Բայց ոչ գլուխ, ոչ բերան,
 Վըրան նստիլ դուք կրնաք .
 Թէեւ քալել չուզեր ան ։

37. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Առաջին բառերը սեռական ընել եւ նոյն բառերով խօսեմ կազմել .

Նաւ կայմերը. — Տուն ապակիները. — Երկինք լուսաւոր-
 ները. — Աշակերտ պարտականութիւնները. — Վարժապետ
 պատուէրները. — Մով ջուրը. — Օր ժամերը. — Չմու օդը. —
 — Ամառ օրերը. — Լեռ գագաթը. — Մառեր ճիւղերը. —
 Տղաք քունը. — Մարդիկ բնակարանները. — Մնողք սէր. —
 Գետեր ջուրը. — Մուլութիւն վախճանը ։

ՕՐԻՆԱԿ. — Նաւուն կայմերը երկայն են ։

49. ԸՆԿՈՅՁ ԵՒ ԴԴՈՒՄ

Ամառուան օր մը գիւղացի մը ընկուզենիի մը շուքին տակ կը հանգէր : Վեր նայելով տեսաւ որ ծառը ընկուզներով ծածկուած էր : Ընկուզենիին քով բուսած էր գգումի բարակ ցօղուն մը, որ ծառն ի վեր մագրւցեր էր, և որմէ կախուած էին ահագին գգումներ : Գիւղացին քիթին տակէն խնդաց ու ըսաւ : «Ճիտակը եթէ աշխարհ, ես ստեղծած ըլլայի, փոխանակ այս մեծ ծառին փոքր պտուղներ և այս բարակ ցօղունին խոշոր պտուղներ տալու, գգումը ընկուզենիին վրայ կը բուսցնէի և ընկոյզը գգումի ցօղունին վրայ :» Այն միջոցին վերէն ընկոյզ մը էյնալով գիւղացիին քիթին զարկաւ և արիւնեց : Այն ատեն գիւղացին գոչեց . «Մեղայ Աստուած, որ բրածիգ չի հաւնեցայ, եթէ վերէն ինկածը գգում մը ըլլար, գլուխս պիտի ջախջախէր :»

ՌԱՌԵՐ. — Իդում, գապագ. — Հանգչիլ, բահադ էդմէտ. — Մածկուած, էօրդիւլիլ. — Մագրցիլ, խրճալանմագ. — Ահագին, դայէր պէսյիւտ. — Ստեղծել, էտրարմագ. — Նոյն միջոցին, օ էանարէ. Արիւնել, գանադմագ. — Գոչել, պողորմագ. — Մեկնայ, դէօպէ. — Հաւնիլ, պէյէնմէտ. — Զախջախել, էդմէտ, գրրմագ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գիւղացին ո՛ւր հանգչած էր : — Ի՞նչ տեսաւ և ի՞նչ դիտողութիւն բրաւ. — Ի՞նչ պատահեցաւ յետոյ. — Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

50. ՀՐԱ ՀԱՆԴ

Ի՞նչ հոլով են հետեւեալ բառերը .

Ծառերէն, տուներուն, գետը, առիւծներ, եղջիւրներէն, կաւիճով, ծիրանիլ, բնութեան, Աստուծոյ, սիրոյ, քեզի, սրտէ, ծաղիկները, ձեռքով, գլխու, ձմեռ, հարցման, ալիւրի, օրուան, հօր, եղբոր, ուրախութեամբ :

50. Ա Մ Ա Ռ

Գարունէն ետքը կու գայ ամառը : Արեւը կանախ կը ծագի և տաքի ուչ մարը կը մտնէ : Անոր տաքութիւնը երթալով կը սաստկանայ , մանաւանդ կէս օրուան պահան :

Ամառը մեր սեղանը կը զարդարէ զանազան պտուղներով : Անիկա պարանջին մէջ կը հասունցնէ կեռանները , տխին ու ձմերուկը կայլն : Ամրան ծաղիկներէն մանաւանդ վարդը, մեխակը մեզի ուրախութիւն կը պատճառեն : Թռչունները թխսերը ընցուցած են , սննդը ժիրաժիր հոս հոն կը թռչտին , իրենց ձագուկներուն կեր ճարելու համար :

Թոռը մարգագետնին վրայ օրէ օր կը բարձրանայ : Մշակը իր մանգաղը կը սրէ, զանի կը քաղէ , կը չորցնէ ու մարապը կը կրէ : Յորենին ու գարիին հասկերը կը դեղնին , հատիկները կը հասուննան , երկրագործն իր ծառաներուն հետ գալով զանոնք կը հնձէ :

Ամառը երեք ամիս կը տեւէ . Յունիս , Յուլիս , Օգոստոս :

ՐԱՌԾՐ. — Սաստկանալ , +էսկինլենճէ + , յիպոէդլենճէ + . — Մանաւանդ , պտիոսոս . — Զարդարել , ասոսոսմադ . — Թխսել , ֆօլջիլայս օսոսմադ . — Ժիրաժիր , լէլլէ + . — Թռչտիլ , Էօրէ պէրի ոսմադ . — Ծարել , դեպարի + էրճէ + . — Մանգաղ , օրադ . — Սրել , պիլլէճէ + . — Մարագ , օր ամպարը :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք ամառը . — Ըսէ՛ք թէ ինչն էր կ'ըլլան այդ եղանակին մէջ . — Ամառը քանի՞ ամիս կը տեւէ :

59. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հոլովը նոյն պահելով յոգնակիի փոխեցիք հետեւեալ բառերը .

Դիրքը , կապիկին , գրիչով , հոլովման , ասն , հօր , եղբօր , սեղանէն , լուսով , սիրոյ , գեղեցկութենէ , հիւանդութեան , սեղանի , ոտք , ամառուան , ամսուան , ձեռն , փայտով , քրոջ :

51. Զ Ր ՈՒ Ց Ա Տ Ր ՈՒ Յ Ի Ն

Բժիշկին հետ

Ի՞նչ ունիք տեսնեմ: Գիչ մը տկար կ'զգամ կոր ինքզինքս: Ի՞նչ բանէ կը նեղուիք կոր: Դող կ'զգամ կոր: Երբեմն ալ տենդ կ'ունենամ: Կուրծքերնուդ ալ անհանգստութիւն կ'զգամք: Ո՛չ, բայց ստամոքսս անհանգիստ է բոլորովին ու կերածս բնաւ չեմ կրնար մարսել: Կողերս այն աստիճան կը ցաւին որ շունչ չեմ կրնար առնել: Կ'երեւի թէ շատ պաղ առեր էք: Քանի՞ օր է որ այդ վիճակը ունիք: Շարաթէ մը ի վեր: Բազմ կերակնիդ նայիմ անգամ մը: Լեզունիդ տեսնեմ: Անգամ մը հազացէ՛ք: Շունչ առէ՛ք: Վրանիդ մարելիք կու գա՞յ երբեմն: Սրտերնիդ կը խառնուի՞: Ախորժակ ունի՞ք: Հիմայ ձեզի դեղագիր մը պիտի գրեմ և այս դեղերով քիչ ատենէն՝ պիտի ապաքինիք:

ԲԱՌԵՐ. — Տկար, գո-վերսիդ, հաստս. — Չգալ, հիստ էրձե՛տ. — Սաստիկ, +եակի՛ն. — Երբեմն, պաղը. — Տենդ, ըսողմս. — Անհանգստութիւն, բահողորդը՛ք. — Ստամոքս, մոխ. — Մարսել, հազմ էրձե՛տ. — Կող, գապո-րդս. — Բազմ կերակ, նապղ. — Մարելիք, պայղընը՛ք. — Խառնուիլ, պոլաննագ. — Ախորժակ, իլդահ. — Իեղագիր, ըէլեդս. — Ապաքինիլ, էյէ օլմագ:

40. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ըսե՛ք թէ ի՞նչպէս կրնայ ըլլալ.

Աշակերտ մը, տուն մը, ծով մը, հազուստ մը, պարտէզ մը, երկինքը, դանակ մը:

ՕՐԻՆԱՆ. — Աշակերտ մը կրնայ ըլլալ աշխատասէր, ծոյլ, յառաջացէ՛մ, հնազանդ, բարի և այլն:

52. Մ Ե Ր Պ Է Տ Ք Ե Ր Ը

Երեք տեսակ պէտքեր ունինք . սնունդ , զգեստ , տուն :

Ամէն մարդ սնունդի պէտք ունի . առանց սնունդի չենք կրնար ապրիլ :

Օրը չորս անգամ սնունդ կ'առնենք . առաւօտուն՝ նախաճաշ , կէս օրին՝ ճաշ , երեկոյին՝ նախընթրիք , գիշերը՝ ընթրիք :

Մեր սնունդներն են հաց , միս , հաւկիթ , իւղ , բանջարեղէն , մեղր , պանիր , շոքոլա , պտուղներ : Մնունդ են նաև շուրը , գինին , սուրճը և թէյը :

Զգեստներ ալ պէտք են մեզ : Առանց զգեստի պիտի մսինք՝ և կամ տաքէն ու հովէն պիտի նեղուինք :

Տուն մըն ալ պէտք է մեզ ընակելու համար : Հոն կ'ապաստանինք ու հանգիստ կը վայելենք հովին , արեւին , տաքին և ցուրտին դէմ :

ԲԱՌԵՐ. — Գէտք , իհդեյաճ . — Մնունդ , եկե՛ճէ՛ք . — Ապաստանիլ , սըղընճադ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Մարդ ի՞նչ բաներու պէտք ունի : Ի՞նչ բաներ սնունդ են : Օրուան չորս ճաշերուն մասնաւոր անունները տուէ՛ք : Տուն մը ի՞նչ մասեր կ'ունենայ :

41. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գտնել հետեւեալ բառերուն ներհակը .

Թաց , բարի , մեծ , բարձր , տաք , մօտ , երկայն , գեղեցիկ , ուշ , առտու , մութ , ամառ , կուչտ , լեցուն , հարուստ , ուրախ , ծանր , գոցել , նեղ , սուտ , խօսիլ , ցերեկ , բարակ , կարծր , կապել , լալ , ապրիլ , իյնալ , սկսիլ , գտնել :

ՕՐԻՆՍԱ. — Թաց — չոր . բարի — չար :

53. Մ Ա Ռ

Ծառը տունկ մըն է զոր Աստուած կը բուսցնէ երկրէն : Անիկա կը բաղկանայ արմատէ , բունէ , ցողունէ և պսակէ : Արմատը հողին մէջ կը գտնուի , և սնունդ կը զրկէ ծառին : Բունը ծառին մարմինն է , բոլորտիքը կեղեւով պատած : Պսակը կը բաղկանայ շատ մը ոստերէ և ճիւղերէ : Ճիւղերէն կը կախուին տերեւները , ծաղիկները ու պտուղները : Եղեւինը տերեւի տեղ կանանչ ասեղներ ունի :

Ծառերը կը գտնուին պարտէզներու մէջ , ճամբաներուն եզերքները և անտառներու մէջ : Շատ մը ծառեր պտուղ կու տան , ասոր համար պտղատու ծառ կը կոչուին :

Ծառերը մեզի օգտակար են իրենց փայտովը , զոր կը վառենք : Փայտը կը գործածուի շէնքեր , նաւեր , տան կարասիներ ու զանազան գործիքներ շինելու :

ԱՍՌԵՐ. — Տունկ , նէպար . — Բաղկանալ , իպրեդ օլմագ . — Պսակ , աղաճըն ի-սդ Ռարաֆը . — Կեղեւ , գադդ-գ . — Ոստ , ճիւղ , սալ . — Եղեւին , յամ . — Պտղատու , ձեյլէ վերէն . — Շէնք , պինս . — Տան կարասի , էլ էլէտար . — Գործիք , էլտդ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ըսէ՛ք թէ ծառ մը ի՞նչ մասեր կ'ունենայ : Բանի՞ տեսակ ծառի անուն գիտէ՞ք : Պտղատու ծառերը որո՞նք են : Ծառերը մեզի ի՞նչ օգտակարութիւն ունին :

48. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեփեւեալ հարցումներուն պատասխանեցէ՛ք .

Ի՞նչ է գրասեղանը , կօշիկը , առիւծը , շագանակը , ջուրը , գինին , սեղանը , պնակը , դգալը , նաւը , դարանը , ագաբակը , դերձակը , դատաւորը , քահանան , դեղձը , շողգամը , արմաւենին , ընկուզենին , ոտքը , ձեռքը , մարդը :

ՕՐԻՆՍԱԿ. — Գրասեղանը դպրոցի առարկայ մըն է :

54. **Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ** (Շարունակութիւն)

ԵԶՈՒԿԻ		ՅՈՒՔՆԱԿԻ	
Ո.	Աստուած	Ալլահ	} Չուհի }
Ս.	Աստուծոյ	Ալլահըն	
Տ.	Աստուծոյ	Ալլահա	
Հ.	Աստուած	Ալլահը	
Ք.	Աստուծմէ	Ալլահիսան	
Գ.	Աստուծմով	Ալլահըլա	

ԾԱՆՕԹ. — Հետեւեալ բառերուն հոլովումները սորվեցընել աշակերտներուն. —

Սեր, եզ, քոռ, դուռ, ճամբայ, փոյր, կիճ:

43. Հ Ր Ա Հ Յ Ն Գ

Կեանքուն սեղ յարմար բառեր դրե՛ք.

Արեւը... կը լուսաւորէ: Մայրը իր... կը գգուէ: Գրազը... կը հալեցնէ: Մազիկները... կը զարդարեն: Հրաբուզը ... կ'արձակէ: Զուկերը ... մէջ կ'ապրին: Հանքերը ... մէջ կը գտնուին: Հորթը ... ձագն է: Ոչխարին ձագին ... կ'ըսեն: Արեւին շողերուն ... կ'ըսեն: Զմեռը ... կը տեղայ: Երկիրը կը դառնայ ... շուրջը: Բժիշկը ... կը գարմանէ: Շերամը ... կը շինէ: Թռչունը ... մէջ կը թռչի:

55. ՆԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Հինգ զգայարանք ունինք, որոնցմով կ'զգանք ամէն բան: Ասոնք են Տեսանելիք, շնչելիք, հոտոտելիք, ճաշակելիք և շոշափելիք:

Տեսանելիքը երկու աչքերն են. անոնցմով կը տեսնենք ամէն բան մեր բոլորափքը:

Աչքին մասերն են սառնենին, ծիածանը, բիրը: Աչքը կը գոցեն երկու արտեւաններ. ասոնց եզերքը մազեր կան որոնք թարթիչ կը կոչուին:

Լսելիքը երկու ականջներն են. անոնցմով կը լսենք ամէն ձայն, խօսք, երգ:

44. ՀՐԱՀԱՆԳ

Ի՞նչ կ'ըսենք .

Աշխատութիւնը սիրողին, բան չգիտցողին, համբերութիւն չունեցողին, խօսք մտիկ չընողին, յանցանք գործողին, Աստուծոյ չվախցողին, աղէկութիւն ուզողին, գէշութիւն ուզողին, պարտքը ճանչցողին, պարտք ունեցողին, ձի հեծնողին, պատկեր գծողին, շատ լեզուներ գիտցողին, հաշիւ գիտցողին, նուազ ածողին, ուշադրութիւն չընողին, հոգ չընողին, հիւանդ պահողին, կրօնքը սիրողին, կարդալ սիրողին, կառք քաշողին:

ՕՐԻՆԱԿ. — Աշխատութիւնը սիրողին աշխատասէր կ'ըսեն:

Ականջին վրանը միայն դուրսէն կը տեսնուի, բայց ճայնը ականջին ծակէն ներս երթալով է որ կրնանք լսել :

Հոտոտելիքը քիթն է : Գիթին երկու ծակերը՝ ուռնագեր կ'ըսուին :

Ճաշակելիքը բերանն է . անով կ'զգանք համերը , նաեւ կերակուր կ'ուտենք , կը խօսինք :

Բերնին մասերն են երկու շուրթներ , ակուններէ ձեւացած երկու ծամելիք , լեզու և քիմք :

Համը կ'զգան լեզուն և քիմքը :

Շօշափելիքը ձեռքն է . անով կ'զգանք առարկայի մը տաք կամ պաղ , թաց կամ չոր , կարծր կամ կակուղ , ողորկ կամ դերբուկ ըլլալը : Ձեռքը շօշափելէ զատ ունելութեան ալ կը գործածենք . անով կը բռնենք ինչ որ ուզենք : Ձեռքին մասերն են մատները :

ԲԱՌԵՐ. — Ձգայարանք, հիսս. — Տեսանելիք, կէօրձէտ հիսսի. — Լսելիք, էլիդձէտ հիսսի. — Հոտոտելիք, գօգլամագ հիսսի. — Ճաշակելիք, րոտր տլմագ հիսսի. — Շօշափելիք, էօգլամագ հիսսի. — Բոլորաիք, էլրրաֆ. — Սառնենի, կէօլէնն պէյաղը. — Բիր, կէօլ պէպէյէ. — Արտեւան, կէօլ գափաղը. — Թարթիչ, քիքիտ. — Վրան ականջի, գոլլաղըն րըլարրատի գըմը. — Ռուռագ, պոբոն պէլէյէ. — Շուրթ, րոբագ. — Ձեւացած, պիլմ տլմըլ, էափըմըլ. — Մամելիք, լէյէյէճէտ տտր, պիլէր. — Քիմք, րամաղ. — Ողորկ, րեպ. — Դերբուկ, գոմը. — Լալը. — Ունելութիւն, լոբդմագ հասսէտի :

ՀԱՐՑԱՐՑՆ. — Ըսէ՛ք թէ քանի՞ զգայարանք ունինք : Ի՞նչ է իւրաքանչիւր զգայարանքին անունը : Ի՞նչ մասեր ունին և ի՞նչ բանի կը գործածուին :

56. Զ Ր ՈՒ Ց Ա Տ Ր ՈՒ Յ Ի Ի Ն

Այցելութիւն

Դուռը կը զարնուի: Մէկը դուռը կը զարնէ: Իրան զանգակն է, նայեցէ՛ք ո՞վ է: Գնա՛ դուռը բաց: Ո՞վ եկաւ: Բարի եկաք: Հրամեցէ՛ք: Բարի տեսանք: Նըստեցէ՛ք, կ'աղաչեմ: Պարոնին աթոռ մը տուէ՛ք: Անտարակոյս այսօր հոս պիտի մնաք միասին ճաշելու: Ձեմ կրնար կենալ: Շնորհակալ եմ, ժամանակս չի ներեր, գործ ունիմ: Պէտք է որ իսկոյն մեկնիմ: Շատ ստիպեալ եմ երթալու: Ինչո՞ւ այդչափ կը փութաք: Մնաք բարեաւ: Երթաք բարեաւ: Կրկին տեսութիւն: Դուք ալ երբեմն մեզի հրամեցէ՛ք: Ամենայն դոհուութեամբ:

ԲԱՌԵՐ. — Այցելութիւն, գէյարէդ. — Բարի եկաք, հօշկէրնիլ. — Հրամեցէ՛ք, պոյսարոն. — Բարի տեսանք, հօշկէօրօթիտ. — Անտարակոյս, շեպհէսիլ. — Միասին, պերապէր. — Ժամանակս չի ներեր, լազդըմ միսայնոս փէյիլ. — Իսկոյն, հէմէն. — Մեկնիլ, կիդմէտ. — Ստիպեալ, մեճպոր. — Փութալ, աճէլէ կիդմէտ. — Մնաք բարեաւ, հօշնա գալըն. — Երթաք բարեաւ, րդոբըլար օլտոն. — Կրկին տեսութիւն, կենէ կէօրիլէլիմ. — Դոհութիւն, մեմոննէյէդ:

45. Հ Ր Ա Հ Ա Ն Պ

Հեհեւեալ բառերով վարի օրինակին պէս խօսեալ շի-նեցի՛ք:

Մայր, ուսուցիչ, դպրոց, դաս, ամառ, գիրք, ձի, դեռ, արտ, լեռ, ծառ, աւազան, երկինք, ծաղիկ:

ՕՐԻՆԱԿ.—Մայրս բարի է:

57. Ա Շ Ո Ւ Ն

Արեւն աչնան մէջ այնչափ չի բարձրանար որչափ ամրան մէջ: Գիշերները կ'երկննան, ցորեկները կը կարճընան և օդը ցրտանալ կ'սկսի:

Մառերուն տերեւները կը դեղնին ու կամաց կամաց գետին կը թափին: Մարգագետիններուն խոտը շատոնց հնձուած է: Տանձ, խնձոր, սերկեւիլ և ուրիշ պտուղներ ալ բոլորովին հասունցած ըլլալով՝ մարդիկ զանոնք կը ժողվեն: Մարդիկ մեծ ուրախութեամբ կը կատարեն այգեկութքը: Երկրագործը հունտեր կը ցանէ յաջորդ տարուան համար:

Արագիւնները, ծիծեռնակները, սոխակները ցուրտին չդիմանալով՝ մեզ կը թողուն ու տաք երկիրներ կ'երթան: Բայց ճնճղուկները մեզմէ բաժնուիլ չեն ուզեր:

46. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ խօսքերուն մէջ գիծերուն տեղ շեղագիր բառերուն ներհակը դրե՛ք.

Թէ՛ հարուստը և թէ՛ — , թէ՛ զօրաւորը և թէ — պիտի մեռնին օր մը: Բարի տղաքները պէտք է հեռու՛ ըլլան — ընկերներէ: Ան որ անկն ինչ գիտեմ կ'ըսէ — չգիտէ: Անմիտն ո՛չ խօսիչ գիտէ և ո՛չ — : Անձրեւը կը տեղայ թէ՛ ասդարիկն և թէ՛ — արտին վրայ: Մոռցի՛ր ինչ որ տուած ես և — ինչ որ ընդունած ես: Մարդ պարտի աշխատիլ իր երիտասարդութեան ատեն որ իրաւունք ունենայ հանգչելու իր — ատեն: Հիկ բարեկամը միշտ — գանձ մըն է: Այն որ աւելորդը կը գնէ, օր մը — պիտի ծախէ:

Պարտէզները իրենց գեղեցկութիւնը կորսնցուցած են: Դաշտերը, քամայացած են, և անտառներուն մէջ խոր լռութիւն մը կը տիրէ: Դուրսը ա՛լ մեծ ուրախութիւն մնացած չէ: Աշնան հովերը մեզի կ'ըսեն թէ ժամանակ է ձմրան համար փայտ, ածուխ, տաքուկ հանդերձներ և տեսակ տեսակ պաշար պատրաստելու:

Աշնան ամիսներն են՝ Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր:

ՐԱՌԾՐ.— Աշուն, սօն պահար. — Յրտանալ, սօղոմագ. — Իեղնիլ, սարարմագ. — Հնձուած, պելիւթիլ. — Հասունցած, էկրելիլ. — Կատարել, իճրա էրմէտ, էափմագ. — Այգեկութք, պալ պօղոմո. — Իմանալ, պայանմագ. — Բաժնուիլ, այրլլմագ. — Կորսնցնել, զայլ էրմէտ. — Ոտր, պէրին. — Տիրել, հիւտմ էրմէտ. — Հանդերձ, բոպա. — Պաշար, լիւպիմալ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք աշունը և ըսէ՛ք թէ ինչեր կ'ըլլան այդ եղանակին մէջ: Աշնան ամիսներն որո՞նք են:

47. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Սեփրոզ բառը բացառական ընելով խօսքեր կազմեցէ՛ք. Մառին պտուղները. մարդուն օձիքը. տունին պատուհանը. նուագին ձայնը. մեղուին մեղրը. արեւին տաքութիւնը. ծառին գազաթը. տունին սանդուղները. փողոցին մէջ. ծովուն վրայ. կանթեղին լոյսը. երախային թեւը. ծառին ճիւղը. պարտէզին պատը. գաւաթին ջուրը:

ՕՐԻՆՍԱԿ. — Մառին պտուղներէն ճաշակեցի:

58. ՀՈՒՆՆԵՐԻ ՄԻՍՈՐՈՇ ՅՕԴՈՎ

Ս. Գ. Ն կամ Ը

ԵԶԱԿԻ

ՅՈՒՔՆԱԿԻ

Ո. Պարտէզս	Պաննեմ	Պարտէզներս	Պաննէլերիմ
Ս. Պարտէզիս	Պաննեմիմ	Պարտէզներուս	Պաննէլերիմիմ
Տ. Պարտէզիս	Պաննեմի	Պարտէզներուս	Պաննէլերիմի
Հ. Պարտէզս	Պաննեմի	Պարտէզներս	Պաննէլերիմի
Բ. Պարտէզէս	Պաննեմսեմ	Պարտէզներէս	Պաննէլերիմսեմ
Գ. Պարտէզովս	Պաննեմիլի	Պարտէզներովս	Պաննէլերիմիլի

ԾԱՆՕԹ. — Դասատուն Դ և Ը գիմարոյ յօդերով ալ պարտէզ բառը հոլովել կը սորվեցնէ աշակերտներուն :

ՎԱՐԹ. — Ս. Գ. Ն գիրերով հոլովեցէք հետեւեալ բառերը :

Հայր , ծառ , տուն , բարկութիւն , նաւ :

59. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(ԽՅՃՈՐ)

Այտեր ունի կարմըրուկ ,
 Բայց մի' կարծեր զայն մանուկ .
 Զարդ է դարնան , ամարան
 Աշնան կ'երթայ նա մառան :

48. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ինչո՞վ կ'ընենք հետեւեալ գործողութիւնները .

Սղոցել , կտրել , կարել , աւել , խնկարկել , թրջել , խառազանել , կապել , նաւարկել , այրել , փորել , գծել , հագնիլ , հերկել , գամել , ծածկել , որսալ , օրել , ներկել , լուսաւորել :

ՕՐԻՆԱԿ. — Սղոցով կը սղոցեն :

60. ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌՆԵՐ

Օր մը երկու տակառ բարձր տեղէ մը վար գլորել
սկսան: Մէկը գինիով լեցուն էր, իսկ միւսը դատարկ:
Լեցուն տակառը հանդարտ հանդարտ գլորելով կը
քայլէր, իսկ դատարկը կը ցատքրտէր ճամբուն վրայ և
ահագին աղմուկ ու փողի կը հանէր:

Այսպէս է նաեւ խելքով լեցուն գլուխը որ լուռ
ու մունջ կ'աշխատի, կ'ուսանի, իմաստուն կ'ըլլայ և
ապրելու համար դժուարութիւն չի քաշեր. մինչդեռ
անխելքը՝ դատարկ տակառին պէս միայն աղմուկ կը
հանէ, և երբ մեծնայ, բանի մը օգտակար չըլլալով
ապրուստ չի կրնար ճարել:

ԲԱՌԵՐ.— Տակառ, ֆըլը. — Գլորիլ, Էո-վարլանճագ. —
Դատարկ, պօլ. — Հանդարտ, ուսլո, Էսվալ. — Ցատքրտել,
սըլըրճագ. — Աղմուկ, փողըրքը. — Փողի, դօզ. — Լուռ ու
մունջ, սոս. — Իմաստուն, ալիճ, աֆըլլը. — Դժուարութիւն,
զօրլո-գ. — Մինչդեռ անխելքը, աֆըլըլ Էսէ. — Ապրուստ,
կէլիճի:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք երկու տակառներուն պատ-
մութիւնը: Ըսէ՛ք թէ ինչի՞ նմանցուցած են այս տակառները:
Այս պատմութենէն ի՞նչ բան կը հետեցնէք:

49. ՀՐԱ ՀԱՆԳ

Ըսէ՛ք թէ՛

Ի՞նչ կը բռնանի հողէն: Ի՞նչ կ'ընեն եկեղեցիին մէջ:
Ի՞նչը կան ծովուն մէջ: Ի՞նչ կը քաղեն այգիէն: Ի՞նչ կը
տեղայ երկինքէն: Ի՞նչ կը հնձեն մանգաղով: Ի՞նչ կը բռնեն
ուռկանով: Ի՞նչով կը տաքնանք: Ի՞նչ բաներով կը ճամբոր-
դենք: Ի՞նչ բաներով կը շարժին մեքենաները:

61. ԱՌԻԻՄՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Օր մը անտառին մէջ քնացեր էր առիւծը : Քանի մը մուկեր սկսան խաղալ, և ատեն ատեն առիւծին վրայ ելլելով կը վազվզէին : Առիւծը անոնց ձայնէն արթնցաւ : Մուկերը փախան . մինակ մէկ հատը չի կրցաւ փախչիլ և առիւծին թաթին տակն ինկաւ :

Առիւծը այդ մուկը պիտի սպաննէր, բայց սա այնչափ աղաչեց որ առիւծը ազատ թողուց զայն : Այն ատեն երախտադէտ մուկը ըսաւ . «Ազնիւ առիւծ, կը յուսամ որ օրին մէկը առիթ մը պիտի ունենամ այդ բարութեանդ փոխարէնը հատուցանելու : »

Առիւծը խնդաց և չի հաւատաց որ ասանկ պզտիկ կենդանի մը պիտի կարենայ իրեն օգտակար ըլլալ :

Շատ ժամանակ չանցաւ առիւծը հաստ չուանով շինուած ցանցի մը մէջ ինկաւ : Քանի մը որսորդներ

50. ՀՐԱՀԱՆԳ

Ուղղեցի՛ք հետեւեալ խօսքերը .

• Երբ անօթի ըլլամ ջուր կը խմեմ, և երբ ծարաւ ըլլամ հաց կ'ուտեմ : Պանիրը խաղողէն կը շինեն և գինին՝ կաթէն : Զմեռը օդը տաք է, իսկ ամառը՝ ցուրտ : Վարժապետը կը պատժէ աշխատասէր տղան և կը վարձատրէ ծոյրը : Մարդիկ գիշերը կ'աշխատին և ցորեկը կը քնանան : Արեւը արեւմուտքէն կը ծագի և արեւելքէն մարը կը մտնէ : Երբ անկողինս մտնեմ հազուստներս կը հագնիմ : Առաւօտները տուն կը վերադառնամ իսկ գիշերները չուկայ կ'երթամ : Բնանալուն պէս պառկեցաւ : Պայծառ և լուսաւոր երկինքը մարդոց վրայ տխրութիւն կը սփռէ :

այս ցանցը սփռեր էին անտարին մէջ։ Առիծը պարապ տեղը աշխատեցաւ ցանցէն դուրս ելլելու և սկըսաւ կատաղարար մոնչել։

Պզտիկ մուկը անոր մոնչիւնը լսեց և չուտով օգնութեան վագեց։ Մուկը սկսաւ իր սուր ակռաներովը ցանցը կրծել, և երկար ատեն աշխատելէ ետք՝ յաջողեցաւ չուանը կտրել և առիծը ազատել։

Բարոյական.— Գիտցէ՛ք որ ամէնէն տկար բարեկամ մը իսկ կրնայ օր մը մեղ օգտակար ըլլալ։

ԲԱՆԾՐ. — Վազլզել, Գօլը—Ղոֆ, — Թաթ, փէնչէ. — Սպաննել, Էօլթի—Րժէր. — Երախտագէտ, Ֆիննէդարար. — Յուսալ, ումմաֆ. — Առիթ, ֆըրրաալ. — Փոխարէն, Գարըլըֆ. — Հատուցանել, պօրճո—նո—վէրժէր. — Հաւատալ, Էնանմաֆ. — Ցանց, աղ. — Սփռել, սէրժէր. — Կատաղարար, Գո—պո—րո—րօ—ճաւընա. — Օգնութիւն, Էարարժ. — Սուր, Դէսլէն. — Կրծել, կէթիթէր. — Յաջողիլ, Դո—աֆֆաֆ օլմաֆ. — Ազատել, Գո—րդարմաֆ։

ՀԱՐՑԱՐԱՆ.— Մուկերը ի՞նչ կ'ընէին երբ առիծը քնացած էր։ Այն ատեն ի՞նչ պատահեցաւ։ Բռնուած մուկը ի՞նչ ըսաւ առիծին։ Յետոյ ի՞նչ պատահեցաւ առիծին։ Մուկը ի՞նչ ըրաւ այն ատեն։ Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է։

ՃԼ. ՀՐԱ. ՀԱՆԳ

Ո՛ր կը բնակին.

Գիւղացիները, լեռնցիները, քաղաքացիները, կղզեցիները, Գաղղիացիները, Գերմանացիները, Ռուսերը, Ռուսմանացիները, Հնդկիները, Անգղիացիները, Չինացիները, Աբաբները, Գարսիկները, Ամերիկացիները, Յոյները, Եգիպտացիները, Կովկասցիները։

62. Չ Մ Ե Ռ

Ահա՛ ձմեռը եկաւ : Անիկա ամրան եղանակէն բո-
լորովին տարբեր է : Օդը ցուրտ է : Երկինք ամպերով
ծածկուած է և անձրեւի տեղ ձիւն կը տեղայ :

Մառերը իրենց կանանչ հագուստները կորսնցու-
ցած ըլլալով՝ ցրտէն կը դողան : Դուրսը ալ ծաղիկ չի
տեսնուիր . թռչունները այլեւս չեն երգեր : ամէն կողմ՝
ամայութիւն կը տիրէ :

Դաղթող թռչունները արդէն գացած են . մեզի
մօտ կը մնան միայն ագռաւը, ճնճղուկը և ուրիշ քանի
մը թռչուններ : Այս խեղճերը մեծ նեղութիւն պիտի
կրեն ամբողջ ձմեռը , եթէ բարի մարդիկ իրենց սե-
ղանէն աւելցած փշրանքներով չկերակրեն զանոնք :
Ընտանի կենդանիները աւելի երջանիկ են իրենց տա-
քուկ ակոտներուն մէջ : Անոնք ժամանակին կը ստանան
իրենց կերն ու ջուրը :

Ձմրան մէջ արեւը ուշ կը ծագի և կանուխ մայրը
կը մտնէ : Անոր համար օրերը կարճ են ու գիշերները
երկայն :

Ձմրան ամիսներն են՝ Դեկտեմբեր , Յունուար ,
Փետրուար :

ՐԱՌՆԵՐ. — Եղանակ , ձիւն . — Տարբեր , պաղտ . —
Դողալ , դիդիլիլիլ . — Ամայութիւն , Եւրոպայ . — Նեղու-
թիւն կրել , զօրութիւն չիլիլ . — Սեղան , սօֆրա . — Փշրանք ,
ոֆօֆ փարլար . — Կերակրել , եփիլ լիլիլ . — Ընտանի ,
ալլալ . — Կեր , եփի :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք ձմեռը և ըսէ՛ք թէ
ինչեր կ'ըլլան այս եղանակին մէջ : Որո՞նք են ձմրան ամիս-
ները :

63. Զ Բ ՈՒ Ց Ա Տ Բ ՈՒ Յ Ի Ի Ն

Մասվաճա՛ւ, քիչ մը միս կու տա՞ք ինձի: Ի՞նչ միս կ'ուզէք: Ո՞ր կողմէն կ'ուզէք որ տամ: Այս կտորը կ'ուզէ՞ք: Ծարպո՞տ ըլլայ թէ առանց ճարպի: Ոչխարի միս կ'ուզեմ: Բայց պէտք է որ արու ըլլայ: Գառնուկի միս չեմ ուզեր: Հորթի միսէն տուէ՞ք: Այծի միսը տակաւին չուտուիր: Կուրծքի կողմէն կտրեցէ՞ք: Վիզէն չեմ ուզեր: Քիչ մըն ալ ազդրին կողմէն տուէ՞ք: Այդ մասը շատ սակրոտ է. խորոված շինելու յարմար չէ: Տեսնեմ քանի՞ օխա կը կշռէ: Օխան քանի՞ զրշէն պիտի հաշուենք: Շատ սուղ կը պահանջէք կոր, այդչափ չեմ վճարեր: Ոսկորները կտրեցէ՞ք և այնպէս տուէ՞ք:

64. Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(Զիւն)

Շաքարի պէս ճերմակ է
Դաշտի խոտին վերմակ է .
Ձի նմանիր թռչունի,
Կրնայ թռչիլ, թեւ չունի:

ԲԱՌԵՐ. — Ծարպոտ, էազը. — Արու, էրէէ. — Հորթ, պանա. — Ազդր, պսպ. — Ոսկրոտ, էէֆէլէ. — Խորոված, էէպապ. — Հաշուել, հիտապ էրէէ. — Պահանջել, էպէէէ:

59. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Պատասխանեցե՛ք հետեւեալ հարցումներուն եւ գրեցե՛ք ձեր սեփական մէջ .

Որո՞նք են տարուան չորս եղանակները: Որո՞նք են գարնան, ամառուան, աշնան և ձմրան ամիսները: Որո՞նք են շաբթուան օրերը: Կրնա՞ք քանի մը տօներու անուններ գրուցել:

65. ԱՅԾՆ ՈՒ ԱՂՈՒԷՍԸ

Ազուէս մը ինկած էր ցամքած ջրհորի մը մէջ, ուրկէ չէր կրնար դուրս ելլել: Այժ մը որ հոնկէ կ'անցնէր, կանգ առաւ և ջրհորին մէջ նայելով, տեսաւ նալուէսը և հարցուց անոր. «Ինչո՞ւ իջեր ես այս տեղը»: — Զովանալու համար, պատասխանեց խորամանկ կենդանին. դուն ալ եկո՛ւր, խմէ՛, եթէ կ'ուզես, պաղ և անուշ ջուր կայ:—Այժ որ ծարաւ էր և արեւուն ջերմութենէն շատ կը նեղուէր, իսկոյն ջրհորին մէջ նետուեցաւ, առանց երկար բարակ քննութիւն կատարելու:

Ազուէս աղբարն անմիջապէս այժին եղջիւրներուն վրայ կոխելով, յաջողեցաւ ջրհորէն դուրս ելլել, և ըսաւ. «Այժուկ աղբար, կոտոշներդ մեծցնելու տեղ, խելքդ երկարէ»:»

ԲԱՌԵՐ. — Ազուէս, դիչի: — Յամքած, գոբոմոնու. — Զրհոր, գոյո. — Զովանալ, սէրինէնմէտ. — Խորամանկ, գոբնաղ. — Ծարաւ, սոսամըլ. — Զերմութիւն, սըճադըճ. — Բննութիւն, դահգիգադ, սորսալ արամագ. — Եղջիւր, պոյնոյ. — Յաջողիլ, ճոսաֆֆագ օլմագ, պալալ ղբմագ. — Կոտոշ, պոյնոյ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ազուէսին ի՞նչ պատահած էր: Ո՞վ անցաւ անկէ և ի՞նչ ըսաւ ազուէսին: Ազուէսը ի՞նչ պատասխանեց: Այժ ի՞նչ ըրաւ յետոյ: Ազուէսը ի՞նչպէս ջրհորէն դուրս ելաւ և վերջը ի՞նչ ըսաւ այժին: Այս պատմութենէն ի՞նչ կը հետեւցնէք:

58. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Կեանքուն սեղ նախորդ բառին իզականը գրեցի՛ք.

Հայր և ...: Քեռի և ...: Աշակերտ և ...: Փեսայ և ...: Սպասաւոր և ...: Դերասան և ...: Անեք և ...: Մանչ և ...: Այր և ...: Եղբայր և ...: Վարժապետ և ...: Տիգրան և ...: Վարդ և ...: Տէր և ...: Աքաղաղ և ...: Հաւ (մեծ հայր) և ...:

66. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Ա. Դեմք Ես

ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ	
Ո. Ես	Պէն	Մենք	Պիզ
Ս. Իմ, իմին	Պէնիմ	Մեր, մերին	Պիզիմ
Տ. Ինձ, ինծի	Պանա	Մեզ, մեզի	Պիզէ
Հ. Զիս	Պէնի	Զմեզ	Պիզի
Բ. Ինձմէ, ինէ	Պէնսկն	Մեզմէ, մենէ	Պիզսկն
Գ. Ինձմով	Պէնիմ իլի	Մեզմով	Պիզիմ իլի

67. ՊԱՇԱՊԱՆ ՇՐԵՇՏԱԿԸ

Հըսկէ՛, հրեշտա՛կ, իմ զարթումիս,
 Այնպէս ըսաւ քանի որ Տէր .
 Մահճիս մօտիկ պահպանէ՛ զիս
 Երբոր նընջեմ ամէն գիշեր :
 Գութ ունեցի՛ր անձիս անզօր,
 Ու մի՛ թողուր զիս մինաւոր :
 Խօսէ՛ ճամբան ինձ շարունակ,
 Եւ ունկընդրած պահուս քեզ լուս,
 Որպէս զի վար չիյնամ մինակ,
 Բարի հրեշտա՛կ, ձեռքդ ինծի տուր :

ԲԱՌԾՐ. — Հսկել, մահաճապա կորձէ. — Հրեշտակ, մեզէ. — Զարթում, ույանը. — Մահիճ, էտրագ. — Ննջել, ույոճագ. — Գութ, մերհամել. — Անզօր, գու՛վերսիլ. — Մինաւոր, էտրընը. — Շարունակ, պայմա. — Ունկընդրել, գուլաֆ վերձէ (տիյնէ):

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձրածայն արտասանեցէ՛ք :

Վարտ. Բ. Տարտ

68. ԶՈՒՐԸ, ԿՐԱԿԸ, ՀԱՄԲԱԻԸ

Օր մը Զուրը, Կրակը և Համբաւը միասին ճամբորդելով, որոշեցին թէ ինչպէս պիտի կրնային զերար գտնել երբ մէկզմէկ կորսնցնէին :

Կրակը կ'ըսէ. « Զիս պիտի գտնէք ուր որ ծուխ տեսնէք : » Զուրը կ'ըսէ. « Ուր որ ճախճախուտ տեղեր տեսնէք զիս, անոնց մէջ պիտի գտնէք : » « Եւ քեզ, կ'ըսեն Համբաւին, ո՞ւր պիտի գտնենք : »

« Երբ մարդ անգամ մը զիս կորսնցուց, կը պատասխանէ՛ ան, ա՛լ բնաւ չի գտներ : »

ԲԱՌԵՐ. — Համբաւ, շօհրէի. — Ճամբորդել, Էօլթո-լո-գէրմէր. — Որոշել, Գարար վերմէր. — Մուլս, արման. — Ճախճախուտ, պախապլըգ :

ՀՍԲԱՐԱՆ. — Պատեցէ՛ք այս առակը: Ըսէ՛ք թէ ինչ բարոյական կը հետեւի ասկէ :

54. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ խօսքերը վարի օրինակին պէս ամբողջացուցե՛ք.

Բժիշկը ... : Խաղամուրը ... : Հացը ... : Գինին ... :
Տանձը ... : Զիւնը ... : Աքաղաղը ... : Հաւը ... : Վաճառականը ... : Մշակը ... : Զուկերը ... : Հացադորձը ... :
Դպրոցականը ... : Կօշկակարը ... : Լուսինը ... :
Արեւը ... : Հովիւը ... : Վարդապետը ... : Քահանան ... :
Դասատուն ... : Մայրը ... : Ընտանի կենդանիները ... :

ՕՐԻՆԱԿ. — Բժիշկը հիւանդներ կը դարմանէ : Խաղամուրը դրամը զուր տեղը կը կորսնցնէ : Հացը մեզի անունը կուտայ :

69. ԸՆԿՈՅՁԸ

Պետրոս և Գարեգին օր մը ընկոյզ մը գտան գիւղին մէջ, ծառի մը տակէն . «Իմա է ընկոյզը, ըսաւ Պետրոս, քանի որ ես տեսայ առաջ զայն :» — «Մէջ պատասխանեց Գարեգին, անիկա ինծի կը վերարբերի, ինչու որ ես վերցուցի գետնէն :» Ասոր վրայ սաստիկ վէճ մըն է ծագեցաւ մէջերնին :

Մարդ մը որ անկէ կ'անցնէր նոյն պահուն, անոնց մօտենալով ըսաւ . «Կայնեցէ՛ք տղաքս, ձեզ հաշտեցընեմ :» Եւ երկուքին մէջտեղը կենալով առաւ ընկոյզը, կտորեց ու ըսաւ . «Կեղեւին կէսը կը վերարբերի անոր որ առաջին անգամ ընկոյզը տեսաւ, իսկ միւս կէսը՝ անոր որ զայն գետնէն վերցուց. գալով միջուկին՝ անիկա իմ բաժինս է, իբր վարձք ըրած դատաստանիս :»

ԲԱՌԾԻ.— Բանի որ, գալ+ի . — Պատասխանել, ճիշտով վերջէր — վէճ, ճարտաս . — Մագիլ, որոշում (պալլամագ) . — Նոյն պահուն, օտարութ . — Հաշտեցնել, պարզութեամբ . — Կեղեւ, գապո-գ . — Վերարբերիլ, այնպէս օլմագ . — Միջուկ, իշ . — Բաժին, բայ . — Վարձք, ի-ճրէդ . — Դատաստան, շրտար :

ՀԱՐՑԱՐԱՆ.— Պետրոս և Գարեգին ի՞նչպէս կը վիճէին և ի՞նչ բանի համար : — Ի՞նչ պատահեցաւ վերջը անոնց : — Այս պատմութենէն ի՞նչ կրնաք հետեցնել :

55. ՀՐԱՀԱՆԳ

Հորովեցի՛ք հետեւեալ բառերը .

Կայծակ, կոճակ, գրիչ, սեղան, կաղամար, առիւծ, թաղում, Աստուած, մայր, Յակոբ, տուն, տարի, ամիս, շաբաթ, գրասեղան, մատիտ, նարինջ, խնձոր, տանձենի, թռչուն, թիւ, գլուխ, մարդ, կին, տէր, աղջիկ :

70. ՋՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Հաստատել եւ ժխտել

1. Այո՛ : Անտարակոյս : Բնականաբար : Հաւատացէ՛ք, այնպէս է : Ճշմարիտ կ'ըսեմ : Կ'երդնում որ ճշմարիտ է ըսածս : Ձեր խօսքին հաւատք կ'ընծայեմ : Այս լուրը վստահելի պրիւրէ մը լսած եմ : Կը պնդեմ թէ իրաւ է եղածը : Բնաւ չեմ կասկածիր որ ըսածդ ճշմարիտ չըլլայ : Այդ բանին երբեք տարակոյս չկայ : Վստահ կրնաք ըլլալ ըսածիս :

2. Ի՛նչ կ'ըսէք, անկարելի է ըսածնիդ : Այդ բանին չեմ կրնար հաւատալ : Երբեք ստոյգ չի կրնար ըլլալ ըսածնիդ : Կը կասկածիմ այդ բանին վրայ : Հաւատացէ՛ք որ սուտ է : Երբեք վստահելի չէ այդ մարդը : Այդ բանը տարակոյսի տակ է : Բոլորովին անհիմն է այդ զրոյցը : Ըսածիդ բոլորովին հակառակը ըլլալ կը կարծեմ : Ինչո՞ւ կը պնդէք, սխալ է այդ համոզումնիդ : Ըսածնուդ հիմնովին կը հակառակիմ :

ԾԱՆՕԹ. — Իսաստուն պէտք է բացարէ աշակերտաց վերի հաստատական և ժխտական խօսքերը, անոնցմով տանկերէնէ հայերէն և հայերէնէ տանկերէն վարժութիւններ շնեւ տալով :

56. ՀՐԱՀԱՆԳ

Չանագանեցե՛ք հետեւեալ բառերուն մէջէն հագնելիքները, ուտելիքները եւ ջան կարասիները :

Հայելի, նարինջ, սեղան, բաճկոն, տափատ, անկողին, գորգ, վերարկու, Ֆէս, միս, կարկանդակ, խորոված, գիշերահագուստ, ձեռնոց, կօշիկ, վարագոյր, բաղմոց, մածուն, ապուր, կանթեղ, սնուկ, փողկապ, դուլպայ, շապիկ, աթոռ, թիկնաթոռ, ջերմոց, խաւիժ, ձուածեղ, պանիր :

71. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ (Շար.)

Բ. Դեմք, Դուճ

	ԵԶՍԿԻ		ՅՈՔՆԱԿԻ	
Ո. Դուն	Սեց		Դուք	Սիգ
Ս. Բու, քուկին	Սեցին		Ձեր, ձերին	Սիգին
Ս. Քեզ, քեզի	Սամա		Ձեզ, ձեզի	Սիգե
Հ. Չքեզ	Սեցի		Չձեզ	Սիգի
Բ. Քեզմէ, քեմէ	Սեցեցն		Չեզմէ, ձեմէ	Սիգեցն
Գ. Քեզմով	Սեցին իի		Չեզմով	Սիգին իի

72. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Մեղր)

Մշակներ են մեզի դրացի,
 Աշխատասէր ու խելացի.
 Քաղցրիկ պաշար տուն կը բերեն
 Դաշտի սիրուն ծաղիկներէն :

57. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կը կոչուի՝

Լեռ մը որ բոց կ'արձակէ : Յամաքի տարածութիւն մը որ Ջուրով չըջապատուած է : Ջուրի տարածութիւն մը որ ցամաքով չըջապատուած է : Յարդով և չ որ ճիւղերով ծածկուած տուն մը : Առտուան ճաշը : Իրիկուան ճաշը : Յորինը քաղելու ժամանակը : Սաղող քաղելու ժամանակը : Արեւուն ծագած տեղը : Արեւուն մարը մտած տեղը : Մովու մեծ տարածութիւն մը : Ոչխարներու բազմութիւնը : Մառերուն շատ գտնուած տեղը : Գետնին մէջ փորուած տեղ մը : Գետնէն ելած ածուխը :

73. ԱՋ ՁԵՌՔԸ ԵՒ ԶԱԽ ՁԵՌՔԸ

Օր մը աջ ձեռքը ըսաւ ձախին . « Դուն աւելորդ բեռ մըն ես մարդուն համար . աւելի աղէկ էր որ բնաւ գոյութիւն չունենայիր . ամէն բանի մէջ ես մինակ կը ծառայեմ անոր . եթէ աշխատիլ ուզէ, ես կը գրեմ, կը կարեմ, կը ցանեմ, կը հնձեմ . եթէ անօթենայ, ես կը կշտացնեմ զինքը . իսկ դուն ի՞նչ կ'ընես » . « Յանցանքը իմն չէ, պատասխանեց ձախ ձեռքը, եթէ քեզի շափ գործունեայ չեմ . եթէ մարդիկ զիս ալ գործածէին քեզ նման, թերեւս ես ալ քու ըրած գործերդ կատարէի, սակայն պէտք չէ ուրանաս որ, եթէ ես չըլլամ, շատ դժուարութիւն պիտի կրես առանձին, որովհետեւ ամէն բանի մէջ կարօտ ես ինծի . ուստի անիրաւ մի՛ ըլլար ինծի դէմ » .

ԲԱՌՆԵՐ. — Աւելորդ, արդիւ . — Գոյութիւն, վարք . — Գործունեայ, իլիկ-զար . — Կատարել, իճրա երձէ . — Ուրանալ . ինտար երձէ . — Կարօտ, մեհրած . — Անիրաւ, հագարդ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք աջ ու ձախ ձեռքին միջև եղած խօսակցութիւնը . — Այս պատմութենէն ի՞նչ բարոյական կը հետեւի :

88. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալները կենդանիք, բոյսք՝ թէ հանգի յառաջ եկած են :

Բացայտ, սեղան, բալ, պատուաստ, սատափ, մետաքս, բուրդ, բամպակ, մոմ, գինի, շոգոյա, կիր, ծխախոտ, մարգարիտ, թուղթ, մազ, պղպեղ, թիթեղ, շաքար, պարան, ջութակի լար, պանիր, ադամանդ, խէժ, փղոսկր, կաշի :

74. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՆԿԵՆԴԱՆ ԲԱՆԵՐՈՒ

Խ Ո Ւ Մ Բ Ե Ր Ը

Ինչպէս շատ մը կենդանիներու, նոյնպէս ալ ան-
կենդան բաներու խումբերը տարբեր անուններ ունին .
օրինակի համար, անասուններու խումբը կը կոչուի
ջոկ, ոչխարներու խումբը՝ հօտ, այծերու խումբը՝ նա-
խիր, գայլերու և շուներու խումբերը՝ երամակ, ձու-
կերու խումբը՝ վճառ, թռչուններու խումբը՝ երամ,
մեղուներու խումբը՝ զարմ, պար, ագռաւներու խում-
բը՝ ջոյիտ, կռուակներու խումբը՝ զարմ, ծաղիկներու
խումբը՝ հոյ, խտտերու բարդը՝ դեզ, յարդին՝ դէզը՝
շեղջ և այլն :

75. Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(Ժամացոյց)

Կրնա՞ք ըսել, թէ ի՞նչ է նա
Որ ձեռք չունի, զաթեղ կրնայ,
Առանց ոտքի կրնայ դնել
Քիչ մը քայլել, բայց միշտ հոն է :

59. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ամբողջացնել հետեւեալ խօսքերը, կիսերուն տեղ շեղագիր
բառերուն ներհակը դնելով .

Հարուստը կը գնէ աւելորդը, իսկ ... զուրկ է կարե-
ւորէն : Երբ մարդ անգամ մը սուտ խօսի, ա՛լ չեն հաւատար
անոր, եթէ նոյն իսկ ... խօսի : Կուշ մարդը չի հակնար
... վիճակէն : Լաւ տղաքներ պէտք չէ որ ... ընկերներ
ուսնանան : Սիրեցե՛հ՝ աշխատութիւնը և ... ծուլութիւնը :
Նիհար մարդիկ աւելի զօրաւոր կ'ըլլան քան թէ ... մար-
դիկ : Նայեցէ՛ք որ ծերերուն օրհնութիւնը ընդունիք, և ոչ
թէ ... : Բարիները արհայոքիւն պիտի վայելեն, իսկ չա-
րերը ... պիտի երթան :

76. Շ Ղ Յ Ա Յ

Թէպէտեւ Գրիգոր գող չէ, բայց գողէն վար չի մնար, ինչու որ ձեռքը անցածը կը պահէ :

Օր մը դարբինի մը խանութին առջեւէն անցած ատեն, դրան առջեւ, սալայատակին վրայ, գեղեցիկ շղթայ մը տեսաւ : Գրիգոր չորս կողմը նայեցաւ թէ արդեօք զինքը դիտող մը կա՞յ. յետոյ կամաց մը ծռեցաւ ու շղթան բռնեց, բայց անմիջապէս ձգեց զայն և պոռալ սկսաւ :

Շղթան կասկարմիր էր, և խեղճ տղուն ձեռքերը այրեր էին : Դարբինը որ զայն դիտմամբ թողած էր փողոցը՝ որպէս զի պաղի, անմիջապէս վազեց Գրիգորին քով եկաւ և ըսաւ անոր. «Թող աս քեզի խրատ ըլլայ. երբ ուրիշին մէկ բանին դպչիլ ուզես, այս շղթան միտքդ բեր : »

ՐԱՌՍԻ. — Թէպէտեւ, վագաս. — Դարբին, չէլենկեր. — Սալայատակ, Գալարբճ : — Շղթայ, զենճեր. — Արդեօք, ասէպա. — Դիտող, կէօղերէյէն. — Անմիջապէս, հէմն. — Կասկարմիր, Գրիգորի. — Դիտմամբ, Տարտու. — Խրատ, նասահար :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ տեսակ տղայ էր Գրիգոր : — Ի՞նչ պատահեցաւ օր մը իրեն : — Ինչո՞ւ համար ձեռքերը այրեցան : — Այն պահուն ո՞վ վրայ հասաւ, և ի՞նչ ըսաւ իրեն : — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը :

80. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կը կոչուի

Յորենը քաղելու գործողութիւնը. այգիները կթելը. առաւօտեան կերակուրը. կէս օրուան կերակուրը. իրիկուան կերակուրը. ընթրիքէն առաջ կերուած կերակուրը. եօթը օրուան տեւողութիւնը. երեսուն օրը. երեք ամիսը. տասներկու ամիսը. հարիւր տարին :

77. ՍՏԱԽՕՍԻՆ ՊԱՏԻԺԸ

Փղբրիկ հովիւ մըն էր Միհրան ,
Որ ամէն օր դաշտին վըրան՝

Արածելու կ'երթար առտուն
Հօտն իր գիւղին ոչխարներուն :

Օր մը նեղուած հոն միս մինակ
Ըսաւ. «Աղուոր խաղ մը խաղանք»
Եւ ըսկրսաւ պողալ ուժով .

«Գա՛յլ կայ, գա՛յլ կայ, հասէ՛ք շուտով :»
Գիւղացիներ եկան հասան ,

Ոչ գայլ գըտան , ոչ ալ գազան :
Քահ քահ խընդաց անկիրթ տըղան .
Ըսաւ անոնց. «Կատակ էր ան :»

Գայլեր եկան օր մը իրաւ ,
Մարդ մը իր ձայնին մըտիկ չըրաւ .
Մէկը չեղաւ իրեն պաշտպան .
Կըտոր կըտոր եղաւ Միհրան :

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Երբ մարդ անգամ մը սուտ խօսի , այլ
ևս ոչ մէկը անոր կը հաւատայ :

ԲԱՌԵՐ. — Ստախօս , էպլանճը . — Արածել , օղլամագ . —
Միսմինակ , էպփէալընըլ . — Գազան , ճանաղար . — Անկիրթ ,
դէրպէյէտիլ . — Կատակ , շահա . — Պաշտպան , համիթի , հուհա-
ֆաղա էպէն :

ՊԱՑՈՒԷՐ. — 1. Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և
բարձրածայն արտասանեցէ՛ք :

ձ. Այս ոտանաւորին իմաստը արձակ պատմեցէ՛ք :

78. ԱՆՋՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ (Շար.)

Գ. դեմք, Ինք, Ան,

Ինք

ԵԶԱԿԻ

ՅՈՔՆԱԿԻ

Ո. Ինք	Քենսիսի	Իրենք	Քենսիլերի
Ս. Իր, իրեն	Քենսիսիցին	Իրենց	Քենսիլերիցին
Տ. Իրեն	Քենսիսիցն	Իրենց	Քենսիլերիցն
Հ. Զինք	Քենսիսիցի	Զիրենք	Քենսիլերիցի
Բ. Իրմէ	Քենսիսիցեան	Իրենցմէ	Քենսիլերիցեան
Գ. Իրմով	Քենսիսի իլէ	Իրենցմով	Քենսիլերի իլէ

Ան

Ո. Ան, անիկա	Օ	Անոնք	Օնլար
Ս. Անոր	Օնուն	Անոնց	Օնլարն
Տ. Անոր	Օնա	Անոնց	Օնլարա
Հ. Զայն, զանիկա	Օնու	Զանոնք	Օնլարը
Բ. Անկէ	Օնսան	Անոնցմէ	Օնլարսան
Գ. Անով	Օնուն ըլա	Անոնցմով	Օնլար ըլա

ԾԱՆՕԹ. — Անին պէս կը հոլովուին աս և աս դերանունները :

61. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Գտնել հետեւեալ բառերուն քիւր եւ հոլովը.

Քու, զիս, անոր, անով, ինձմէ, քեզ, զքեզ, իրեն, իրմով, անոնք, անոնցմով, ինձի, իմ, ես, մեր, զմեզ, մեզմով, ինձմով, քեզմով, իրենցմով, անոնցմէ, ասով, ատկէ, ասոնցմով, ատոնք, ասոնք, թուկէ, անկէ, զանիկա, զինք, անիկա, զանոնք, անոնց, իրենց, զիրենք :

79. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Սէմիզ գազլար պահալը տըր : Կիւլէր եա գըր-
մըզը , եա պէյազ օլուր : Սէրվէդիմիս չօգ տուր , Փա-
գաթ Փայտէի տէյիլ : Պու գալէմլէր հիչ էյի տէյիլ
տիրլէր : Քիւլիւք հէմչիրէմիզ հասդա տըր : Էյէր մէմ-
նուն իսէն , չօգ զէնկինսին : Պու կիւն քէյֆիմ եօզ
տուր : Պէն ծնտան տահա պէօյիւլիւմ : Ուսլու օլու-
նուզ քի սիզի սէվսինլէր : Տայմա ուսլու վէ դէր-
պիլէյի օլունուզ : Կէզինմէտէն կէլիօրուզ : Գարնըմըզ
աճըզար , պիզէ եէյէճէք վէրինիզ : Իէչէքքիւր էտէրիմ
տօսդում , պու էյլիլինիզի ունուդմայաճաղըմ : Իչինիզի
պիդիրտինիզ մի : Կէլինիզ հէփ պէրապէր էվէ կիտէ-
լիւմ : Սիզի կէօրտիւլիւմ իլիւն չօգ մէմնուն օլտում :

ՊԱՅՈՒՆԸ. — Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգ-
մանեցէ՛ք :

62. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Այս քիւերը քուանեաններով գրեցէ՛ք .

Մէկ , հինգ , եօթը , ութը , քսան , քսանչորս , քսանը-
ինը , երեսուն , երեսուն երկու , երեսունըութը , քառասունը-
մէկ , քառասունըհինգ , քառասունըինը , յիսուներկու , յի-
սունըչորս , յիսունըվեց , յիսունըինը , իննսունըչորս , իննսու-
նըեօթը , հարիւրմէկ , հարիւրչորս , հարիւրյիսունըհինգ , եր-
կու հարիւր երկու , երեք հազար չորս հարիւր քսանըմէկ :

80. Ա Գ Ռ Ա Ի Ը Ե Ի Կ Ո Ւ Ժ Ը

Ագռաւը շատ ծարաւի էր . վազեց կուժի մը քով որ ջուր խմէ : Իրաւ, կուժին մէջ ջուր կար, բայց այնքան քիչ էր որ շատ աշխատելէ վերջ, հազիւ կրցաւ կտուցին ծայրը ջուրին հասցնել :

« Յուսահատելու չէ, ըսաւ ինքնիրեն, հնարք մը գտնեմ : » Իսկոյն մանր քար մը առաւ և կուժին մէջ նետեց . հատ մը եւս . հատ մըն ալ ետեւէն : Քարերը ջուրին տակը կ'երթային, իսկ ջուրը վեր կ'ելլէր : Հարկ չեղաւ շատ քար ձգելու, աշխատութիւնը պարապը չգնաց, և սկսաւ հանգիստ խմել ջուրը : Թէ որ այս խելքը չընէր, ջուրին հասնելիք չունէր :

ԲԱՌԻՐ. — Ագռաւ, գարդա . կուժ, փէտդի, — Հազիւ, անձադ . — Հնարք, ուսուցիչ, եօլ . — Իսկոյն, հիմէն . — Մանր, ուֆադ . — Եւս, փահա . — Հարկ, լալըմ . — Հանգիստ, րահադ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ագռաւը ինչ ընել կ'ուզէր . — Ատր համար ինչ հնարք բանեցուց : — Թէ որ այս հնարքը չի բանեցընէր, պիտի կրնար ծարաւը անցնել : — Այս պատմութիւնէն ինչ բան կրնաք հետեցնել :

83. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետեռուն սեղ յարմար բառեր դրե՛մ .

... կառքը կը քաշեն : ... ծաղիկներուն հիւթովը կ'ապրի : ... կենդանեաց իշխանն է : ... Որդի Աստուծոյ է : ... ծաղիկներուն թագուհին է : ... ձմրան երեք ամիսներն են : ... կը շինեն մեղրը : ... կը բուսցընէ բոյսերը : ... անտառներու երգիչն է : ... Թուրքիոյ մայրաքաղաքն է : ... Աստուծոյ տունն է : ... ձմրան պտուղներն են :

81. ԲԱՐԻ ԳՈՐԾԱՒՈՐԸ

Բարի գործաւորը աշխատասէր, կանոնաւոր, ժուժկալ և խնայող կ'ըլլայ : Արհեստս , կ'ըսէ ան , եկամուտ մը կ'արժէ և բազուկներս դրամագլուխս են : Ան ամբողջ օրը աշխատանոցին մէջ յոգնելէն վերջ , իրիկուան , ուրախ և զուարթ տուն կը դառնայ , ընտանիքին մօտ : Պարապ ժամերը կ'անցնէ իր տանը պզտիկ պարտէզը խնամելով : Անիկա կ'զբաղի նաեւ իր զաւակներուն դաստիարակութեամբը :

Երբ ընկեր մը զինքը գինետուն հրաւիրէ , ան կը մերժէ և կ'ըսէ . «Իրաւունք չունիս այդպէս առողջութիւնդ խանգարելու . ես ոչ ժամանակ ունիմ կորսնցընելու և ոչ ալ գրամ վատնելու» : Բարի գործաւորը ծերութեան օրերուն բանի մը կարօտ պիտի չըլլայ , և իր սղաքը զինքը պիտի օրհնեն :

ԲԱՌԾՐ. — Գործաւոր , ամէլէ . — կանոնաւոր , նիւսալը . — ժուժկալ , գանադդեար . — խնայող , իրարէճի . — Եկամուտ , իրօք . — Դրամագլուխ , սերմայէ . — Աշխատանոց , շալլաճափ էէր . — Զբաղիլ , օգրալճափ . — Դաստիարակութիւն , դէրպէյէ . — Գինետուն , մէյհանէ . — Հրաւիրել , դաճէր էրմէր . — Մերժել , բէրօ էրմէր . — Խանգարել , պօզճափ . — Վատնել , պօշնա սարփ էրմէր :

ՀՍԲՏԱՐՄԱՆ. — Ի՞նչպէս կ'ըլլայ բարի գործաւորը : — Ի՞նչ բաներ կը կազմեն անոր դրամագլուխը : — Ի՞նչ են անոր զբաղումները : — Անիկա ի՞նչ բանէ չախորժիր : — Ծերութեան տակն ի՞նչպէս պիտի ըլլայ ան :

82. ՓՈՒԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ո .	—	—	—
Ս .	Մէկզմէկու	Իրարու	Պիրպիրիցի
Տ .	Մէկզմէկու	Իրարու	Պիրպիրիցի
Հ .	Մէկզմէկ	Իրար , զիրար	Պիրպիրիցի
Բ .	Մէկզմէկէ	Իրարմէ	Պիրպիրիցիցի
Գ .	Մէկզմէկով	Իրարմով	Պիրպիրի իլի

ԾԱՆՕԹ. — Փոխադարձ դերանունները ուղղական հո-
լով չունին , որովհետեւ ենթակայ չեն ըլլար :

83. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Ազօրիք)

Որքան շուր տան , որքան ցորեն
Կը խմէ , կ'ուտէ , կ'ուզէ նորէն .
Զի քրնանար , անդադար նա
Կը խմէ , կ'ուտէ և կը դառնայ :

ԲԱՌԵՐ. — Անդադար , փոքրճափարկ :

84. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ուղղեցի՛ք հետեւեալ խօսքերը .

Կատուն կը հաչէ , շունը կը մլաւէ : Դանակով ապուր
կ'ուտեն : Գրիչով կար կը կարեն : Զուրը կ'ուտեն , հացը կը
խմեն : Աչքով կը լսեն , ձեռքով կը քալեն , իսկ ականջով
կը տեսնեն : Շոգենաւը առաքաստով կ'երթայ և նաւակը ա-
նիւով : Խելօք տղան կը պատժուի , իսկ անառակը կը վար-
ձատրուի : Պատառաքաղով ապուր կը խմեն : Զուրը պնակին
մէջ կը դնեն , իսկ կերակուրը գաւաթին մէջ : Զմեռը մար-
դիկ ամարանոց կ'երթան : Ազը անուշ է : Շաքարը թթու է :
Հորը դոյլին մէջ ինկաւ :

84. ՅԱՄՐԱԲԱՐ ԱՃԱՊԱՐԷ

Իրիկուն մը կառապան մը իր կառքը վաճառքով բեռցած, սոսկալի արագութեամբ կը քչէր որ ժամ առաջ քաղաք հասնի: Ճամբուն վրայ մարդու մը քովէն անցած ատեն, հարցուց անոր թէ արդեօք կրնա՞ր քաղաքին դուռները գոցուելէ առաջ քաղաք ժամանել: Ճամբորդը, որ կառապանին պէս դէպի քաղաք կ'երթար, պատասխանեց, «Այո՛, եթէ աւելի կամաց վարես կառքը:»

Կառապանը այս պատասխանին վրայ ինքնիրենը ըսաւ. «Այս մարդը յիմար մը ըլլալու է.» և զարկաւ խարազանը ձիերուն և շարունակեց իր ընթացքը միևնոյն արագութեամբ: Բայց քիչ մը վերջը յանկարծ կառքին անիւներէն մէկը կոտրելով՝ կառքը մէկ կողմին վրայ ինկաւ և մէջի վաճառքները գետին թափեցան:

Երբ կառապանը այս վիճակին մէջ ինչ ընելիքը կը մտածէր, քիչ մը առաջ տեսած մարդը հասաւ, եւ

85. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետեունց սեղ երկու յարմար բառեր դրե՛ք.

- | | | |
|----------------|-------------------|-------------------|
| ... կարծր են: | ... ժրջան են: | ... փայլուն են: |
| ... բարակ են: | ... սուղ են: | ... աշխատասէր են: |
| ... հո՛ւս են: | ... նեղ են: | ... պայծառ են: |
| ... բոյս են: | ... լայն են: | ... լեղի են: |
| ... թուփ են: | ... շիտակ են: | ... թափանցիկ են: |
| ... սև են: | ... անգոյն են: | ... պաղ են: |
| ... հեղուկ են: | ... թանձր են: | ... ծանր են: |
| ... կպչուն են: | ... անուշահոտ են: | ... դնդաճեւ են: |

գաննելով զայն այդ վիճակին մէջ, ըսաւ անոր. «Տեսա՛ր թէ իրաւունք ունէ՛ի: Ես հիմա ուղքով քաղաք պիտի հասնեմ, բայց դուն չորս ձիերովդ այսօր չի պիտի կրնաս հասնիլ:»

Բարոյական. — Շատ աճապարողը ոչ մէկ բանի կրնայ հասնիլ:

ԲԱՌԵՐ. — Յամբարար, Էսթլալճա. — Աճապարել, աճելէ կդմէք. — Կառապան, արապաճը. — Վաճառք, Էլէա, Դալ. — Արագութիւն, յափոգլոգ. — Ժամանել, Էկդէլլէք. — Ճամբորդ, Էօլլը. — Վարել, սիւրմէք. — Յիմար, Կէլլ. — Խարազան, Գամիլը. — Ընթացք, Կէփիլ. — Միեւնոյն, աջը. — Անիւ, Դէտէրլէք. — Իրաւունք, հագգ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Կառապանը ի՞նչպէս կը ճամբորդէր: — Որո՞ւ պատահեցաւ ճամբուն վրայ և ի՞նչ հարցուց անոր: — Մարդը ի՞նչ պատասխանեց: — Կառապանը մարդուն պատասխանին վրայ ի՞նչ մտածեց և ի՞նչ ըսաւ: — Յետոյ ի՞նչ պատահեցաւ: — Ճամբորդը երկրորդ անգամ կառապանին պատահելուն ի՞նչ ըսաւ անոր: — Իրաւունք ունէ՞ր: — Այս պատմութենէն ի՞նչ կը հետեւի:

66. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերով վարի օրինակին պէս խօսքեր շի-
նեցէ՛ք.

Հարստութիւն, տղեղութիւն, մեծութիւն, աղքատութիւն, բարկութիւն, ծուլութիւն, մեծամտութիւն, ազահութիւն, ժուժկալութիւն, հաւատարմութիւն, ուղղութիւն, կրկնատութիւն, բարեկեցութիւն, ընկերսիրութիւն, յուսահատութիւն, լրջութիւն:

ՕՐԻՆԱԿ. — Հարստութիւն ունեցողը հարուստ կը կոչուի:

85. ԴՈՒՆ Ի՞ՆՉ ՈՒՆԻՍ

Խղունջն ունի իր խրցիկ ,
Թռչունն իր բոյն գեղեցիկ ,
Մեղուն ունի իր փեթակ ,
Կատուն ունի իր մուշտակ ,
Դո՞ւն ի՞նչ ունիս պիտանի ,
Ըսէ՛ , նայիմ՝ պատանի :

— Հագուստ ունիմ ու կօշիկ ,
Եւ ծընողներ անուշիկ .
Սիրտ մը ունիմ մանաւանդ .
Հօրրս , մօրրս հընազանդ .
Ունիմ նաև ես ուսման
Եռանդ ու սէր անսահման :

ԲԱՌԵՐ. — Խղունջ , սայլանիկօղ . — Խցիկ , ուֆագ օրս . —
Մուշտակ , Գիւրգի . — Պիտանի , լարճիլ . — Պատանի , կէնճ
չճոփ . — Մանաւանդ , պախոսոս . — Հնազանդ , Գիւրիւ . —
Եռանդ , զայրէր . — Անսահման , սօնոսղ :

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձ-
րաձայն արտասանեցէ՛ք :

67. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հեծեւալ բառերուն սառախալները ուղղեցիք .

Խելածի , համարցակ , լէզու , անքութ , չուր , ծէրու-
թիւն , ախչիկ , հիւանթ , բունչ , բաղլիլ , փարեսէր , բոք-
րիկ , առաղինի , աղգատ , հաւկիդ , հանթիմանութիւն ,
քորք , ցեռք , քլուխ :

Վ. Ե. Բ. Տ. Ե.

86. ՄՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. ԴԵՄԲ

ԵԶՈՎԻ		ՅՈՒՆԱԿԻ	
Ո. Իմս, Իմինս	Պեցիմբի	Իմիններս	Պեցիմբիլեր
Ս. Իմսիս	Պեցիմբիցից	Իմիններուս	Պեցիմբիլերից
Տ. Իմսիս	Պեցիմբիցե	Իմիններուս	Պեցիմբիլերե
Հ. Իմս, Իմինս	Պեցիմբիցի	Իմիններս	Պեցիմբիլերի
Բ. Իմսէս	Պեցիմբիցեց	Իմիններէս	Պեցիմբիլերեց
Գ. Իմսովս	Պեցիմբի իլե	Իմիններովս	Պեցիմբիլեր իլե
Ո. Մերը, մերինը	Պիզիմբի	Մերինները	Պիզիմբիլեր
Ս. Մերինին	Պիզիմբիցից	Մերիններուն	Պիզիմբիլերից
Տ. Մերինին	Պիզիմբիցե	Մերիններուն	Պիզիմբիլերե
Հ. Մերը, մերինը	Պիզիմբիցի	Մերինները	Պիզիմբիլերի
Բ. Մերինէն	Պիզիմբիցեց	Մերիններէն	Պիզիմբիլերեց
Գ. Մերինովը	Պիզիմբի իլե	Մերիններովը	Պիզիմբիլեր իլե

Բ. ԴԵՄԲ

Ո. Քուկդ, } քուկինդ }	Սեցիմբի	Քուկիններդ	Սեցիմբիլեր
Ս. Քուկինիդ	Սեցիմբիցից	Քուկիններուդ	Սեցիմբիլերից
Տ. Քուկինիդ	Սեցիմբիցե	Քուկիններուդ	Սեցիմբիլերե
Հ. Քուկդ, } քուկինդ }	Սեցիմբիցի	Քուկիններդ	Սեցիմբիլերի
Բ. Քուկինէդ	Սեցիմբիցեց	Քուկիններէդ	Սեցիմբիլերեց
Գ. Քուկինովդ	Սեցիմբի իլե	Քուկիններովդ	Սեցիմբիլեր իլե
Ո. Չերը, ձերինը	Սիզիմբի	Չերինները	Սիզիմբիլեր
Ս. Չերինին	Սիզիմբիցից	Չերիններուն	Սիզիմբիլերից
Տ. Չերինին	Սիզիմբիցե	Չերիններուն	Սիզիմբիլերե
Հ. Չերը, ձերինը	Սիզիմբիցի	Չերինները	Սիզիմբիլերի
Բ. Չերինէն	Սիզիմբիցեց	Չերիններէն	Սիզիմբիլերեց
Գ. Չերինովը	Սիզիմբի իլե	Չերիններովը	Սիզիմբիլեր իլե

Գ. Դեմք

ՆՁԱԿԻ		ՅՈՒՔՆԱԿԻ	
Ո. Իրը, իրենը	Օնուցփ	Իրենները	Օնուցփիք
Ս. Իրենին	Օնուցփին	Իրեններուն	Օնուցփիքին
Տ. Իրենին	Օնուցփինե	Իրեններուն	Օնուցփիքե
Հ. Իրը, իրենը	Օնուցփինի	Իրենները	Օնուցփիքի
Բ. Իրենէն	Օնուցփինսե	Իրեններէն	Օնուցփիքսե
Գ. Իրենովը	Օնուցփի իլէ	Իրեններովը	Օնուցփիքի իլէ
Ո. Իրենը, } իրենցինը	Օնլարընփ	Իրենցինները	Օնլարընփիք
Ս. Իրենցինին	Օնլարընփին	Իրենցիններուն	Օնլարընփին
Տ. Իրենցինին	Օնլարընփինե	Իրենցիններուն	Օնլարընփիքե
Հ. Իրենցը, } իրենցինը	Օնլարընփինի	Իրենցինները	Օնլարընփիքի
Բ. Իրենցինէն	Օնլարընփինսե	Իրենցիններէն	Օնլարընփիքսե
Գ. Իրենցինովը	Օնլարընփի իլէ	Իրենցիններովը	Օնլարընփիքի իլէ

ԾԱՆՕԹ. — Այս ստացական դերանուններուն վրայ գա-
նադան վարժութիւններ ընել սալ աշակերտաց, հայերէնէ
ստեղծելէն և փոխադարձաբար:

66. ՀՐԱՀԱՆԳ

Յարմար ստացականներ դրեմ կէտեումն սեղ .

Բարի հայր մը կը սիրէ ... զաւակները, բայց չի սիրեր
... թերութիւնները: Պատուեցէ՛ք ... ծնողքը, եթէ կ'ու-
զէք որ ... կեանքը երկարատեւ ըլլայ: Յիսուս առակնե-
րով կը խօսէր ... աշակերտներուն: Մենք մաքուր կը պա-
հենք ... տեղապահները: Սարդը կ'ապրի ... ոստայնով: Եր-
կուքնիս ալ նոր կօշիկներ ունինք, բայց ... աւելի նոր
են: Երանի՛ այն աշակերտներուն որ ... բարի վարքովը սի-
րելի են ... ուսուցիչներուն:

87. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Կիւնէչին սրճագլըղը իւզիւմէրի եէգիշտիրիւր : Էս-
կիճի էսկի բուպալար սադար : Դէնպէլլէր պէր կիւն
փէչիման օլաճագլար տըր : Աղաճլարըն եափրագլարը
սօն պահարտա սարարըր : Սայիրլէրէ Ֆէնալըգ էտէրէք
սէվինմէ : Նի՞չին արգատաշլարընըլա թագլըլըգլա վա-
րընմայօրսունուգ : Հէփսինիգ գարտաշարընըգ, պիրպիրի-
նիգ իլէ մուհապպէդլէ գօնուշունուգ : Ալըն ըլըղը կի-
ճէլէրի պիզի դէնպիր իտէր : Ինսան քէնտի ագլըլըլա
տիւնեանըն՝ վահչի հայվանլարընը զապթ էտէպիրիւր :
Սիդի չօգտան պէրի կէօրմէտիյիմ՝ իշիւն փէք արզուլէ-
միչիմ : Ալիմ վէ ագլըլը ատամլար ասլա աճ գալմագ-
լար : Տիւնեա կիւնէչին էթրաֆընտա տէօնէր : Ալլահըն
էյլլեքլէրի չօգ տըր . օնուն իշլէրինէ ագըլ էրտիրմէք
միււթին տէյիլ տիր :

ՊԱՏՈՒԷՐ.— Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգ-
մանեցէ՛ք :

88. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեճեւեալ բառերով վարի օրինակին պէս խօսե՛ր շինե-
ցի՛ք :

Հացագործ, հաց, փուռ : Վարդապետ, քարոզ, եկե-
ղեցի : Նաւավար, նաւակ, ծով : Դերձակ, կար, ասեղ : Մե-
ղու, մեղր, փեթակ : Փիղ, կենդանի, մեծագոյն : Ատաղձա-
գործ, տախտակ, սղոց : Հաւ, հաւկիթ, հաւնոց : Թռչուն,
բոյն, ծառ : Երկաթագործ, երկաթ, սալ :

ՕՐԻՆԱԿ. — Հացագործը հացը կ'եփէ փուռին մէջ :

88. Կ Ա Ր Գ Կ Ա Ն Ո Ն

Յակոր ծոյլ չէ, բայց կարգ կանոն չգիտեր: Իրիկուան դասերը լմնալէն ետքը, գիւրքերն ու տետրակները ասդին անդին ցրուած ու տարտղնած են: Առտուն ալ անկողնէն ելլելուն պէս կ'սկսի հագուստները վնասել: Գուլպային մէկը անկողնին վրայ, միւսը աթոռին վրայ, կօշիկին մէկը աթոռին տակը, միւսը սանդուղին վրայ են: Յակոր այսպէս ամէն առտու ու կը մնայ հագուելու և դպրոց երթալու, և վարժապետէն յանդիմանութիւն կը լսէ:

Ջանացէ՛ք որ դուք ալ ասանկ անկարգ չըլլաք:

ԲԱՌԵՐ. — Կարգ կանոն, սրբա, նիզամ. — Յրուած, փաղըմբը. — Տարտղնած, էօդէտէ պէրէտէ գամբը. — Յանդիմանութիւն, դէտպէր:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Յակոր ի՞նչ տեսակ տղայ է: — Անիկա պառկած ատենը ի՞նչպէս կը հանուի: — Առտուանց զգեստները ի՞նչպէս կը գտնէ և ո՞ւրկէ: — Ասանկ տղայոց ի՞նչ կ'ըսեն: — Աղէ՛կ բան է անկարգ: Ըլլալը:

90. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերը գործածելով վարի օրինակին պէս խօսքեր շինեցի՛ք.

Բոլորակածել	Կոր	Ուղիղ
Խորանարդ	Քառակուսի	Մուռ
Գլանածել	Քառանկիւն	Անկիւնաւոր
Կոնածել	Հակթածել	Բթածայր
Սրածայր	Աղեղնածել	Թափանցիկ

ՕՐԻՆԱԿ. — Արևը և լուսինը բոլորակածել են: Մովուն մակերևույթը կոր է:

89. ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԿԱՐԳԵՐԸ

Աշխարհի վրայ երեք տեսակ մարմին, առարկայ կայ. կենդանի, թոյս, հասկ: Կենդանիները և բոյսերը գործարաններ ունին, կ'ապրին և կ'ըսուին գործարանաւոր: Հանքայինները գործարան չունին և չեն ապրիր. ասոնք են մետաղներ, քարիւղ, ջուր, օդ և այլն: Ուրեմն ասոնք ալ անգործարանաւոր կ'ըսուին:

Հանքային մարմինները գետնէն կը հանուին:

Գործարանաւոր և անգործարանաւոր մարմիններուն մէջ մեծ տարբերութիւն կայ: Բոյս մը միշտ կ'աճի և օր մըն ալ կը մեռնի: Հանքային մը չի կրնար աճիլ ու մահ ալ չունի: Մարդը, թռչունը կը ծերանան, կը մեռնին: Մառը, ցորենը, խոտը կը ծերանան, կը չորնան: Բայց քարը, պղինձը, ջուրը ծերանալ, մեռնիլ, չունին, միշտ կը մնան:

91. ՀՐԱՀԱՆԳ

Ձանազանեցի՛ք կենդանական, բուսային եւ հանքային մարմինները.

Առիւծ, ծաղիկ, քար, մեխակ, դղում, աղամանը, քարիւղ, կառու, միջատ, տերև, նոճի, կապար, երկաթ, ձի, կով, ջուր, օդ, սնդիկ, մարդ, օձ, աղուէս, ձուկ, սոխակ, արծաթ, ոսկի, փիղ, սունկ, մարմարիտն, պողպատ, փղոսկր, պղպեղ, օղի, մոխիր, քացախ, կաշի, մաղ, բուրդ, աղ, բամպակ, մետաքս, հաց, ապակի, խաւուէ, պանիր, կաթ:

Կենդանիները կ'զգան ու կը շարժին: Բոյսերը չեն զգար. տեսնել, շօշափել, ըսել չունին ու չեն ալ շարժիր:

Ուրեմն կենդանիներուն և բոյսերուն մէջ ալ տարբերութիւն մը կայ. զգացում և շարժում մէկը ունի, միւսը չունի: Այս երեք տեսակ մարմինները, հանքային, բոյս, կենդանի, ամբողջ աշխարհս կազմած են:

Ասոնք բնութեան երեք կարգերը կոչուած են. —

Կենդանիներուն կարգը, բոյսերուն կարգը և հանքայիններուն կարգը:

ՌԱՌՆԲ.— Բնութիւն, Ռապէյախ: — Բոյս, Նեպար. — Հանք, Տապէն. — Գործարան, ալէր. — Գործարանաւոր, ալէրի. — Քարիւղ, կալ էաղը. — Անգործարանաւոր: ալէր-աիլ. — Տարբերութիւն, ֆարգ. — Աճիլ, ջողուժագ, պէօյի-մէր. Մահ, էօլե-մ. — Մերանալ, էիդէար օլժագ. Պղինձ, պագըր. — Չգալ, հիսս էր-մէր. — Չգացում, հիսս. Շարժում, հասրաթէր. — Կազմել, դէլլիլ էր-մէր:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Բնութեան երեք գլխաւոր կարգերուն անունները տուէ՛ք: — Այս երեք կարգերը ի՞նչ բաներով իրարմէ կը տարբերին: — Բանի մը կենդանիի անուններ տուէ՛ք: — Բանի մը բոյսեր յիշեցէ՛ք: — Բանի մը հատ ալ հանքայիններ ըսէ՛ք:

ԳՁ. ՀՐԱ. ՀԱՆԳ

Ձանազանեցի՛ք or, ամիս, եղանակ եւ տօն.

Երեքշաբթի, կիրակի, Չատիկ, ամառ, Խաչվերաց, Մնունդ, փետրվար, մարտ, աշուն, հինգշաբթի, Տեսա-նընդառաջ, Աստուածածին, յունվար, օգոստոս, ձմեռ, գարուն, ուրբաթ, շաբաթ, Լուսաւորիչ, Ապրիլ, դեկտեմբեր, հոկտեմբեր:

90. Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Բ

Կենդանիները շատ տեսակ կ'ըլլան, մեծ կամ պզտիկ, և երկրիս ամէն կողմը կը գտնուին : Ոմանք հողին վրայ կ'ապրին, ոմանք ջուրին մէջ՝ և ոմանք ալ օդին մէջ : Կենդանիներուն գլուխն է մարդը :

Անբանները մազէ, բուրդէ կամ մուշտակէ մորթով ծածկուած են և հողին վրայ կը քալեն : Զին, կովը, շունը, ոչխարը, կատուն և ուրիշ շատ տեսակներ այս կարգէն են : Կան ամբաններ որ միակ մէկ սմբակով ոտք ունին, ձիուն պէս : Կան ուրիշ կենդանիներ ալ որ երկուքի ճեղքուած պճղակ ունին, ինչպէս . կովը, ոչխարը, խոզը, եղջերուն : Ուրիշ կենդանիներ ալ կան որ մինակ մէկ բթամատ և ճիրաններ ունին, շունին, կատուն, առիւծին և արջին պէս : Մարդիկ կովը և ոչխարը կը մորթեն ուտելու համար : Անոնց մորթէն կաշի և մուճակ կը շինեն : Կովին ու ոչխարին բուրդը կը գզեն և դերձանի պէս կ'ոլորեն, և այս դերձանով ընտիր հագուստներ կը շինեն :

ԲԱՌՆԲՐ. — Ոմանք, պաղլարը. — Անբան, իտրաֆսըլ. — Մորթ, փէրի. — Սմբակ, հայլան դրրնաղը. — Պճղակ, լօփո֊գ. — Եղջերու, կէյիկ. — Բթամատ, պալ փարձա֊գ. — Ծիրան, փէնչէ. — Գզել, փամպոնղը աղձա֊գ. — Դերձան, էփլիտ. — Ոլորել, պիտիտ. — Ընտիր, էյի, ալլա :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ տեսակ կենդանիներ կան : — Ի՞նչպէս և ո՞ւր կ'ապրին : — Ի՞նչ բանով ծածկուած են : — Ոտքերնին քանի՞ հատ են և ի՞նչպէս կըլլան : — Ասոնցմէ որո՞նք մեզի օգտակար են և ի՞նչ բանի :

91. ՈՐ ԵՒ ՈՎ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈՒՆՎՈՒՄԸ

	ԵԶՁԱԿԻ	ՅՈՒՔՆԱԿԻ
Ո. Որ	Ո՞վ	Որո՞նք
Ս. Որուն, որոյ	Որո՞ւ	Որո՞նց
Տ. Որու, որուն	Որո՞ւ	Որո՞նց
Հ. Զոր	Զո՞վ	Որո՞նք
Բ. Որմէ	Որմէ՞	Որոնցմէ
Գ. Որով	Որով	Որոնցմով

Վարժուքիւն որ, ով դերանուններուն վրայ.

Ո՞վ եկաւ: Այն մարդը զոր տեսար հոս եկաւ: Որմէ՞ իմացար այս շուրը: Ահա՛ այն գրիչը որով գրեցի: Որո՞ւն կը խօսիս: Որո՞նք են ձեր բարեկամները: Ո՞վ տեսար այսօր: Որո՞նց տունը այցելեցիք: Որո՞ւն գիրքն է այս: Որոնցմէ՞ առիթ այդ թղթերը: Կը ճանչնաս այն մարդը որմէ նամակ մը ստացար: Ո՞վ տեսաւ դիս: Այդ կերակուրը զոր կը ճաշակես շատ համեղ է: Այն մարդը որ ձեր բարեկամն է շատ կը գովէ զքեզ: Գիտեմ թէ որոնց հետ կը տեսնուիս: Երկնից երեսը կը փայլի արեւը, որուն շուրջը կը դառնայ երկիրը: Հիմայ ընկերս պիտի կարգայ համարը, որմէ ետքն ալ իմս է կարգը: Ո՞վ որու հետ պիտի երթայ:

78. ՀՐԱ ՀԱՆԳ

Կեներուն տեղ յարմար բառեր դրե՛ք.

Կառքերը կը պահեն ... մէջ: Յորենը կը ծեծեն ... մէջ: Անկողիները կը զեռեղեն ... մէջ: Գիրքերը կը շարեն ... մէջ: Ստակը կը պահեն ... կամ ... մէջ: Սեղանին անօթները կը դնեն ... մէջ: Ճամբորդները իրենց զգեստները կը դնեն ... մը մէջ:

92. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Քիմի՞ արայօրսունուզ, տօսդու՞մ: Պու կիւն սիզի
քէտէրի կէօրիւյօրում: Նէյինի՞զ վար արը: Հիչ պիր
չէյիմ եօգարը. եալընըզ եօրդունում: Պիր ազ ըադը-
րահադ իտէճէյիմ: Արգատաչընըզը նէ՞րէտէ պըրագ-
տընըզ: Սիզի իլէ կէլմէք իսդէմէտի: Օնուն իչի վար
արը պու կիւն. պիդիբմէտիքճէ տըչարը չըգամասըն:
Քէնտիսինի կէօրտիւյինիզտէ պէնտէն չօգ սէլամ իտի-
նիզ: Աճապա սաադ գա՞չ տըր: Չանն իտէրիմ ծնա
չէրեէք վար: Էօյլէ իսէ վազդըմըզ եօգ տուր, պիր աճ
էվէլ կիտէլիմ, վէ իչիմիզին պաչընա կէչէլիմ: Սիզի
չօգ արզուլէմիլ իտիմ, էյի քի կէլտինիզ: Պազը պազը
կէլիպ պիզէ կէօրիւնսէնիզ մէմնուն օլուրուզ:

ՊԱՅՈՒԷՐ. — Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգ-
մանեցէ՛ք:

ԾԱՆՕԹ. — Պիդիբմէքիմե, միւնչեւ ու չլմնայ. այս ձե-
ւին վրայ վարժութիւններ ընել տալ:

94. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեճեւեալ հարցումներուն պատասխանեցէ՛ք.

Ատաղձագործը ինչո՞ւ համար չոր փայտ կը գործածէ:
Ինչո՞ւ համար իւզը ջուրին երեսը կ'ելլէ: Ինչո՞ւ համար
փայտաչէն տուները կը ներկեն: Նամակի մը պահարանին
վրայ ի՞նչ կը գրեն: Ինչո՞ւ համար պէտք չէ երբեք հրացանի
հետ խաղալ: Մարդիկ ինչո՞ւ համար կը պատուաստուին: Ին-
չո՞ւ համար ածուներու մէջ ազը կը դնեն: Առագաստը ի՞նչ
պէս նաւը կը քալեցնէ: Գետին ջուրերը ի՞նչ ուղղութեամբ
կը հոսին:

ԾԱՆՕԹ. — Ուսուցիչը ի հարկին կ'օգնէ աշակերտաց
սոյն հարցումներուն պատասխանելու համար:

93. Թ Ռ Զ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

Թռչունները պզտիկ սիրուն կենդանիներ են։ Փետուրներ ու թեւեր ունին, որով օդին մէջ կը թռչին։ Թռչունները ունին երկու սրունք ու ոտքեր, որոնցմով կրնան հողին վրայ քայել կամ ծառերու ոստերուն վրայ թառիլ։ Կան թռչուններ որ շատ պզտիկ են, ինչպէս, ճնճղուկը և սարեկիկը, կարմրալանջն ու ցախսարեկը, որ մամուռէ և ուրիշ քաներէ պզտիկ բոյներ կը շինեն ծառերու և թուփերու վրայ։

Աղաւնին, ագռաւն ու որին մեծ տեսակ թռչուններ են, նոյնպէս հաւերը որ տուներու մէջ կը գլտնուին և սերմեր կը հաւաքեն ու կ'ուտեն։ Սագերը, բադերը և կարապներն ալ թռչուններ են որ ջուրի մէջ կը լողան և երկու մաշկակապ ոտք ունին, որոնցմով կը շարժին լողալու ատեն։ Ամէն թռչուն հակիթ կ'ածէ իր բոյնին մէջ։ Երբոր ատեն մը անոնց վրայ նստի տաքցնէ՝ ձագուկներ կ'ելեն, ասոր կ'ըսեն թխսել։

ԲԱՌԵՐ.— Փետուր, դէպ.— Սրունք, պահագ.— Թառիլ, դէնէմէ, գօնագ.— Սարեկիկ, գարա խալոգ.— Կարմրալանջ, սագ գոլո.— Ցախսարեկ, շալլ պիւլիւլի.— Մամուռ, էօոոն.— Որի, սիւան գարդա.— Սերմ, դօհոմ.— Հաւաքել, լեփլամագ.— Կարապ, լոյ գոլո.— Մաշկակապ, դէրիլիլ պալլը.— Բոյն, էոմա։

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ տեսակ կենդանիներ են թռչունները։ — Քանի մը պզտիկ թռչուններու անուն տուէ՞ք։ — Որո՞նք են մեծ թռչունները։ — Թռչունները ինչ՞ով կը շինեն իրենց բոյնը և ո՞ւր տեղ։ — Ի՞նչպէս ձագ կը հանեն։ — Այս գործողութեան ի՞նչ կ'ըսուի։

94. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՂԱԻՆԻՆ

Վըտակի մը մէջ մեղու մ'էր ինկեր .
Աս տեսան վերէն աղաւնոյն աչքեր .
Տերեւ մը փրցուց ծառէն աղանին ,
Ու զանի նետեց մահամերձ մեղուին :
Սա լողաց , գընաց և այդ տերեւով
Յամաքը հասաւ ազատ ապահով :
Օր մ'այս աղանին դաշտին մէջ ծառին
Վըայ նստած էր հանդարտ ու լըռին .
Որսորդն արդէն իր հրացանը փայլուն
Անոր ուղղած էր . բայց գալով մեղուն
Խայթեց անոր ձեռք . զո՛ւր անցաւ գնտակ :
Փախաւ աղանին սիրտով գոհունակ :

ԲԱՌԵՐ. — Վտակ , ըրճագ . — Աղանի , կիւլերճին . —
Մահամերձ , էօլեփ էփրէ պոլլոնան . — Յամաք , գարա . —
Հանդարտ , բահար . — Ապահով , էփն . — Լռին , սոս . — Ուղ-
ղած , փիլեդիլ . — Մայթել , սօգճագ . — Զուր , պէյհոփէ .
— Գնտակ , գոփղան . — Գոհունակ , ճիսոն :

ՊԱՏՈՒԷՐ. — 1. Վերի ոտանաւորին իմաստը արձակ կեր-
պով պատմեցէ՛ք :

2. Սոյն ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձրաձայն
արտասանեցէ՛ք :

75. ՀՐԱՀԱՆԳ

Ուղղեցի՛ք հետեւեալ խօսքերը գաղափարներու կարգին
համաձայն .

Կատուն կը բռնէ , կ'ուտէ , կը հալածէ մուկերը : Մարդը
կը մեռնի , կը ծնի , կը տառապի : Ամէն տարի ծառերը կը
զարդարունին պտուղներով , տերեւներով ծաղիկներով և կո-
կոններով : Եւս կերաւ արգիլեալ ծառին պտուղէն և քաղեց :
Փախայ և օձ մը նշմարեցի : Յուդա ինքզինքը կախեց , յուս-
սահատեցաւ և ծախեց իր տէրը :

95. Յ Ո Ր Ե Ն Ը

Յորենը փոքրիկ տունկ մըն է : Սա ամէնէն օգտաւոր բոյսն է որով կը շինուի մեր հացը : Յորենը հողին մէջ ունի արմատ մը , և ցողուն մը հողէն վեր կանգնած , և անոր վրայ ալ երկայն նեղ տերեւներ : Ասիկա ամէն բոյսերու պէս նախ ծաղիկ կը բանայ , և յետոյ ծաղիկները պտուղի կը փոխուին : Յորենին հատիկները ցողունին դադաթը , խիտ առ խիտ շարուած կը կազմեն հասկ մը : Մէկ հասկի մէջ քսանէ աւելի ցորեն կայ :

Երբ հասուննայ ցորենը , երկրագործը կը հնձէ զայն , որայ կը կապէ , դէզ կը շինէ , յետոյ օր մըն ալ կը կամնէ , այսինքն հատիկները կը զատէ բոյսէն , և բոյսին մնացած մասը շարգելով յարգ կը շինէ :

Այս զատուած հատիկները պարկերու մէջ լեցնելով կը ծախէ ջաղացպանին , որ իր ջաղացքին մէջ երկու երկաններու մէջտեղ կը փչրէ ու ալիւր կը շինէ և յետոյ կը ծախէ :

Հացագործը ալիւրով կը շինէ հացը :

ԲԱՌԵՐ. — Կանգնած , փխր փորձուլ — Գագաթ , դէփէ . — Խիտ առ խիտ , սըֆ սըֆ . — Շարուած , փեղկմիւլ — Որայ , Կեօնիւլ պո-դրայ փեմիւլ . — Դէզ , էրդըն . — Կամնել , հարձան փեօյթ . — Զարդել , փողրամաֆ . — Յարդ , սաման . — Պարկ , շուվալ . — Զաղացպան , փեյրմէնքի . — Երկան , փեյրմէն լալը . — Փշրել , ո-ֆալթմաֆ , փողրամաֆ :

ՀՄՐՑԱՐՄՆ. — Յորենը ի՞նչ տեսակ բոյս է և ի՞նչ բանի կը ծառայէ : — Յորենը հասուննալէն վերջ ի՞նչ կ'ընեն , և ի՞նչպէս ալիւրի կը վերածեն : — Ի՞նչ ըսել է հնձել , որայ , դեզ , կամնել , ջաղացք :

96. ՄՏԱՑԻՐ ԳԻՏՈՒՆԸ

Մեծ գիտուն մը իր բարեկամներէն մէկուն այցելութեան դացեր էր: Տուն դարձած ատենը տեսաւ որ ծխատուփը քովը չէ: Կարծեց թէ իր բարեկամին տունը ձգած է զայն, և հետեւեալ նամակը գրեց անոր. «Սիրելի բարեկամ, կարծեմ թէ ծխատուփս ձեր տունը մոռցած եմ, հաճեցէ՛ք գտնել զայն և գրաբերիս հետ զրկել ինձի»: Բայց պահարանը բոցելու պահուն, գրպանին մէջ ծանր բան մը զգաց, փնտուեց. «Վա՛յ հոս է եղեր, աղաղակեց, է՛յ աւելի աղէկ» = Եւ նամակը բանալով հետեւեալը աւելցուց հոն. «Մի՛ փնտուէք, ծխատուփս գտայ»: Յետոյ նամակը նորէն փակեց ու իր բարեկամին զրկեց:

ԲԱՌԵՐ.—Մտացիր, ագլը դադընդ. — Գիտուն, ալիմ. — Այցելութիւն, զեյարեդ. — Մխատուփ, դի-դի-ն գո-լու-սո. — Կարծել, զանն իդմէ. — Հետեւեալ, ադիտէի. — Գրաբեր, մեմորիալը կեդիբէն իմէ. — Աղաղակել, պաղըրմագ. — Փակել, գափամագ:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Գիտունը ո՛ր գացած էր: — Վերադարձին ի՞նչ տեսաւ, ի՞նչ կարծեց և ասոր համար ի՞նչ ըրաւ: — Մխատուփը ո՛րկէ գտաւ: — Յետոյ ի՞նչ ըրաւ: — Այս արարքին պատճառը ի՞նչ էր:

76. ՀՐԱ ՀԱՆԳ

Պատասխանեցէ՛ք հետեւեալ հարցումներուն.

Տանիքները ի՞նչ բանով կը ծածկեն: Հօտը ո՛վ կը պահպանէ: Մարդուս հինգ զգայարանքները որո՞նք են: Ի՞նչ բաներով կը շինեն մեր հագուստները: Երկրիս չորս կողմերը որո՞նք են: Թանկագին մետաղները որո՞նք են: Որո՞նք են մեր առաջին բարերարները: Չորս վայրենի կենդանիի անունն առէ՛ք: Չորս ընտանի կենդանիի անունն առէ՛ք: Ի՞նչ տարբերութիւն կայ ծովու ջրին և գետի ջրին մէջ: Ո՛ւրկէ կը հանեն հանքածուխը և ի՞նչ բանի կը գործածեն զայն:

97. Է Ա Կ Ա Ն Բ Ա Յ

ՍԱՀՄԱՆՈՒԿԱՆ ԵՂԱՆՈՒԿ

Ա. ՁԵԼ		ՆԵՐԿԱՅ	Բ. ՁԵԼ	
եգ.	Յոմ.		եգ.	Յոմ.
ԵՄ	ԵՆՔ		Կ'ԸԼԼԱՄ	Կ'ԸԼԼԱՆՔ
ԵՄ	ԷՔ		Կ'ԸԼԼԱՍ	Կ'ԸԼԼԱՔ
Է	ԵՆ		Կ'ԸԼԼԱՅ	Կ'ԸԼԼԱՆ

ԱՆԳԵՏԱԿ ԱՆԿԿԱՏԱՐ

ԷԻ	ԷԻՆՔ	Կ'ԸԼԼԱՅԻ	Կ'ԸԼԼԱՅԻՆՔ
ԷԻՐ	ԷԻՔ	Կ'ԸԼԼԱՅԻՐ	Կ'ԸԼԼԱՅԻՔ
ԷՐ	ԷԻՆ	Կ'ԸԼԼԱՐ	Կ'ԸԼԼԱՅԻՆ

ԱՆԳԵՏԱԿ ԿԱՏԱՐԵՏԱԿ

եգ.	Յոմ.
ԵՂԱՅ	ԵՂԱՆՔ
ԵՂԱՐ	ԵՂԱՔ
ԵՂԱԼ	ԵՂԱՆ

ԲԱՏԱՐՃԱՆԿ ԱՊԱՌՈՆԻ

ՊԻՄԻ ԸԼԼԱՄ	ՊԻՄԻ ԸԼԼԱՆՔ
ՊԻՄԻ ԸԼԼԱՍ	ՊԻՄԻ ԸԼԼԱՔ
ՊԻՄԻ ԸԼԼԱՅ	ՊԻՄԻ ԸԼԼԱՆ

ԱՆԿԿԱՏԱՐ ԱՊԱՌՈՆԻ

ՊԻՄԻ ԸԼԼԱՅԻ	ՊԻՄԻ ԸԼԼԱՅԻՆՔ
ՊԻՄԻ ԸԼԼԱՅԻՐ	ՊԻՄԻ ԸԼԼԱՅԻՔ
ՊԻՄԻ ԸԼԼԱՐ	ՊԻՄԻ ԸԼԼԱՅԻՆ

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.		Յոմ.
—		Ըլլա՛նք
Եղի՛ր		Եղէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

	Ներկայ	
Ըլլա՛մ		Ըլլան՛ք
Ըլլաս		Ըլլաք
Ըլլայ		Ըլլան

Անկասար

Ըլլայի		Ըլլայինք
Ըլլայիր		Ըլլայիք
Ըլլար		Ըլլային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Աներեւոյթ

Ըլլալ

Ներկայ ընդունելութիւն

Եղող

Անցեալ ընդունելութիւն

Եղած, եղեր

Ապառնի ընդունելութիւն

Ըլլալու, ըլլալիք

ԾԱՆՅՈՒԹ. — Էական բայը սահմանական ներկայի և անկասարի համար երկու ձեւ ունի. եւ՛ և կ'ըլլամ, եի և կ'ըլլայի, որոնք խմատով ալ քիչ մը կը տարբերին իրարմէ :

98. Ա Ր Ե Ի Ը

Արեւը երկնային մարմին մըն է : Անիկա մեզմէ շատ հեռու է . այնպէս որ եթէ ամիսներով, տարիներով ճամբորդենք, դարձեալ չենք կրնար անոր հասնիլ : Անիկա կ'որ, ոսկեղէն փայլուն սկաւառակի մը պէս կ'երեւի , բայց խիստ մեծ գունտ մըն է :

Արեւը իր ճառագայթներն ու տաքութիւնը կը դրկէ ամէն կողմ : Անոր տաքութիւնն է որ ծառերը կը ծաղկեցնէ, պտուղները կը հասունցնէ և հասկերը կը դեղնեցնէ : Առանց այս տաքութեան բան մը չաճիր : Բայց անիկա տարուան բոլոր եղանակներուն մէջ հաւասար տաքութիւն չի տար : Ամրան մէջ անոր տաքութիւնը շատ է . ձմրան մէջ՝ քիչ . այնան և դարնան մէջ՝ միջակ : Անիկա օրուան բոլոր ժամերուն մէջ ալ հաւասար տաքութիւն չի բաշխեր : Առաւօտուն կանուխ անոր տաքութիւնը հազիւ զգալի է . կէս օրին շատ տաք կ'ընէ . իսկ իրիկունը դարձեալ պակաս կ'զգանք անոր տաքութիւնը :

Այն գեղեցիկ տեսարանը, որ արեւուն ծագելէն քիչ յառաջ կը տեսնուի արեւելքին կողմը, արշալոյս կը կոչուի : Նոյնին նման գեղեցիկ տեսարան մըն ալ կը տեսնուի արեւմուտքին կողմը, արեւը մարը մտնելէն քիչ վերջը . անիկա ալ կը կոչուի վերջալոյս :

ԲԱՌԾԲ. — Երկնային, ակնայի . — Դարձեալ, եկնիորէն . Ոսկեղէն, ալբոնոս . — Սկաւառակ, դեփսի . — Գունտ, Ժարթ . — Ծաղկեցնել, չիկէլէնորիթի . — Հաւասար, մասալի . — Ծիջակ, օրոս . — Բաշխել, արդարմագ . — Զգալի, հիս օլտանոր :

ՀԱՐՏԱՐԱՆ. — Ի՞նչ բան է արեւը և ո՞ր կը գտնուի : — Ի՞նչ օգտակարութիւն ունի ան : — Ամէն ատեն միեւնոյ՞ տաքութիւնը ունի : — Ի՞նչ է արշալոյսը : — Վերջալոյսը ի՞նչ է :

99. ԶՈՒԿԵՐ, ՍՈՂՈՒՆՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ

Զուկերը ջուրին մէջ ապրող կենդանիներ են : Շատեր կան որ կաշի ունին փայլուն թեփերով, նոյնպէս ունին լողակներ որով ջուրին վրայ կը կենան : Զուկերը կրնան շատ շուտ լողալ և իրենց սրտին վրայ կը քալեն : Քանի մը ձուկեր խիստ մեծ են, մարդէն շատ աւելի մեծ . բայց ուրիշներ ալ պզտիկ են . ինչպէս , տառեխներն ու անձրուկները, որոնք թէ ծովու և թէ գետի մէջ խումբ խումբ կը լողան :

Ուրիշ կարգ մը կենդանիներ ալ կան որ սողուն կը կոչուին, բայց մեր երկիրներուն մէջ շատ չեն տեսնուիր : Սողուններն, ինչպէս օձերն ու իժերը, յստակ փայլուն կաշի ունին ձուկերուն պէս, և մեծ խտտերու ու ճահիճներու մէջ կը սողան : Քանի մը սողուններ, ինչպէս գորտն ու քարաթռչը, ոտքեր ունին, որոնցմով կրնան քալել կամ ցատքել :

77. ՀՐԱՀԱՆԳ

Գրաւոր կերպով խոնարհեցե՛ք *հական թայր հետեւեալ անակամներուն հետ, սահկերէն քարգամուռփուններով միասին. ինչոք, ծոյ, հնազանդ, թարի, հարուս :*

ՕՐԻՆԱԿ . — *Ինչօք եմ (ուսուլում), խելօք ես (ուսուսուն, խելօք է (ուսուտար), խելօք ենք (ուսուտուդ), խելօք էք (ուսուտունուդ), խելօք են (ուսուտ արըլար) :*

ԾԱՆՕԹ . — Դաստուն ղանազան օրինակներով, *թէ՛ հայերէն և թէ՛ տաճկերէն, պէտք է լաւ մը վարժեցնէ աշակերտները էական բային ամէն եղանակներու խոնարհմանը :*

Միջատները ուրիշ կարգի կենդանիներ են, որ ամէն տեղ կը գտնուին: Ճանճերը, մեղուկները, մեղուները և թիթեռնիկները միջատներ են, որ ամառ օրեր ասդին անդին կը թռչտին, և երբեմն մեզի շատ նեղութիւն կը պատճառեն :

ԲԱՌԵՐ. — Սողուն, էերպէ սիւրբնէն հայլան. Միջատ, պեօճէտ. — Թեփ, փոլ. — Լողակ էիլգեճէտ գանապ. — Տառեխ, կեօլ պարզը. — Անձրուկ, խամսի. — Երկիր, ձեճէտէր. — Իժ, երան. — Յստակ, պերահ. — Դորա, գորպաղը. — Քարթօ, սիլրիւրան. — Մժղուկ, սիլրիւրէտ. — Նեղութիւն, բահարսըլըտ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչպէս կենդանիներ են ձուկերը և ի՞նչ ունին: — Ո՛ւր կը գտնուին անոնք: — Ի՞նչպէս կրնան լողալ: — Քանի մը ձուկի անուններ կրնա՞ք յիշել: — Սողունները ի՞նչ տեսակ կենդանիներ են: — Անոնք ո՛ւր տեղուանք կը գտնուին և ի՞նչպէս կը քալեն: — Քանի մը սողունի անուններ կրնա՞ք տալ: — Ո՛ւր կը գտնուին անոնք և ի՞նչ կ'ընեն:

78. ՀՐԱ ՀԱՆԳ

Ձանազանեցե՛ք վայրի կենդանիները, ընտանի կենդանիները, բոյունները, սողունները եւ այսպէս գրեցե՛ք.

Գառնուկը ընտանի չորֆոսանի մըն է: Առիւծը վայրենի կենդանի մըն է: Ճնճողուկը բոյուն մըն է: Իժը սողուն մըն է, եւ այլն:

Ոչխար, ծիծեռնակ, էշ, ձի, գալլ, փիղ, ուղտ, արծիւ, շանաձուկ, օձ, կատու, հաւ, վանեակ, Զորի, բազէ, մուկ, բար, վահանաձուկ, տառեխ, շիկահաւ, կոկորդիլոս, վագր, ընձառիւծ, խոզ, մողէս, սոխակ, խղունջ, ռնգեղջիւր, հնդկահաւ, նապաստակ, թութակ, կապիկ, սկիւռ, խլուրդ, աղուէս, ջղջիկ, ոզնի, աքաղաղ, բու:

100. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Կիւնէշ պաղտըղը վագըթ գոյունլար մերատան տէօնէրլէր : Ավճը դիւֆէյի ալուպ օվալարտա կէզէր քի ավ պուլսուն : Պու չօճուգ չօգ եօրուլույօր , չիւնքի հասղալըգտան եէնի չըգմըշ տըր : Գարտաշըմ պու կիւն չօգ չիչէքլէր թօփլատը , օնլարըլա պէօյիւք պիր պուքէդ եափաճաղ տըր : Գապահաղընը իդիրաֆ էգտիյին իչիւն սէնի աֆ էտէրիմ : Չիչէքլէր սուլամատըղընըղ իչիւն գուրուտուլար : Տէմիրի սըճաղ իքէն տէօվէրլէր : Գալէմիսի սանա էօտիւնճ վէրիրիմ էյէր պիր սաաղտան պանա կէրի վէրիրսէն : Սէնի սէվէրիմ , քէօղիւ թապիյաղլարըն եօգ տըր : Պօղոս մէքդէպէ կիտէլի դէրպիյէլի պիր չօճուգ տըր : Մէքդէպտէ պօշ վագըղ կէչիրմէյինիղ . սօնրա փէչիման օլուրսունուղ :

ՊԱՏՈՒԷՐ.—Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգմանեցէ՛ք :

ԾԱՆՕԹ.—Մեքքպէ կիսկի (դպրոց երթալին ի վեր) : Չանազան ուրիշ օրինակներու վրայ այս ձեւին թարգմանութեան վարժեցնել աշակերտները :

ԳՅ. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեճեւեալ բառերուն սկիզբը, ըս յարմարութեան , իմ, *բու, մեր, ձեր, իրեն, իրենց* անձնական դերանունները դնելով, վաքի օրինակին պէս մէկ մէկ խօսքիցնեցէ՛ք .

Ծնողքս, հազուստներս, գիրքդ, գրիչները, հայրը, վարժապետը, խօսքերը, կամքովը, հաճութեամբը, վրայով, ձեռքով :

ՕՐԻՆԱԿ. — Իմ ծնողքս զիս շատ կը սիրեն :

101. Խ Ր Ա Տ Ն Ե Ր

Կանուխ գացէ՛ք անկողին
Որ վայելէ՛ք, քուն մ'աղորո՛ր :
Առտուն կանուխ ելլողին
Ձիղեր կ'ըլլան զօրաւոր :

Եւ յիշեցէ՛ք որ մաքուր
Օգը նաեւ պաղուկ ջուր՝
Պիտի տան ոյժ թանկագին
Ձեր մարմինին ու մըտքին :

Այխատողին համար հաց
Համեղ է քան խորոված ,
Հարուստ, աղքատ, մանչ, աղջիկ,
Այխատանքէ մի՛ փախչիք :

ԲԱՌՈՒՅՐ. — Վայելի, լայնճ օճաճ. — Ձիղ, սընըր. — Յիշել, խաղըրա կէրէրճէր. — Թանկագին, գըյճիղի. — Համեղ, Կարլը :

ՊԱՅՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձրաձայն արտասանեցէ՛ք :

90. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գրաւոր կերպով պատասխանեցի՛ք սա հարցումներուն :

Թէ որ գեանէն դրամով լեցուն քսակ մը գտնէք, ի՞նչ պէտք է ընէք, ի՞նչու համար բան մը ընելէ առաջ լաւ մը մտածել պէտք է : Մեր ծնողքին հանդէպ ի՞նչ պարտականութիւններ ունինք : Եթէ մէկը ձեզի չարիք մը ընէ և վերջէն ալ ձեզմէ բան մը խնդրէ, ի՞նչ պիտի ընէք : Դպրոց գացող տղայ մը ի՞նչ ընելու է : Ձեր ընկերներուն հետ ի՞նչպէս պիտի վարուիք : Աղքատներու հետ ի՞նչպէս պիտի վարուիք :

102. Օ Դ Ը

Դուն ամէն տեղ օգին կը հանդիպիս . ուր որ ալ գտնուիս՝ անիկա կը շրջապատէ քեզ, թէեւ դուն չես տեսներ զայն : Բայց կրնաս զգալ զայն , երբ ձեռքդ արագ արագ երեսիդ առջեւ վեր վար շարժես և կամ երբ շունչ առնես ու տաս : Դուն կրնաս մինչեւ անգամ լսել հովը, երբ պատուհանին առջեւ կը փչէ ու կ'ոռնայ :

Երբ դուն շուրով լեցուն գաւաթ մը պարպես, գաւաթին իսկապէս պարապ չէ . ինչու որ անոր մէջ շուրի տեղ օգ կայ : Օդը կրնայ ամենանուրբ ճեղքուածներէ անգամ անցնիլ : Անիկա բոլորովին թափանցիկ, անգոյն ու թեթեւ է :

Առանց օդի մարդիկ ու կենդանիներ չեն կրնար ապրիլ : Առանց օդի չենք կրնար խօսիլ, ոչ երգել, ոչ լսել, և ոչ ալ թռչունները կրնան թռչիլ : Օդն է որ կը կրէ թռչունները, ամպերն ու ձեր թռուցիկները, ինչպէս ջուրը կը կրէ նաւերը :

ԲԱՌԾԲ. — Շրջապատել, էմբրաֆընը սարժաֆ. — Արագ, չափուֆ. — Մինչեւ անգամ, հադդա. — Ոռնալ, ինչիմէֆ. — Իսկապէս, հաֆիֆադէն. — Ամենանուրբ, փէֆ ինճէ. — Ճեղքուած, երրէֆ, րէլէֆ. — Թափանցիկ, շէֆֆաֆ. — Կրել, լուրժաֆ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Օդը ի՞նչ տեսակ բան է և ո՞ւր կը գտնուի : — Օդը ի՞նչ օգտակարութիւններ ունի :

81. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բուսեացանները գիրով գրեցե՛ք .

7, 13, 18, 34, 35, 37, 40, 53, 55, 61, 77, 89, 93, 104, 108, 110, 151, 199, 200 :

103. Ա. ԼՄՈՐԴՈՒՅԻՒՆ. — (ՍԻՐԵԼ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզ.

Կը սիրեմ

Կը սիրես

Կը սիրէ

Յոք.

Կը սիրենք

Կը սիրէք

Կը սիրեն

Անցեալ անկասար

Կը սիրէի

Կը սիրէիր

Կը սիրէր

Կը սիրէինք

Կը սիրէիք

Կը սիրէին

Անցեալ կասարեալ

Սիրեցի

Սիրեցիր

Սիրեց

Սիրեցինք

Սիրեցիք

Սիրեցին

Բացարձակ ապառնի

Պիտի սիրեմ

Պիտի սիրես

Պիտի սիրէ

Պիտի սիրենք

Պիտի սիրէք

Պիտի սիրեն

Անկասար ապառնի

Պիտի սիրէի

Պիտի սիրէիր

Պիտի սիրէր

Պիտի սիրէինք

Պիտի սիրէիք

Պիտի սիրէին

ՀՐԱՄՈՑԱԿԱՆ ԵՂԱՆՈՎ

Եզ.	Յոփ.
—	Սիրեհ'նք
Սիրէ՛	Սիրեցէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍՏԱԿԱՆ ԵՂԱՆՈՎ

Ներկայ

Սիրեմ	Սիրենք
Սիրես	Սիրէք
Սիրէ	Սիրեն

Անկասար

Սիրէի	Սիրէինք
Սիրէիր	Սիրէիք
Սիրէր	Սիրէին

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆՈՎ

Անեղևոյթ

Սիրել

Ներկայ ընդունելութիւն

Սիրող

Անցեալ ընդունելութիւն

Սիրած, սիրեր

Ապառնի ընդունելութիւն

Սիրելու, սիրելիք:

104. Լ Ո Ւ Ս Ի Ն

Լուսինը երկնային մարմին մըն է, ինչպէս արեւը : Երբ խաւարը պատած է՝ երկինքի վրայ կը տեսնենք փայլուն լուսաւորներ, որոնց մէջէն ամէնէն մեծ երեւցածն է լուսինը : Անոր ճառագայթները արեւուն ճառագայթներուն չափ փայլուն չեն և տաքութիւն չունին : Լուսինը միշտ միեւնոյն ձեւով չերեւիր մեզի : Երբ անիկա նուրբ եղջիւրի կամ մանգաղի ձեւը առնէ՝ մահիկ կամ նոր լուսին կը կոչուի : Մահիկը երթալով կը մեծնայ ու կ'ըլլայ կիսալուսին, որ ամբողջին կիսուն չափ կ'երեւի : Ասիկա ալ մեծնալով ու լրանալով կ'ըլլայ լիալուսին : Լիալուսինը կարծես մարդու նմանող կըրդ դէմք մը ունի, երկու խոշոր աչքերով : Բայց պէտք է գիտնալ որ պնոր վրայ ոչ մարդ կայ, ոչ դեւ, ոչ ալ հրեշտակ : Անիկա անբնակ երկիր մըն է, և երեսին վրայ տեսնուած բիծերը անոր լեռներն ու ձորերը կը ներկայացնեն :

ԲԱՌԵՐ. — Սաւար, գարանլըճ. — Պատել, գափլամագ. — Լուսաւոր, փիփէպ. — Ձեւ, պիլիճ. — Նուրբ, ինճէ. — Մահիկ, այ. — Կիսալուսին, էարըճ այ. — Լրանալ, դէփիլ օլմագ. — Լիալուսին, դէփիլ այ. — Պէտք է գիտնալ, պիլմէլէ գիբ. — Դեւ, լէյնան. — Անբնակ, վէրան. — Բիծ, լէփէ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ է լուսինը և ո՞ր ատեն կ'երեւի մեզի : — Ի՞նչ ձեւեր կ'առնէ ան և այդ ձեւերուն անունը ի՞նչ է : — Ի՞նչ տեսակ բիծեր կ'երեւին վրան, և ի՞նչ են այդ բիծերը :

ՅՁ. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Սիրեյ բայիկն պէս խոնարհեցե՛ք հետեւեալ բայերը .

Քալել, ճաչել, պարել, գրել, բռնել, շինել, տաչել, պահել, կարել, լարել, աւլել, ճարել, մանել, հանել :

105. ՈՒՐԻՇԻՆ ՄԻ ՆԱԽԱՆՁԻՐ

Անգամ մը գորտերու բազմութիւն մը լճակի մը եզրը նստած էր : Անոնք ամէնքն ալ շատ ուրախ էին. ասդին անդին կը ցատքըտէին ու իրենց կռկռոցով օդը կը լեցնէին : Խղունջ մը, որ անոնց այս արարքը կը դիտէր, նախանձելով ըսաւ. « Հարկաւ դուք կրնաք ուրախ ըլլալ : Չորս երկայն ու գեղեցիկ սրունքներ ունիք, որոնցմով տեղէ տեղ կրնաք ցատքել : Բայց ես խեղճս ստիպուած եմ սողալ, և ասկէ զատ մինչեւ անգամ տունս կ'ընակիս վրայ կրելու եմ » :

Խղունջը երբ ասիկա կ'ըսէր, անդիէն թռչելով արագիւ մը եկաւ : Անիկա արագութեամբ շատ մը գորտեր իրարու ետեւէ բռնեց ու կլլեց : Երբ խղունջը ասիկա տեսաւ, ըսաւ. « Հիմա կը տեսնեմ որ ես աւելի բաղդաւոր եմ : Թէեւ չեմ կրնար ասդին անդին ցատքըրտել, բայց շատ մը թշնամիներու դէմ պաշտպանուած եմ : Աւելի կ'ընտրեմ տունս վրաս կրել քան թէ թէ կեանքս միշտ վտանգի մէջ զգալ » :

ԲԱՌԵՐ.— Նախանձիլ, գըսգանձագ. — Բազմութիւն, գալապալըգ. — Լճակ, կէօլ. — Կռկռոց, գորպոպղըլարըն պոպըր-ճասը. — Արարք, իլ. — Հարկաւ, էլդիդոթ. — Խեղճ, զեվալլը. — Ստիպուած, մեգոյո. — Սողալ, էերոթ օր-րի-նմէ+. — Կլլել, էո-դճագ. — Բաղդաւոր, պոթոթիտար. — Պաշտպանուած, ճո-հաֆապա օլը-նճո-լ. — Ընտրել, էնդիխապ էդմէ+. — Վտանգ, դէհլիթէ. — Թշնամի, րի-լճան. — Բան թէ, նէդիթիմ :

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ տեսաւ խղունջը և ի՞նչ կ'ըսէր : — Այդ ըսած պահուն ի՞նչ պատահեցաւ : — Խղունջը ասիկա տեսնելով ի՞նչ ըսաւ : — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը :

ԾԱՆՈԹ.— Աւելի քան քի : — Այս ձեւին վրայ զանազան վարժութիւններ ընել տալ աշակերտներուն, հայերէնէ տաճկերէն և փոխադարձաբար :

106. Ա Պ Ո Ւ Ր Ը

«Աս ի՞նչ անհամ ապուր է, ըսաւ Շուշանիկ, իր գեղեցիկ դէմքը թթուեցնելով, և դգալը մէկդի դնելով, ա՛լ չեմ ուզեր ուտել:»

Մայրը պատասխանեց. «Ես ալ առանկ թթուած երես տեսնել չեմ ուզեր: Գիտնալու ես որ, հիմա ուրիշ ապուր եփելու ժամանակ չունիմ. բայց կրնաս վստահ ըլլալ որ իրիկունը առջեւդ դրուելիք ապուրը աւելի լաւ պիտի գտնես:»

Մայրը Շուշանիկը հետը առաւ պարտէզ իջաւ, գետնախնձորներ փորելով դուրս հանեց, և Շուշանիկ մինչեւ իրիկուն զանոնք մէկիկ մէկիկ ժողվեց ու պարկին մէջ լեցուց: Ասիկա անոր համար պզտիկ աշխատանք մը չէր. հետեւապէս յոգնեցաւ ու անօթեցաւ:

ՅՅ. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կեսերուն սեղ յարմար բառեր դրե՛ք.

Այն անասուններն որ խտով կը սնանին կը կոչուին... :
... է այն գետն որուն վրայ կարելի է նաւարկել: Քաղցր համ ունեցող պտուղին կ'ըսեն... : Մէկէ աւելի վանկերէ բաղկացող բառերուն կ'ըսեն... : Այն մարդն որուն խօսքերը կը զուարճացնեն զմեզ՝ կը կոչուի... : Խիստ բնաւորութիւն ունեցողին կ'ըսեն... : ... է այն անձը որուն վրայ ծանօթութիւն չունինք: Ով որ թոթովելով կը խօսի, անոր կ'ըսեն... :

ԾԱՆՈԹ.— Դասատուն ի պահանջել հարկին, կ'օգնէ աշակերտներուն՝ պէտք եղած բառերը գտնելու:

Երբ անոնք տուն դարձան, մայրը ապուրը սեղան բերաւ : «Աս ի՞նչ պատուական ապուր է . ասոր համը բոլորովին տարբեր է» ըսաւ Շուշան անկէ ճաշակելով : Անիկա պնակ / մը լեցուն կերաւ : Իսկ մայրը ծիծաղելով ըսաւ . «Աղջիկս, ասիկա ճիշդ նո՛յն ապուրն է զոր կէս օրին անհամ գտար ու չի կերար . անիկա հիմա քեզի աւելի համով կուգայ, որովհետեւ կէս օրէն մինչեւ իրիկուն ժրութեամբ աշխատեցար» :

ԲԱՌԵՐ.— Ապուր, չքոյտ . — Անհամ, քաթսըղ . — Թըթուեցնել, էփել-մէփ . — Վստահ, էֆն . — Գեանախնձոր, էկր էլմասը . — Փորել, գաղըմագ . — Հետեւապէս, պնայէն ալէյ . — Պատուական, կիզէլ . — Տարբեր, պալֆա . — Ճաշակել, էէմէփ . — Ծիծաղիլ, կէլմէփ . — Ժրութիւն, չէմէլէփ :

ՀԱՐՑԱՐԱՆ.— Շուշանիկ ի՞նչ ըսաւ մօրը, կէս օրուան ճաշին ժամանակ : — Մայրը ասոր ի՞նչ պատասխանեց : — Յետոյ ի՞նչ ըրին : — Իրիկունը Շուշանիկ ի՞նչպէս գտաւ ապուրը : — Այն ատեն մայրը ի՞նչ ըսաւ անոր : — Այս պատմութենէն ի՞նչ կը հետեւցնէք :

84. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գտե՛ք երեքական բառ որ ամանցուած ըլլան հետեւեալ բառերէն .

Գործ, խելք, միս, ծաղիկ, ժամ, ջուր, սէր, միտք, խօսք, սխալ, ուղիղ, գոյն, լոյս :

ՕՐԻՆԱԿ.— Գործ . գործաւոր-անգործ-գործունեայ :

107. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Պիրատերինիդ քէնտի էլպիտէլէրինի հէմիրէմէ
 Կէօսդէրտի : Պիր փէտէր քէնտի էվլատարընը սէվէր ,
 Ֆազաթ օնլարըն գուսուրլարընը սէվմէղ : Գարտաշըմըն
 գըրլանդըն գուշու տիւն գաֆէտէն ուշտու : Նիչի՞ն
 միսաֆիրէրի էյի գապուլ էդմէ, յօրսընըդ : Ինսանիյէգլէ
 գապուլ էդմէք լազըմ տըր : Բէօմիւր պաշա վուրուր :
 Պու ատամ տիւն սապահ կէլտի վէ պու ազչամ կի-
 տէճէք տիր : Բէօյէ կիգտիյիմիգտէ մէնէքլէլէր չիչէք աշ-
 մըշ ըտը : Գարտաշըմ եէտի եաշընտա օլտըղը գէման
 մէքդէպէ կիգտի , վէ պէշ սէնէտէն պէրի մէքդէպտի
 տիր : Պու մէքդուպը սիգէ վէրտիլէրի վազըդ փէտէ-
 ըրինիդ կէլմի՞շ մի իտի : Պու տիլէնճի աճըգտան էօլէճէք
 իտի . պիր փարչա էքմէք վէրտիմ քէնտիսինէ : Վալի-
 տէմ կիգմէք իչիւն հազըրլանըյօր : Եալանճըլար տօղ-
 ըու տա սէօյլէսէլէր քիմսէ ինանմադ : Էօյլէ տէյի՞լ մի :
 Սի՞ղ նէ տէրսինիդ : Կէնճըրտէ չալըյմայան իհդիար-
 լըգտա եէյէճէք էքմէք պուլամադ : Սիլ տայմա օյնա-
 յօրսունուդ , վէ ասլա չալըյմայօրսընըդ : Պէօյլէ օլմադ :

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգ-
 մանեցէ՛ք :

ՅԵ. Հ Ր Ա Հ Օ Ն Գ

Ըսե՛ք

10. Ի՞նչ կ'ըսեն այն անձին որ կորսնցուցած է իր աշ-
 քերը — մէկ ոտքը — մազերը — ամբողջ անդամները չար-
 ժեկու կարողութիւնը — խելքը — առողջութիւնը — յոյսը —
 որդին :

1) 20. Ի՞նչ կ'ըսեն գետի մը որ ջուր չունի . ծաղկի մը որ
 թարմ չէ . քաղաքի մը որ բնակիչ չունի . ծառի մը որ ող-
 տուղ չունի :

108. Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Փ Ե Ր Ը

Արօրի մը խոփը երկար ատեն աշխատած չըլլալով, ժանգով ծածկուած էր, և այլեւս փայլուն չէր: Օր մը կը տեսնէ որ ուրիշ խոփ մը կ'անցնի բողբոլին փայլուն: Այս վերջինը աշխատութենէ կը վերադառնար. օրն ի բուն հերկած էր հողը: Ժանգոտած խոփը կ'ըսէ փայլուն խոփին. «Թէպէտ երկուքս ալ պողպատէ շինուած ենք, սակայն ես ալտոտս եմ, իսկ դուն փայլուն: Մ'ըրկէ առիր այդքան պայծառ փայլդ:» «Աշխատութիւնը տուաւ ինձ այս փայլը», կը պատասխանէ միւսը:

Աշխատութիւնը կը պահպանէ առողջութիւնը. ծուլութիւնը, ընդհակառակն, կը ջլատէ ամէնէն ուժեղ կազմուածները:

ԲԱՌԵՐ.— Խոփ, սապան փէմբի. — Հերկել, չէֆը սիւրմէ. — Գողպատ, չէլէլ. — Օրն ի բուն. պիտի-ն կէ-ն. — Գայծառ, պէրահ. — Փայլ, փարլագլըգ. — Ջլատել, գո-վեր-փէն փի-րի-րմէ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ է խոփը: — Ի՞նչ պատահեցաւ ժանգով պատած խոփին: — Ի՞նչո՞ւ համար միւս խոփը փայլուն էր: — Ի՞նչպէս խօսեցան երկու խոփերը իրարու հետ: — Այս պատմութենէն ի՞նչ բարոյական կը հետեւի:

86. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետրուն տեղ յարմար բառեր դրճ'ք.

Մեղուն մեզի... կուտայ: Գէտք է որ սողաք յարգեն իրենց...: Զուրը... կը մարէ: Շաքարը...էն կամ ... կը հանեն: Պատուաւոր խանութպան մը չի խաբեր իր...: Շանթարգելը մեզի ... էն կը պաշտպանէ: Կ. Գոլիս ... մայրաքաղաքն է: Արեւը և ... կը լուսաւորեն զմեզ: Կատուն և շունը ... կենդանիներ են: Աշխարհի շորս կողմերն են...: Աւայերէն... կը գոյանայ:

109. ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ՔՈՒՆԸ

Ծաղիկները հողին տակ
 Կը քրնանան քովէ քով .
 Կը ծածկէ ձիւնն սպիտակ
 Զանոնք կակուղ վերմակով :
 Բարին Աստուած գարնան հետ
 Կուգայ անոնց մօտ լրուիկ ,
 Եւ վերմակը կ'առնէ ետ ,
 Կ'ըսէ . « Ելէք , ա՛լ հերիք : »
 Ու շրփելով աչքերնին՝
 Ծաղիկները կ'արթննան ,
 Եւ դուրս գալով խնդագին՝
 Բարեւ կուտան նոր գարնան :

ԲԱՌԵՐ. — Սպիտակ , պէյալ . — Վերմակ , էօրդան . —
 Լուիկ , «ո-» . — Հերիք , էլվերիք . — Խնդագին , կի-լերէր :

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձ-
 րաձայն արտասանեցէ՛ք :

87. ԱՇԵԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱՑԱՑՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսուցիչը կը բացատրէ հետեւեալ բառերը եւ աւակերտ-
 ները կը կրկնեն զայնս .

Կղզի	Անապատ	Նեղուց	Լիճ
Թերակղզի	Լեռ	Այր	Զրվէժ
Պարանոց	Զոր	Ծով	Զրանցք
Հրուանդան	Լեռնաշղթայ	Ծոց	
Դաշտ	Հրաբուխ	Գետ	

110. ՁԻ ԵՒ ԷՇ

Ձին և էշը երկու մեծ կենդանիներ են որ մարդոց կը ծառայեն : Կը գործածենք զանոնք հեծնելու, բեռ կրելու, կառք և սայլ քաշելու : Ձին աւելի կ'արժէ, աւելի աշխոյժ և ուժեղ է և աւելի հնազանդ : Ձիուն և էշուն բերանը սանձ կը դնենք զսպելու համար : Երկուքն ալ չորքրտանի են կատուին և շունին պէս : Ձիուն ստքին ծայրը սմբակ կայ. անոր վրայ պայտ կը գամեն : Էշն ալ սմբակ ունի, ան ալ կը պայտեն :

Ուրեմն ձի և էշ սմբակաւոր են : Այս կենդանիները խոտ կ'ուտեն . ուրեմն խոտակեր են : Ձի հեծնող մարդ մը հեծեալ կամ ձիաւոր կ'ըսուի :

ԲԱՌԵՐ. — Ծառայել, իւրյձէլ՝ էդձէ+. — Գործածել, գոլլանձագ. — Հեծնել, պինձէ+. — Բեռ, էի+. — Սայլ, էի+. արապար. — Արժել, պէյձէ+. — Աշխոյժ, չէվի+. — Սանձ, կէժ. — Չսպել, զապլ՝ էդձէ+. — Պայտ, նալ. — Պայտել, նալլանձագ. — Բուսակեր, նէպալ էէյէն. — Հեծեալ, սիւվարի. — Ձիաւոր, ադլը :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք ձին և էշը, և ըսէ՛ք թէ անոնք մեզի ի՞նչ օգտակարութիւն ունին :

88. ՀՐԱ ՀԱՆԳ

Ըսէ՛ք թե ինչե՞ր կ'ընեն.—

Երկրագործը, դարբինը, բժիշկը, քահանան, կօշկակարը, նպարավաճառը, փաստաբանը, ձին, էշը, կովը, այխարը, թռչունը, մեղուն, թիթեռնիկը, հաւը, աղքատը, մանուկը, դպրոցականը, հայրը, սպասաւորը :

ՕՐԻՆԱԼ.— Երկրագործը արտը կ'աղբէ, կը հերկէ, աւոր կը վարէ, կը ցանէ, կը մշակէ, կը հնձէ և այլն :

111. ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Մարդիկ շատ բաներու պէտք ունին հանդիստ ապրելու համար: Հաց, շաքար, գինի և ուրիշ սնունդներ, վերարկու, կօշիկ և ուրիշ հագուստներ. աթոռ, կանթեղ և ուրիշ կարասիներ. տուն, դպրոց, եկեղեցի և ուրիշ շէնքեր և այլն, և այլն: Ասոնք ամէնքն ալ պէտք են:

Բոլոր այս առարկաները մեր ձեռքը կը հասնին շինուած, պատրաստ: Մարդիկ շինած են զանոնք: Այս բաները շինելու համար պէտք եղածը կը գտնեն կամ կենդանային մարմիններու, կամ բուսայիններու և կամ հանքայիններու մէջ:

Միտը, կաթը, հաւկիթը, մեղրը կենդանային սնունդներ են, կ'ուտուին: Բուրդը, ստեւը, մետաքսը կենդանային հիւսելիներ են, հիւսուած կ'ըլլան: Արմախները, ընդեղէնները, բանջարեղէնները, միրգը բուսական սնունդներ են: Վուշը, կանեփը և բամպակը բուսական հիւսելիներ են: Զուրը և կերակուրներու աղը հանքային սնունդներ են: Քարերը, մետաղները, հանքածուխը շատ տեսակ օգուտներ ունին:

Կառով խեցեղէն կը շինեն: Աւազով, կիրով և բոթասով ապակի կը շինեն: Բոլոր այս մարմինները, կենդանային, բուսային և հանքային, որոնցմով կը շինեն մարդիկ այնքան կարեւոր առարկաներ, կ'ըսուին նախնական ճիւղ:

ՌՍՌՆԵՐ. — Գիտելիք, պիլիկեճէր շէյր. — Պատրաստ, հապըր. — Ստեւ, գըլ. — Հիւսեւլի, նիսճ օլո-նամագ շէյ. — Հիւսուած, Ֆինսո-ճադ (գո-մալ). — Արմալիք, զահրէ. — Ընդեղէն, պագլիկ (ֆասո-ճա կիտի զահրէ-լէր). — Միրգ, եկեղ. — Վուչ, ի-սդի-փի. — Կանեփ, շէնպիլ. — Կաւ, շիլ. — Խեցեղէն, շիլիկն իտփըլըլ եվանի. — Աւազ, գո-ճ. — Բոթա, փօլա. — Կարեւոր, էհէ-ճիլիլի. — Նախնական, իդդիպայի. — Նիւթ, մարտէ :

ՀՍՐՅԱՐԱՆ. — Մարդիկ ի՞նչ բաներու պէտք ունին հանդիստ ապրելու համար : Այս պէտքերը ի՞նչ բաներէ կը շինուին : Ընէ՛ք թէ որո՞նք են կենդանական անունդները, կենդանական հիւսելիները, բուսական անունդները, բուսական հիւսելիները, հանքային անունդները և ուրիշ օգտակար հանքերը : Ի՞նչ բաներէ կը շինեն ապակին : Նախնական նիւթերը որո՞նք են, և անոնցմով ի՞նչ կ'ըլլայ :

ԾԱՆՕԹ. — Դաստատուն այս դասը կրնայ աւելի երկարել, և զանազան ուրիշ պիտանի ծանօթութիւններով աշակերտները լուսարանել :

ՅԹ. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետերուն տեղ յարմար բառեր դրե՛ք.

Բան մը աւելի մաքուր ընելուն կ'ըսեն . . . : Աւելի ամուր ընելուն . . . : Աւելի երկար ընելուն . . . : Աւելի հաստատուն ընելուն . . . : Աւելի քաղցր ընելուն . . . : Աւելի բարակ ընելուն . . . : Փոփի վերածելուն . . . : Աւելի գեղեցիկ ընելուն . . . : Աւելի լայն ընելուն . . . : Գաջալերութիւն տալուն . . . :

112. Հ Ա Ի Ը

Հաւը բակին մէջ և տանը մօտերը կ'ապրի : Անիկա ընտանի թռչուն մըն է , ուրիշ թռչուններու պէս փետուրներով ծածկուած : Անիկա գլխուն վրայ կարմիր, մսուտ կատար մը, կտուց մը, և կտուցին տակը երկու բլթակներ ունի : Անոր ականջները չեն տեսնուիր . ա-նոնք փետուրներուն տակ պահուած են : Հաւը ունի նաեւ երկու կարծ թելեր և պոչ մը : Անոր երկու զօրաւոր ոտքերը ունին չորսական մատ :

Հաւը շատ օգտակար ընտանի թռչուն մըն է : Անիկա հակիթ կ'ածէ որ այնքան համեղ է : Անոր միսն ալ շատ պատուական է . իսկ անոր փետուրներով բարձ և անկողին կը լեցնեն :

Այս ամենուն հակառակ, անիկա թերութիւն մը ունի . ուր որ կակուղ հող գտնէ, կը սկսի իր ոտքերովը փորել, և այսպէս երբեմն փնաս կը հասցնէ պարտէզին մէջ ցանուած սերմերուն և նորածիլ բոյսերուն :

ԲԱՍՆԻՐ. — Բակ, ակլո. — Փետուր, դիւյ. — Մսուտ, էդլ. — Կատար, դէփէ. — Բլթակ, գոլագ էդի. — Կարծ, գըսս. — Պոչ, գոյրոգ. — Թերութիւն, գոսոյր. — Կակուղ, էոսոլագ. — Վնաս, զարար. — Նորածիլ, էէնի ֆըլէրըլ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք հաւը : Ի՞նչ տեսակ թռչուն մըն է և ի՞նչ օգուտներ ունի : Թերութիւն ալ ունի՞ և ի՞նչ է այդ թերութիւնը :

90. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

1. Մտռէին նման ուս վերջացող ուրիշ բառեր գտէ՛ք եւ նշանակութիւնը տուէ՛ք :

2. Նորածիյին նման նոր մասնիկով սկսող քանի մը բառեր գտէ՛ք եւ նշանակութիւնը տուէ՛ք :

113. ԽՈՂԵՄՈՒՅԻՒՆ ԵՒ ՅԱՐԱՏԵՒՈՒՅԻՒՆ

Դպրոցական մը իր շրթունքին մէջ կը սեղմէ կեռաս մը, և անոր կուտը դուրս կը նետէ: Մերունի մը կ'առնէ զայն և կը թաղէ հերկուած հողի մը մէջ, տղուն աչքին առջեւ, որ կը ծիծաղի այդ արարքին վրայ: Ժամանակ մը ետքը դպրոցականը նորէն կ'անցնի այն տեղէն և կը տեսնէ կուտը թուփ եղած: Մերունին դարձեալ հոն է, որ կը կտրէ, կը պատուաստէ և կը պաշտպանէ զայն ամէն վտանգի գէմ:

Ի՞նչ բանի օգուտ ունի այդչափ յոգնութիւն, կ'ըսէ մտքէն պատանին: Բայց երբ չափահաս կ'ըլլայ անցնելով նոյն ճամբէն, նորէն կը գտնէ ծառը պտուղներով ծածկուած, որոնք իր ծարաւը կ'անցնեն, և վերջապէս հասու կ'ըլլայ ծերունիին խոհեմութեան:

ՈՍՈՍԹ. — Խոհեմութիւն, իհրեադըգ. — Յարատեւութիւն, րեվամ, սեպար. — Շրթունք, րո-րոգ. — Պատուաստել, ալամագ. — Յոգնութիւն, էօրդո-նլո-գ. — Չափահաս, էհրեյիշ աբամ. — Վերջապէս, նիհայեդ. — Հասու ըլլալ, անլամագ:

ՀՍՐՑՍՐՍՆ. — Դպրոցականը ի՞նչ կ'ընէ կեռասին կուտը: Մերունին ի՞նչ կ'ընէ այն կուտը: Դպրոցականը երկրորդ անգամուն ի՞նչ վիճակի մէջ կը տեսնէ կուտը և մտքէն ի՞նչ կ'ըսէ: Վերջապէս երրորդ անգամ ի՞նչ վիճակի մէջ կը գտնէ կուտը: Այս պատմութենէն ի՞նչ կը հետեւցնէք:

91. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հոլովեցե՛ք հետեւեալ թիւերը .

Մէկ, երկու, հինգ, վեց, եօթն, ինն, քսան, երեսուն:

114. Կ Ո Վ Ը

Կովը արտուի մէջ և արօտի վրայ կ'ապրի : Անոր մարմինն մասերն են գլուխ , իրան , չորս ոտքեր , ծիծ և պոչ :

Գլխուն վրայ մէկ բերան մը , երկու աչքեր , երկու կախ ականջներ , զոյգ մը կոր եղջիւրներ ու շատ լայն ճակատ մը ունի :

Կովին իրանը հաստ ու կոշտ է : Անոր ոտքերը հաստ են և ամէն մէկը երկու կճղակ ունի : Անոր ծիծը չորս պտուկներ ունի և պոչին ծայրը մազերու փուռնջ մը կայ :

Անոր սնունդն է թարմ կամ չոր խոտ , թեփ , յարդ , և այլն : Անիկա իր կերը ուտելէն ժամանակ մը ետքը՝ կրկին բերանը կը բերէ ու հանդարտ հանդարտ նորէն կը ծամէ , կ'որոճայ . անոր համար անիկա որոճացող կը կոչուի :

Կովը շատ օգտակար կենդանի մըն է : Անիկա մեղի կաթ կուտայ , ուսկից կարագ ու պանիր կը շինուի : Անոր միսը շատ համեղ է : Անոր կաշիէն կոշիկ , և եղջիւրներէն կոճակ , դանակի կոթ ու սանտր կը շինեն :

ԲԱՌԵՐ. — Արօտ , չայր չիմէն . — Իրան , պէտէն . — Ծիծ , մեմէ . — Կախ , սարգ . — Զոյգ , չիֆդ . — Կոշտ , գապա . — Կճղակ , դրնագ . — Պտուկ , մեմէ որոճ . — Փուռնջ , պէմէդ . — Թարմ , դաղէ . — Թեփ , փեփէ . — Յարդ , սաման . — Սանտր , լարագ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Եկարագրեցէ՛ք կովը : Ընէ՛ք թէ ի՞նչ տեսակ կենդանի է ան : Ի՞նչ օգտակարութիւններ ունի մեզի :

115. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Փօռդածը քէօյէ եէդիշտի: Քէնտիսինի ճատտէտէ կէօրտիւմ: Աճապա սիգէ մէքդուպ կէդիրտի՞ մի: Սիզին եափաճաղընըը պէն եափտըմ: Պէնի ալտադտընը: Տէտիյինիգէ ինանտըմ: Սիգի կէօրմէք իչիւն պուրայա կէլտիմ: Պու հիքեայէյի իչիդտիյիմիզտէ չօգ կիւլտիւք: Շու աղաճըն կէօլկէսի ալդընտա պիր աղրահադ էտէճէյիմ: Սիզ պիւսպիւդիւն հագարզսընը: Պէլքի պու կիւն Ավրօփատա պուլունան պիրատէրիմէ պիր մէքդուպ եազարըմ: Քիդապլարընըը դարմագարըըը պու սանտըղըն իչինէ գօմուչլար: Կէլ շունլարը էյիճէ այըրալըմ: Տիւնեա կիւնէյին էթրաֆընտա տէօնէր իւչ եիւզ ալդմըչպէչ կիւնտէ: Պիր ազտան կիտէճէյիմ: Ֆագաթ էվէլա սիգի եալընըզ կէօրմէք իսթէրիմ: Օ ատամտան գաչընըզ, չիւնքի չօգ Ֆէնա տըր: Պիւպիւլլէր քիւչիւք գուչլար տըր: Պունլար տայմա եալընըզըը սէվէրլէր: Ազչամլարը էօդէրլէր:

ՅՅ. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գսնել հինգ անուն որ հետեւեալ առարկաներուն մատուցի կազմեն.

Մառ, հագուստ, տուն, ձեռք, գլուխ, կկեղեցի, նաւ, ժամացոյց, բերան, գետ, ագարակ, թատրոն, դպրոց, երկինք, քաղաք, անկողին, շերամ, սեղանի սպաս, գրասեղան, կառք, գիրք:

ՕՐԻՆԱԿ. — Մառ. — Արմատ, ճիւղ, տերեւ, ծաղիկ, պտուղ:

116. Բ. ԼՏՈՐԴՈՒԹԻՒՆ. — (ԻՍՍԻԼ)

ՍԱՀՄԱՏԱԿԱՆ ԵՂԱՏԱԿ

Ներկայ

Եզ.

Կը խօսիմ
Կը խօսիս
Կը խօսի

Յոճ.

Կը խօսինք
Կը խօսիք
Կը խօսին

Անցեալ անկասար

Կը խօսէի
Կը խօսէիր
Կը խօսէր

Կը խօսէինք
Կը խօսէիք
Կը խօսէին

Անցեալ կասարեալ

Խօսեցայ
Խօսեցար
Խօսեցաւ.

Խօսեցանք
Խօսեցաք
Խօսեցան

Բացարձակ ապառնի

Պիտի խօսիմ
Պիտի խօսիս
Պիտի խօսի

Պիտի խօսինք
Պիտի խօսիք
Պիտի խօսին

Անկասար ապառնի

Պիտի խօսէի
Պիտի խօսէիր
Պիտի խօսէր

Պիտի խօսէինք
Պիտի խօսէիք
Պիտի խօսէին

ՀՐԱՄԱՅՈՒՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.
—
Խօսէ՛

Յոփ.
Խօսի՛նք
Խօսեցէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Խօսիմ
Խօսիս
Խօսի

Խօսինք
Խօսիք
Խօսին

Անկասար

Խօսէի
Խօսէիր
Խօսէր

Խօսէինք
Խօսէիք
Խօսէին

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Աներեւոյթ

Խօսիւ

Ներկայ ընդունելութիւն

Խօսող

Անցեալ ընդունելութիւն

Խօսած, խօսեր

Ապառնի ընդունելութիւն

Խօսելու, խօսելիք

117. ՄԱՆՈՒԿԸ ԵՒ ԳԻՐԲԸ

Եկո՛ւր , ըսէ՛ , գիրք սիրական ,
Մէջըդ ո՞րչափ ճոխ գանձեր կան .
Քաղաքացի և գիւղացի
Քեզ կը կոչեն շատ խելացի :
Հօրըս , մօրըս խօսքին հըլու՝
Կուգամ գաղտնիքդ հասկընալու .
Ականջէս վար պատմէ՛ հիմայ ,
Կամաց խօսէ՛ , մարդ չիմանայ :
— Բայց չես խօսիր . խո՞ւլ ես , մո՞ւնջ ես :
Կարծածիս չափ իմաստուն չես :
— Կեցի՛ր , մէյ մ՛ալ նայիմ մէջը ,
Ո՛հ , ի՛նչ լաւ է սա մէկ էջը .
Ամէնն ալ լաւ , ո՛հ , սիրուն իմ ,
Գաղտնիքդ գըտայ . ա՛լ հոգ չունիմ :
Գիրք ունենայն չէ բաւական ,
Զայն կարդալն է գանձ պատուական :

ԲՕՆԻՐ. — Մանուկ , շքո-գ . — Սիրական , սեվեւե . —
Ճոխ , զէնկէն . — Գանձ , պէֆէնէ . — Հլու , էլեաադու . —
Գաղտնիք , սրբ . — Պատմել , նադլ էրդէր . — Էջ , եի-դ ,
սահիֆէ . — Բաւական , բեաֆի :

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձ-
րաձայն արտասանեցէ՛ք :

98. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Խօսիլ բային պէս խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը .

Յոգնիլ , խպնիլ , քրտնիլ , խոստովանիլ , հաւնիլ , դա-
ւանիլ , մօիլ , հալիլ , փայլիլ :

118. Վ Ա Ռ Ե Լ Ի Ք Ն Ե Բ

Ձմեռը շատ ցուրտ կ'ընէ։ Ամէն մարդ կրակ կը վառէ իր տանը մէջ։ Սենեակները երկու կերպով կը տաքնան, կամ վառարանով և կամ կրակարանով։ Վառարաններու մէջ փայտ կամ հանքածուխ կը վառեն, իսկ կրակարաններու մէջ փայտի ածուխ։ Փայտի ածուխը գիւղերու մէջ աժան, իսկ քաղաքներու մէջ սուղ է։ Վառարաններու մէջ վառուած փայտը անտառներէն կը կտրեն։ Հանքածուխը յառաջ կուգայ հողին խոր տեղուանքը գտնուող ծառերուն արմատներէն։ Հանքագործները կը հանեն զանիկա։ Հանքագործներուն կեանքը միշտ վտանգի մէջ է, ինչու որ հանքածուխներու մէջ տեսակ մը կազ կայ, որ ինքն իրեն կը բռնկի, ու այն ատեն հանքերը յանկարծ կը փլին ու գործաւորները տակը կը մնան։ Հանքածուխը սեւ ու փայլուն գոյն մը ունի և երկու տեսակ կ'ըլլայ, չվառուած և վառուած։ Վառուած տեսակը խորտուրորտ է։

ՐԱՌԵՐ. — Վառելիք, Էադըլաճագ լէյլէր. — Վառարան, զօդա. — Կրակարան, Տանկալ. — Խոր, Կէրիճ. — Հանքագործ, Տափէնճի. — Բռնկիլ, Բո-դո-լճագ. — Փիլլ, Էրդըլճագ. — Խորտուրորտ, Էյրէ պի-յրէ-:

ՀԱՐՏԱՐԱՆ. — Ձմեռը ի՞նչ կերպով կը տաքնենք մեր սենեակները։ Քանի՞ տեսակ ածուխ գիտէք։ Անոնք ի՞նչ բանէ յառաջ կուգան։ Վառելափայտը ո՞ւրիկէ կը գտնենք։ Հանքածուխը ո՞ւրիկէ կը հանեն։ Ասիկա հանող գործաւորները ի՞նչ տեսակ վտանգի ենթակայ են և ինչո՞ւ։

119. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՎԷՃԸ

Կովը, ձին ու շունը կը վիճաբանէին իրարու հետ թէ տանտէրը իրենցմէ ո՞րն աւելի կը սիրէ :

«Հարկաւ ինծի ամէնէդ աւելի կը սիրէ, ըսաւ ձին. ես անոր արօրը կը քաշեմ, անտառներէն անոր համար փայտ կը բերեմ, շատ անգամ վրաս կը հեծնէ քաղաք կ'երթայ : Առանց ինծի, բոլորովին կորսուած է ան, ասոր տարակոյս չկայ» :

— Ո՛չ, մեր տէրը զիս աւելի կը սիրէ, ըսաւ կովը, քու ըրածդ եզն ալ կրնայ ընել, իսկ ես անոր բոլոր ընտանիքը կաթով կը կերակրեմ :

Թե՛հ, ըսաւ շունը ծաղրելով, այդ ամէն ըսածնիդ ոչինչ է, ես եմ մեր տիրոջ հաւատարիմ կեն-

94. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերը իրենց բուն նշանակութեամբ գրուած են հոս. առակերտը պէտք է գործածէ գանձնի իրենց ընդարձակ իմաստով.

Գլուխ (մարդու)	Մարմին (մարդու)	Ոտք (մարդու)
Սիրտ »	Թեւ »	Տերեւ (ծառի)
Ճակատ »	Աչք »	Ճիւղ »
Բերան »	Ականջ »	Պտուղ »
Ակոսյ »	Կռնակ »	Մազիկ »

Օրօ՛նԱւ. — Գլուխ. — Լերան գլուխը. կամուրջին գլուխը. գործին գլուխը :

գանին, անոր տունը՝ տեղը, ոչխարներն ու արջառը, արտն ու կայր ես կը պահպանեմ գազաններէ :

Կենդանիներուն տէրը այս վէճը լսեց և ըսաւ .
« Ի զուր մի՛ վիճիք իրարու հետ, ամէնքդ ալ ինձի հարկաւոր էք և ձեզմէ ամէն մէկը լաւ է իր տեղը » :

ԲԱՌԵՐ. — Վէճ, միճապէ՛լէ . — Արօր, սափան . — Անտառ, օրճան . — Հեծնել, պինձէ՛ք . — Կորսուիլ, զայտ օլճագ (ճահլ օլճագ) . — Տարակոյս, շիպհէ . — Ջարդել, քօղրամագ . — Եզ, սըզըր . — Կերակրել, էկտէրձէ՛ք . — Մաղրել, զէֆլէնձէ՛ք . — Հաւատարիմ, սաբըգ . — Արջառ, սըզըր վէ ինէ՛ք . — Կալ, հարճան . — Ի զուր, պօլընս . — Հարկաւոր, լաղըճը :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչպէս կը վիճէին կենդանիները : Անոնք ի՞նչ կ'ըսէին : Իրաւունք ունէ՞ին : Տէրը ի՞նչպէս խօսեցաւ : Այս պատմութենէն ի՞նչ բան կրնաք հետեւցնել :

98. ՀՐԱ ՀԱՆԳ

Շեղագիւ բառերուն տեղ հակահիւսերը դնելով նախադասութիւններուն իմաստը երջել .

Անուշ լեզուն տուն կը շինէ : Բարի ծառը բարի պտուղ կը բերէ : Չմեռը օդը շատ ցուրտ կ'ընէ : Առաւօտուն արեգակը կը ծագի : Յիսուս արդարեւոր արհայտրիւն պիտի ղրկէ : Առափինի մարդիկ Աստուծոյ հանելի են : Երիտասարդութիւնը ցանկուզն է : Նեղ է այն ճանապարհը որ դէպ ի կեանք կը տանի : Ծոյլ աշակերտը դասերուն մէջ յոռի նիւր կ'ստանայ : Ծուռութիւնը աղիւսութեան կ'առաջնորդէ :

120. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Նէ՞րտէ իտինիզ. քեաղըտծընըն. օղլու սիզի պէք-
լէյօր իքի սաադ.տան պէրի : Տաղա կիթմիշ իտիմ.
չօպան գօյունլարը գըրվըյօր ըտը , պէնտէ սէյր էտի-
յօր ըտրմ : Չամաչըրճը կէօմլէքլէրիմիզի երգատը վէ
սէրտի : Նազլ իդ.տիյինիզ հիքեայէ պիզի օսանտըրտը :
Պու կիւն պօրճումուզու վէրէճէյիզ . սիզին տէ պօրճու-
նուզ վա՞ր մը : Պազը մէմլէքէգլէրտէ ադ ըլա հօլճու-
լուգ էտէրլէր : Վազդի իլէ եազը եազմագ իչիւն գազ
դիւլիւ դուլլանըրլար ըմըչ : Գուչլարըն դիւլիւ իլէ եա-
գագ տօլտուրուրլար : Գի՞մ տիր պաղըրան : Սէն պու-
րայա կէլսէ՞նէ : Իհդիյար պիր գատըն էգէյինի եըրդ-
մըչ : Տիյնէյինիզ , տըչարտա պիրիսի դիւրքիւ սէօյլէ-
յօր : Սիզ էօնտէն եիւրիւյինիզ , պիզ արգատան կէլէ-
ճէյիզ :

ՊԱՏՈՒԷՐ.— Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգ-
մանեցէ՛ք :

ՅԵ. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Կեսերուն սեղ մէյմէկ յարմար բայ դնել .

Վարժապետը . . . : Ուսանողը . . . : Աղքատը . . . : Բա-
հանան . . . : Կօչկակարը . . . : Վաճառականը . . . : Կահագոր-
ծը . . . : Կատուն . . . : Բժիշկը . . . : Սօխակը . . . : Շունը . . . :
Սարդը . . . : Գայլը . . . : Մեզուն . . . : Էշը . . . : Ժամացոյցը . . . :
Հովիւը . . . : Զին . . . : Օձը . . . : Հաւը . . . : Որսորդը . . . :
Հացավաճառը . . . : Դատաւորը . . . : Լուսինը . . . : Անձրեւը . . . :
Զիւնը . . . : Զուրը . . . : Կովը . . . : Ծովը . . . :

121. Շ Ո Ւ Ն Ը

Շունը հաւատարիմ կենդանի մըն է : Անիկա իր տիրոջ ամէն խօսքին և ակնարկին կը հնազանդի : Եթէ տէրը զայն ծեծելու ալ ըլլայ, ան դարձեալ հաւատարիմ կը մնայ, և անկէ չի զատուիր : Անիկա գիշեր ատեն տունը կը պահէ գողերէն : Շունը հովիւներուն և որսորդներուն ալ մեծ ծառայութիւն կ'ընէ : Անիկա՝ բլուրին վրայ կամ ձորին մէջ և կամ թուփերուն տակ ցրուած ոչխարները մէկտեղ կը հաւաքէ . չի թողուր որ անոնք մոյրին ու կորսուին : Անիկա կը վազէ ու հետուն ինկած որսը իր որսորդ տիրոջը կը բերէ : Կան շուներ որ իրենք ալ կրնան որսալ, ինչպէս բարակները, որ բարակ մարմին ունին և խիստ արագ վազելով կրնան որսալ նապաստակներ, ճագարներ :

Հաւատարիմ շունը միշտ արժանի է մեր սիրոյն ու խնամքին :

ԲԱՌԵՐ. — Հաւատարիմ, սոփոյճ. — Ակնարկ, կէօզ իւրերդի. — Ծեծել, փէօյճե+. — Զատուիլ, այրելմագ. — Գող, իբրբըլ. — Հովիւ, ջօպան. — Ծառայութիւն, իբղմէն. — Բլուր, Գիւլի-Գոսլ, դիփի. — Հաւաքել, իօփլամագ. — Մոլորիլ, էօլը լայրբագ. — Ճագար, սոփա իւզլանը :

97. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Իճն կը կոչուի :

Մաղիկներէ շինուած փունջ մը. ծաղկախտէ աւրուած դէմք մը. ծառերուն ծաղիկ բանալը. մարդ մը որ ծաղիկ կը ծախէ. եկեղեցական տօն մը որ Զատիէն ութ օր առաջ կը տօնուի. գեղեցիկ գրի տեսակ մը. դպրոցներու մէջ փոքր տղայոց սրահ մը. ծաղիկներու ամանը. ծաղիկ քաղողը. հասկ հաւաքողը :

ՕՐԻՆԱԿ. — Մաղիկներէ շինուած փունջ մը կը կոչուի ծաղկեփունջ :

122. Գ. ԼԵՈՐԴՈՒԹԻՒՆ. — (ԿԱՐԴԱԼ)

ՍԱՀՄԱՆՈՒԿԱՆ ԵՂԱՆՈՎ

Ներկայ

եզ.

Կը կարդամ

Կը կարդաս

Կը կարդայ

Յոմ.

Կը կարդանք

Կը կարդաք

Կը կարդան

Անցեալ անկասար

Կը կարդայի

Կը կարդայիր

Կը կարդար

Կը կարդայինք

Կարդայիք

Կը կարդային

Անցեալ կասարեալ

Կարդացի

Կը կարդացիր

Կարդաց

Կարդացինք

Կարդացիք

Կարդացին

Բացարձակ ապառնի

Պիտի կարդամ

Պիտի կարդաս

Պիտի կարդայ

Պիտի կարդանք

Պիտի կարդաք

Պիտի կարդան

Անկասար ապառնի

Պիտի կարդայի

Պիտի կարդայիր

Պիտի կարդար

Պիտի կարդայինք

Պիտի կարդայիք

Պիտի կարդային

ՀՐԱՄՈՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.

Յոճ.

—

Կարդա՛

Կարդա՛նք

Կարդացե՛ք

ՕՏՈՐԱԴԱՍՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Կարդամ

Կարդանք

Կարդաս

Կարդաք

Կարդայ

Կարդանք

Անկասար

Կարդայի

Կարդայինք

Կարդայիր

Կարդայիք

Կարդար

Կարդայինք

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Աներեւոյթ

Կարդալ

Ներկայ ընդունելութիւն

Կարդացող

Անցեալ ընդունելութիւն

Կարդացած, կարդացեր

Ապառնի ընդունելութիւն

Կարդալու, կարդալիք

ՎԱՐԺ. — Կարդալ բային պէս խոնարհեցէ՛ք խնդալ, պոռալ, հազալ, շոգալ, շուալ, մսմտալ, քհրալ, ցնծալ:

123. Շ Ա Ք Ա Ր Ը

Մեզի անծանօթ բոյս մը չէ ճակնդեղը։ Անիկա անի կարճ ցօղուն մը և հակլթած և տերեւներ, որոնք երկայն կոթեր ունին։ Բայց այս բոյսին ամենակարեւոր մասը անոր արմատն է, կլոր, մուռտ և դեղնագոյն։ Այս արմատէն է որ կը հանեն շաքարը։

Երբ ճակնդեղները հասնին, զանոնք հողին տակէն կը հանեն և անոնց ցօղուններն ու տերեւները կտրելով՝ կրկին հողին մէջ կը թաղեն։ Չմրան մէջ անոնք հողին տակէն հանուելով կը տարուին մասնաւոր գործարաններու մէջ, ուր բազմաթիւ գործաւորներ կը լուան զանոնք և ճզմելով՝ մեծ ամաններու մէջ խիւսի կը վերածեն։ Այս խիւսը (չափա) իր մէջ կը պարունակէ քաղցր հոյզ մը, զոր քամելով՝ մեծ կաթասներու մէջ կ'եփեն մինչև որ շաքարի փոխուի։

98. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն ծայրը, բառ յարմարութեան, բար, պէս, օրէն մասնիկները աւելցնելով անականներ շինեցե՛ք եւ տուե՛ք անոնց նշանակութիւնը։

Հայր, անկեղծ, ճշմարիտ, մայր, առատ, լուրջ, թեթեւ, վայելուչ, անգութ, քոյր, լայն, եղբայր, ընտանի, գաղտնի, աղնիւ, իմաստուն, աղքատ։

ԾԱՆՕԹ.— Ուսուցիչը քերականական բառերու նշանակութիւնը և սահմանը հետզհետէ պէտք է տայ աշակերտներուն։ Աւ այս Տօնէլեան Բերականութեան Ա. մասը ի ձեռին ունենալ կը յանձնարարենք ուսուցիչներուն։

Տաք երկիրներու մէջ տեսակ մը եղէգ ալ կայ որ չորս-հինգ կանգուն բարձրութիւն կ'ունենայ : Անոր ցօղունը հիւթալից ծուծով մը լեցուն է : Այս ծուծէն ալ շաքար կը հանեն, և ասոր համար այս տունկը շաքարեղէգ կը կոչուի :

ԲԱՌԵՐ. — Անծանօթ, պէլլէսիզ, իսանըմանըլ. — Ճակնդեղ, փանճար. — Հակթաձեւ, Էոմոսթիս պիլիփ. — Ամենակարեւոր, էն Էհէմիլիդի. — Դեզնագոյն, սարը բէնիլի. — Թաղել, կէօմէտ. — Հանուիլ, չրֆարըմաֆ. — Տարուիլ, կէօդի-բիլէտ. — Մասնաւոր, իոսոսի. — Դործարան, ֆապրիֆա. — Բազմաթիւ, ջֆ. — Ճղմել, էդմէտ. — Պարունակել, հովի օլմաֆ. — Հոյղ, էօղ. — Քամել, սրֆմաֆ. — Եղէգ, գամըլ. — Բարձրութիւն, էի-տէտիլի. — Հիւթալից, էօլլի. — Ծուծ, էլի. — Շաքարեղէգ, լիէր գամըլ :

ՀԱՐՑԱԲԱՆ. — Ի՞նչ տեսակ բան է շաքարը : Անիկա ի՞նչ համ ունի, ի՞նչ բանէ կը հանեն : Ի՞նչ է ճակնդեղը : Անոր ո՞ր մասէն կը հանեն շաքարը և ի՞նչպէս : Ի՞նչ է շաքարեղէգը և ինչո՞ւ համար այդպէս կը կոչուի : Շաքարը ի՞նչ բաներու կը գործածեն :

99. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հեռեւեալ խօսքերը յոճնակի ըրե՛ք .

Թոչունը կը թռչի : Գիւղացին գիւղ վերադարձաւ : Քահանան մեռելը թաղեց : Ճարտարապետը գեղեցիկ տուն մը շինեց : Պատուհանը բաց էր : Յանցաւորը կը պատժուի : Մըջիւնը հատիկ կը կրէ : Ծառը ծաղկիցաւ, պտուղ տուաւ : Արջը պտուղ կ'ուտէ : Աշակերտը նոր քերականութիւն գնեց : Արդարն երկիրը պիտի մառանգէ :

ՕՐԻՆԱԿ. — Թոչունները կը թռչին :

124. ՊԶՏԻԿ ԳՈՐԾԱԽՈՐԻՆ ԵՐԳԸ

Քամին սաստիկ կը փրչէ,
Բայց այդ տըղուն հողը չէ .
Միշտ աշխատիլ դու կրնաս,
Զիւն և քամի ի՞նչ վրնաս :
Գործ ցուցընեն ինծի թող,
Ես աշխատանք չեմ ատող .
Աշխատութիւնս է օրհնած՝
Երբ շահիմ մօրս օրուան հաց :
Ո՛չ, ես մայրիկս չեմ թողուր
Ո՛չ անօթի, ոչ տըխուր .
Զանք և քրտինք անհամար
Պիտի թափեմ մօրս համար :
Մայր, արեւուդ ես ղուրբան,
Քեզ կը զոհեմ ամէն բան .
Երջանկացի՛ր, մայրի՛կ դուն,
Դրախտի փոխեմ ես մեր տուն :

ԲԱՆՈՒՄԸ. — Քամի, ելլ, ընդլիւար. — Վնաս, զարար. — Ատող, սէվջէյէն. — Օրհնած, ճոգարարէս. — Շահիլ, գազան-ճագ. — Տխուր, փեպէրլի. — Անհամար, սայրաչգ. — Զոհել, ֆէրաս էդմէ. — Երջանկանալ, ճոգլու օլմագ. — Դրախտ, ֆէնէդ :

ՊԵՏՈՒԷՐ. — Գոց սորվեցէ՛ք վերի ոտանաւորը և բարձ-
րաձայն արտասանեցէ՛ք :

125. ԱՅԳԻ, ԽԱՂՈՂ, ԳԻՆԻ, ՔԱՅԱԽ

Խաղողը որթին պտուղն է: Սա ամենէն համեղ և յարգի պտուղներէն մէկն է: Խաղողին որթերը կը տնկեն այգիին մէջ: Այգիին մէջ շատ տեսակ աշխատութիւններ կան: Այգեպանը կ'աշխատի հոն, կը խնամէ որթերը, կը քաղէ խաղողները և կը վաճառէ:

Խաղողէն կը պատրաստեն գինին: Հնձանի մէջ կը լեցնեն խաղողները և կը ճմլեն, որպէս զի ջուրերը քամուին. յետոյ կը թողուն օդին գիմացը, որպէս զի խմորում ըլլայ: Խաղողին անուշ հիւթը քաղուց կ'ըսուի: Քաղցուն քանի մը օր օդին գիմաց մնալով պէտքով համ կ'առնէ, գինիի կը փոխուի:

Գինին յարգի ըմպելիք մըն է: Երբ գինին ալ օդին գիմացը թողունք մէկ քանի օր, կ'ըլլայ քացախ:

ԲԱՌԵՐ. — Այգի, պաղ. — Որթ, ասա. — Յարգի, գըյ-մէրլէ. — Այգեպան, պաղճը. — Խնամել, մոգայելը օլմագ. — Վաճառել, սարմագ. — Պատրաստել, հաղըրլամագ. — Հնձան, էղէճէթ մաթինա. — Ճմլել, էղմէթ. — Խմորում, խամոս օլմագ. — Հիւթ, էօլ. — Քաղցուն, չիրա. — Ալքօլ, էփիլրօ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ըսէ՞ք թէ ինչ տեսակ տունկ է որթը: Ինչ է այգին: Ինչե՞ր կը շինուին խաղողէն և ինչպէս:

100. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ամբողջ խօսքերով հետեւեալ հարցումներուն պատասխանեցե՛ք.

Նաւապետը ինչ կ'ընէ: Դատաւորը: Սեղանաւորը: Բրձարը: Ժամագործը: Այգեգործը: Պարտիզպանը: Ճգնաւորը: Վաճառականը: Մշակը: Ճամբորդը: Տպագրիչը: Մաքսաւորը: Խաղախորդը: Ատաղձագործը: Գիշերապահը:

126. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՆՄԱՆԱԶԱՅՆ ԲԱՌԵՐՈՒ

ՍԵՐ և ՍԷՐ. — Սերը կը պատրաստեն կաթով և կ'ուտուի:

Մայր մը իր զաւակներուն վրայ մեծ սէր ունի:

ԴԻԱԿ և ԹԻԱԿ. — Երբ մարդ մեռնի, մարմինը այլեւս
դիակ մը կ'ըլլայ:

Նաւակները ծովուն վրայ թիակով կը քալեն:

ԲՈՒՌ և ՓՈՒՌ. — Պատերը կը ծեփեն բուռով:

Հացագործը հացը փուռին մէջ կ'եփէ:

ԹԵՒ և ԴԵՒ. — Մարդս երկու թեւ ունի:

Դեւը օձի կերպարանք առնելով խարեց
Ադամը և Եւան:

ԴԱՆԱԿ և ԹԱՆԱԿ. — Դանակ և պատառաքաղ հարկաւոր
են ճաշելու համար:

Գիր գրելու համար պէտք է թուղթ, գրիչ,
թանաք:

ՀՈՅԼ և ՅՈՅԼ. — Աստուած ցանեց երկինքին վրայ լուսաւորներու հոյլ:

Այն աշակերտը որ չաշխատիր, իրաւամբ
կը կոչուի յոյլ:

ԾԱՆՕԹ. — Դասատուն ուրիշ նմանաձայն բառեր գտնելով՝
անոնց նշանակութիւնը կը բացատրէ աշակերտներուն՝
օրինակներով:

101. Հ Բ Ա Հ Յ Ն Գ

Գիծերուն տեղ յարմար կենդանիներու անուաներ դրէ՛ք.

— կը վրնջէ: — կը զռայ: — կը պոռոչէ: — կը բաւաչէ:
— կը մայէ: — կը հաջէ: — կը մլաւէ: — կը կոկըռայ:
— կը ճլուրլայ: — կ'ոռնայ: — կը մռնչէ: — կը սուչէ:
— կը բզզայ: — կը ճոճայ:

127. Ա Ի Ս Ո Ւ Ի Յ Ա

Շէյլէր վար քի օգգա ըլա սադըմազ , դանէ , ար-
չըն , էօլչէք վէ քիլէ իլէ սադըրը : Չարըլարտա էդի ,
փէյնիրի , իւզիւմի օգգայըլա սադըրլար . Ֆազաթ եու-
մուրթայը , ճէվիզի , փաթլիճանը վէ խըյարը դանէ իլէ
վէրիրլէր : Չուխայը , խասայը , պասմայը , աստարը ,
չէրիտի էօլչմէք իչիւն մէթրօ վէ էնտազէ գուլլանըր-
լար : Կազ եաղընը , շարապը , սիւտիւ վէ պաչգա
մասի շէյլէրի էօլչէք իլէ վէրիրլէր : Պիր օգգա տէօրթ
եիւզ տիրհէմ տիր : Պիր էնտազէ սէքիզ բուպ տըր : Պիր
զրուչ գըրգ փարա տըր : Արփայը վէ պուղտայը քիլէ
իլէ էօլչէրլէր : Պիր տիւքեաճընտան ախս ու իթա էտէնէ
միւչդէրի տէրլէր :

ԾԱՆՅԹ. — Իասատուն կրնայ աւելի ընդլայնել այս դա-
սը և աշակերտներու բացատրել գործածական կշիռներու , չա-
փերու և դրամներու միութիւնն և անոնց մասունքը :

108. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետեռուն տեղ յարմար բառեր դրե՛մ .

Ձին ... կ'ուտէ : Շունը ... կը պահպանէ : Հովիւը ...
կ'արածէ : Օրէնքը ... կը պատժէ : Մայրը ... կը խնամէ : Կա-
տուն ... կը բռնէ : Քոյրս ... կը հիւտէ : Աստուած ... կը
սիրէ : Ազուէսը ... կը խեղդէ : Քարակոփը ... կը տաչէ :
Սուրհանդակը ... կը տանի : Քահանան ... կը մկրտէ : Պայտարը
... կը պայտէ : Լուսարարը ... կը վառէ : Երկաթագործը
... կը ծեծէ : Աշակերտը ... կը կարգայ : Բժիշկը ... կը գրէ :

128. Դ. ԼՇՈՐԴՈՒԹԻՒՆ. — (ԹՈՂՈՒԼ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզ.	Յոմ.
Կը թողում	Կը թողունք
Կը թողուս	Կը թողուք
Կը թողու	Կը թողուն

Անցեալ անկասար

Կը թողուի	Կը թողուինք
Կը թողուիր	Կը թողուիք
Կը թողուր	Կը թողուին

Անցեալ կասարեալ

Թողուցի	Թողուցինք
Թողուցիր	Թողուցիք
Թողուց	Թողուցին

Բացարձակ ապառնի

Պիտի թողում	Պիտի թողունք
Պիտի թողուս	Պիտի թողուք
Պիտի թողու	Պիտի թողուն

Անկասար ապառնի

Պիտի թողուի	Պիտի թողուինք
Պիտի թողուիր	Պիտի թողուիք
Պիտի թողուր	Պիտի թողուին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

եզ.	Յոմ.
— — —	Թողո՛ւնք
Թո՛ղ	Թողուցէ՛ք

ՍՏՈՐԱԿԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Թողում	Թողունք
Թողուս	Թողուք
Թողու	Թողուն

Անկասար

Թողուի	Թողուինք
Թողուիր	Թողուիք
Թողուր	Թողուին

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Անբեւոյթ

Թողուլ

Ներկայ ընդունելութիւն

Թողող

Անցեայ ընդունելութիւն

Թողած, Թողեր

Ապառնի ընդունելութիւն

Թողու, Թողելիք

ԾԱՆՅՈՒԹ. — Ուշ վերջաւորող բայերէն միայն բոլորչ
և զբոսնուչ բայերը ամբողջութեամբ կը խոնարհուին աշ-
խարհաբարի մէջ:

ՊԱՅՈՒՒՄ. — Զբոսնուչ բայն ալ խոնարհեցէ՛ք:

129. Թ ՈՒ Ղ Թ Ը

Նրբ մենք գրել, գծագրել կամ կարգալ ուղենք՝
Թերթ, տետր և գիրք կը գործածենք, որոնք բոլոր
Թուղթէ շինուած են: Հին ատենները մարդիկ քարի,
փայտի, կենդանիի մորթի և ծառի տերեւներու վրայ
կը գրէին: Ամէն գոյնէ Թուղթ կրնայ գտնուիլ,
ինչպէս. ճերմակ, սեւ, կարմիր, կանանչ, դեղին, կա-
պոյտ, ոսկեգոյն, արծաթագոյն և այլն:

Թուղթը յարգէ, փայտի սղոցութէ և քուրջերէ կը
շինուի: Այն մարդը որ տունէ տուն պտտելով քուր-
ջեր կը հաւաքէ, քրջահաւաք կը կոչուի: Ան իր ժողոված
